



2147.920 1048
17.61 Dugout 15th
14th - 12th century.
Lith.

26-16	29.IV	115.
28.I	22.V	186
	18.IX	184
	7	187
		74
		55

ՂԵՒՈՆԴԵԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ
Վ

Հայոց պատմութեան մասին գույքը գրելու հրամա.

9(47.925)

Հ - 61

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԽՍՀՄ ԳԱՅԱԿԱՆ Հ 1861 թ.

ՀԵԻՌՆԴԵԱՅ ՄԵԾԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՀԱՅՈՑ

հ. թ.

1048

A 33X08

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱԿՐԱՅԻ ՎԵՎՎՈՅ ԿԱՊԱՐԱՅՈՒ-
ԹՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ:

—♦—♦—♦—♦—♦—

Ա. ՊԵՏԵՐԲՈՅՄԻ
Ի Տպարան Տ. Ն. ՍԿՈՐՈԽՈՎՈՎԻ:
1887.



Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

Ի ՅԱԻԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱԶԳԱՍԻՐԻ ԱՌՆՆ

ՅՈՎՍԵՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՑ


ՊԳԼԱՐԵՑԻՈՅ:

Սնբառէր վարույթ անմահ յէլսուրտի

Դաս խօսն է, որ եր կեանիքը նըղուարտի, —

«Աս գոյ, ո՞ւ եղիսն, ուոյ կանճեպանան,

«Ո՞վոյ բարձ գոյցիւ յաս-երեսն իընան:



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Պատմագիրքն ։ Այսոց ի մեծի պատուի են յաչս զիառնոցն Եւրոպիոյ, զի ոչ միայն աւանդեն զպատմութիւն հայրենի աշխարհին իւրեանց, այլ և բազմազիմի տեղեկութեամբք զքաղաքական գործոց սահմանակից աշխարհացն, ընձեռն նիւթու ոչ սակաւս ի լրութիւն պատմութեանն նոցա անդստին ի ՚Վ զարէն մինչեւ ցժամանակս յետին: Ամին իրի պատուականք են առ բանասէրս պատմագիրքն մեր, որք ճառեն զծագմանէ իշխանութեանն Երարացւոց և զնախկին աշխարհակալութեանց նոցա, որպէս ՚Վ եռնդ, զորոյ զպատմութեան զիրս ընծայեմք զարդիս ի լոյս նորոգ տպազգութեամբ, Աերէոս, Յովհաննէս կաթողիկոս, Սաողիկ, Թովվմայ Երծրունի և այլք:

Եյլ որպէս զի բարեոք ես ի միտ առցեն վերծանողքն մեր զՊատմութիւնն ՚Վ եռնդի համակ և զայլոց պատմազրաց մերոց, որք զԵրարացւոց ճառեն՝ օգտակար վարկանիմք կարդել աստ կարձառօտիւ զպատմութիւնն ծագման իշխանութեանն Երարացւոց, զպատմառս աճման նորս և զսնկման, հանդերձ տեղեկութեամբք զներքին վարչութենէ, զհարկաց և զբամոց, զզնուորական կարգէ և զգպրութեացն Երարացւոց, այլ և զպատմութիւնն աշխարհածաւալ պետութեան ամիրապետացն և զվիճակնութեամբ նուածեալ ազգաց և մանաւանդ ։ Այսոց ընդ իշխանութեամբ նոցա ի զարս զարս:

Ե.

Ի ժամանակին յորում վեհապետք երկուց ազգաց հղօրաց, որոց ընդ իշխանութեամբ էր աշխարհն այս- ասան, Ներակլ կայսր Յունաց և Խոսրով Փարվեդ արքայից արքայն աշեղ պատերազմք ի վեզ զային ընդ իրեարս յաղագս տիրապետութեան աշխարհաց՝ ի խո- րոց անապատացն Արարից յառնէր յայնժամ այր ոմն քարոզ նորոյ վարդապետութեան, որում վիճակիալ էր մասն կարեռը ունել ի պատմութեան ազգաց և հիմն ի վեր տապալել զպետութիւնն երկուին հզօրու:

Եր Մահմէտ ի հիմն և յաղնուական տոհմէ Արարա- ցւոց ի Խորեյշեանց, որոց արարեալ էր յանձն պահպա- նութիւն նուլիրական տեղւոյն Արարացւոց, Կարայ մե- հենին ի Մեկիէ, ի մի յորմոց որոյ արտաքուստ չեղիւսեալ էր վեմ մի սեաւ քառակոյս, զոր ասէն աւանգութեամբ տուեալ Կարրիէլի Հրեշտակապետին ցԽմայէլ նահապետ Արարացւոց: Միջգեռ ի պատանի ախս էր Մահմէտ՝ բազում անգամ շրջէր կարաւաննօք զործով վաճառակա- նութեան ընդ աշխարհս օտարս, ուրանօր գէտ լինէր նմա ի վերայ հասանել ճշմարտութեան հաւատոցն ի մի Աստուած ըստ գաւանութեան քրիստոնէից և Նրէից և ստութեան բազմաստուած կռապաշտութեան ազգին իւրոյ այլ և բազում ինչ վասն քաղաքական կարգաց և հանգամանաց և զօրինացն Նրէից և քրիստոնէից լուէր նա յարանցն՝ որը ամի գային բազմութեամբ ի Մեկ- իէ, էր որ ի պէտս տուրեալից և էր որ յիրկրագու- թիւն սուրբ տեղեացն:

Իրբե եհաս Մահմէտ յարբունս հասակի՝ կին արար իւր զաջիջայ այրի ընըեղ, և ապա յայնմշետէ զերծեալ

ի հոդոց օրբատօրեայ պարենին՝ խորամուխ եղեւ ի խոկ-
մունս և յորոճումն մասց:

Եւ զի ակն ունեին Նքեսայք գալստեան Մեսիային,
իսկ Կրիստոս խոստացաւ, թէ առաքելոց է Նայր զմիսի-
թարին, որ ուսուացէ զամենայն և յիշեցուացէ զամե-
նայն զբանս նորա՝¹⁾ Հարսն յայսոսիկ միաք . և ուշ
Մահմետի, և յղացաւ խորհուրդ ի միաս նորա, թէ ինքն
իսկ իցէ այրն, որում կայ մնայ աշխարհ՝ ուսանել ի նր-
մանէ: Վասն ուշաթափութեանցն, զորս ախտացեալ էր
նա՝ զիւրագոյն ևս էր նմա համոզիկը լինել առ մարզիկ,
թէ հազորդութիւնս ունիցի ինքն ընդ հրեշտակու, յո-
րոց և պատգամն ընդունիցի: Եյլ 40-ից ամաց էր
Մահմետ, յորժամքարոզել սկսաւ զվարդապետութիւնն
իւր, թէ Մի է Վասուած, և Մահմետ է մարզարէ նո-
րա: Իսյց քարոզութեան նորա հաւատացին միայն կին
նորա և ազգականքն (Երու-Իերը և Ելի), այլ և բարե-
կամք նորա յոյժ սակաւաւորք: Իսկ ժողովուրդն առհա-
սարակ այնպէս սրտմուցաւ՝ զի հարկ եղեւ նմա ի փա-
խուսատ անկանել ի Մեզին: Եյս փախուսատ նորա ի
Մեկկեայ ի Մեզին քաղաք զիսկեցաւ ի 16-րդի աւուր
յուլիսի 622 ամին, և յայսմ օրէ հաշուեն Մահմետա-
կանք զթուականութիւնն իւրեանց, որ կոչեցաւ Նէջիր,
այսինքն է փախուսատ:

Ի Մեզին քաղաքի եղիս Մահմետ իւր համախոհա,
որոց նվաճանութեամբ հմուտ անդրէն ի Մեկկէ և տի-
րեաց նմա, և ձեռն էարկ ի կուռս մեհենին: Եւ թէպէա
խեթայր ժողովուրդն և թախծէր ընդ ահսիլ այսպանու-
թեանցն և խորտակման աստուածոցն իւրեանց՝ այլ զաշի

Հարիալ յահեղ զօրութենէ յաղթողին, որոյ սուր ի ձեռին կալիալ և զպատգամն օրինաց իւրոց պահանջէր շնազանդել նմա՝ յանձն առին ամենեքիան և ծանեան զնա առաքեալ Աստուծոյ: Բնդ հուսպ և բովանդակ Երարիա հաւատաց ի մի Աստուած յԱլլահն և յառաքեալն նորա ի Մահմետ¹⁾:

Օ, Մովսէս և զՅիսուս ի մարզարէս ունի Մահմետ, և համարի զինքն կոչեցիալ ի լրումն օրինաց նոցա Պատգամքն նորա, զորս ասէր ընդունել ի Գարբիել Հրիշտակապետէն²⁾ բանք են յօդուածցը հողեշունչը զդիպաց և զգործոց սյնր ժամանակի: Առքա ամենեքին

1) Համօրէն տեղեկութիւնք յաղագս երեմանն Մահմետի և սկզբան աշխարհակալութեանց նոցա՝ յամենայն մատենագրաց մերոց քաղեալ կարգեալ է ի միասին Ճ. Պատեկանեանց ի Յաւելուածի հրատարակութեանն իւրոյ Պատմութեան Վերէսոի (յէջս 53—70), և Ա. Կմին զթարդմանութիւն նոցին ի ուսու լեզու յառաջին Յաւելուածի թարդմանութեանն իւրոյ Պատմութեան Ա արդանայ Շարձրբերդցոյ (յէջս 193—201): Ա ան որոյ աւելորդ գատեցաւ մեզ կարգել զայնասիկ վերստին ի մատենի աստ:

2) Մովսէս կազանկայտուացի (էջ 5), Կիրակոս Պահածակեցի (էջ 32), Խովմայ Արծրունի (էջ 99), Ասմուել Ենեցի և այլ պատմագիրք մեր վկայեն, թէ Մահմետի դիպեալ իցէ յուղերորութիւնս իւր արեգայի ումեմն արիանոս աղանդով, որում անուն էր Աարգիս Շնիրայ կամ Շնիրայ, և ի ձեռն նորա տեղեկացեալ քրիստոնէական հաւատոց ըստ աղանդոյն արիանոսաց, այլ և օրինացն Արէից, յորոց ազա բազում ինչ եմոյծ Մահմետ ի կուրանս, յերիւրելով ըստ քմաց իւրոց: Խոկ զկուրանն գրեցին Աաղման պարսիկ և Արութուռաբ խմայելացի, ըստ վկայութեան թղթոյն Լեռնի առ Օմար (տես ի մատենիս էջ 58) և նորին ճովմայի Արծրունոց (յէջս 102—103):

յետ մահուան նորա ժողովեցան ի մի, որ եղեւ սուրբ զիլքն մահմետականաց Առւրան կոչեցեալ, որ է բովանդակութիւն համօրէն օրինաց նոցա, միւս կրօնից համակ և յաշխարհայինս¹⁾: Աւսուցանէ Առւրանն հաւատալ ի մի ։ Սատուած յաւիտենական, յարարին և նախախնամող տիեզերաց, ի յարութիւն մեռելոց և ի կեանս յաւիտենականս: Պատուիրէ երթալ յերկրպագութիւն ի Մեկկէ ըստ նախնութիւնն, թլիատել զարուս ի ծնանելն, ըստ այնմ որպէս առ Ռքահամու հաստատեցաւ, զլուացութն յաճախակի ըստ սովորութեան արեւելսայց, ազօթել հընդգիցս յաւուր, երեսս ընդ Մեկկէ կոյս ունելով, պատուիրէ զպահս և զողորմութիւնն, տայ իրաւունս բազմակինութեան, արգելու զգուշանալ ի զինւոյ և ի խողենւոյ, որ անսուրբն համօրեալ էր: Դնէ և այս օրէնս կարեոր, զի հաւատացեալքն գուն գործեսցնն ծաւալել զսուրբ հաւատս (զԻսլամ) ընդ ազգս օտարաւ: Ուրք անկանիցինն ի պատերազմի՝ ժառանգելոց են զարքայութիւնն, յորում մնայցինն նոցա ամենազան վայելսութիւնք, ուր և յաւերժահարսունք գեղանիք թիսակունք ծառայեսցնն նոցա: Անգը մարդոյ կախեալ կան զնախասահմանութենէ ։ Սատուծյ, որ յառաջազդոյն անօրինէ իրաքանչիւրում, և ըստ այս սահման, որ բազդ կոչի կամ

1) Կոյ թարգմանութիւն Առւրանին ի հայ լեզու, չեւ ևս տպագրեալ: Ի մատենագրաբանս Առայր Շմառոյ Ա. Եշմաձնի տեսեսալ է մեր օրինակ մի ձեռագիր թարգմանութեան նորա, և զայլ ևս օրինակ ի կայսերական մատենագրաբանին Շերլին քաղաքի: Առէ քանզի չունիմք զարդիս ի ձեռին զօրինակն՝ ոչ կարեմք ասել հաւատեաւ, թէ մի՛ իցէ արգեօք թարգմանութիւն երկոցունցն և մի՛ ժամանակի գրութիւնն, թէ որիշ որիշ ի միմեանց:

Ճակատագիր՝ չիք հետո ելանել։ Արգելու Առւրանն ի կիրառութիւն զամենայն պատկեր, որ նմանութիւն ինչ բերիցէ մարդոյ, զի մի այսու հաւատացեալքն զեղծանիցին և գարձցին անզրէն ի պաշտօն կռոց։

Ի կրօնս մահմատականաց մուծաւ բազում ինչ ի հաւատալիաց Նըրէից և քրիստոնէից, ի գենէն մազգեզան Օքագաշտի, թիրես և յաղանդոյ իսկ անտի Մանիքեցւոց։ Երիտ յեղանակաւ մուծան ի մահմատականութիւն հաւատալիք ինչ գենին մազգեզան, կամ անընդմիջապէս ի զրագեշտական մատենից, կամ միջնորդութեամբ զրոցն Նըրէից և մանաւանդ Թալբուզին։ Ի վերջնոյ ասաի են վարդապետութիւնն զյարութենէ մեռելոց, աւանդութիւնք յաղագս երկնից և զժոխոց, բովանդակ վարդապետութիւնն զդիւաց (զիւարանութիւն), նկարագիր աշեղ գտատաստանին վերջնոյ և ատանջանացն յետ մահու. պատմութիւնն յաղագս կամրջին Արբաթ (Sirât)¹⁾ կոչեցելոյ, հերոյ միոյ նրբութեամբ, որ ձգեալ իցէ ընդ արքայութիւն և ընդ զժոխս՝ անշուշտ մուծեալ է ի Առւրանն ի Միգրաշայ զրոցն Նըրէից։ Իսկ անընդմիջական մուծմունք ի մատենիցն Օքագաշտաց, թող զայլն ամենայն՝ և յայս ինչ երեխ, զի բազում ուրեք ի Առւրանին առնի ի կիր զանգիկ բառս մը (ճառ, զեն): ՕՏէսք մահմատական կրօնից մեծաւ մատամբն առեալ են ի նախկին ծխախց Արաբացւոց, մինչ կռապաշտքն էին նոքա, զըր օրինակ երթալն յերկրոպազութիւն և ազօթելն ի մզկթին Մեկկեի։ Եւ յետ մահուանն իսկ Մահմատի ընդունի Առւրանն ազգեցութիւնս յօտար գաւանութեանց. ազանդք ի կրօնս մահմատականաց ե-

1) Ա. Յ. բառ արաբական ի գեպ ելանէ պահլաւիկ բառին Tschinvât.

բևեցան յիս մտանելոյ Արաբացւոյ ի հաղորդութիւնս
ընդ քրիստոնեայ ժողովուրդս Ասորւց:

Յամի Տեառն 632-րդի յամսեանն յունիսի, որ օր 8
Էր ամսոյն, յերկուշաբաթւոջ, մինչ ի մուտս արեգակն
խոնարհէր՝ ի Մեղին քաղաքի ի հրապարակի անդ ա-
ռաջի մզկթին էր ահսանել շարժումն ինչ և շշուկ և
յուզումն. թուէր իմն, թէ կային մնային ժողովուրդն
ամենայն համբաւու իրկիք լսելոյ, համբաւու մեծի, այլ
ոչ բերկրութեան. զի գէմք ժողովրդեանն թափանալք է-
ին առհասարակ: Ահա կարգաց քարոզն զժամ ազօթիցն
զինի ճաշտւ, և յոան կացին ամենեքեան: Ելանէր յայն-
ժամ ի տանէն, որ առ երի մզկթին կայր՝ այր ոմն ամաց
իրբե վաթսնից, որոյ գոյնք երեսաց իւրոց սպիտակ, և
գէմք նիհար, հերկ մօրուաց նորա ներկեալ ի շառագցն,
ճակատք լայն ի ներկոյ ապարոշից: Թւուէր իմն առհա-
սարակ այրն ծերացեալ և ճնկեալ անզք քան զչափ ա-
մաց հասակին իւրոյ: Սա էր անհեր Մահմեափ, որում
անուն էր Կրու-Ռէքը. ելանէր նա հանդարտ զնացիւք
յաւագ զրունս մզկթին, զի զաղօթսն պաշտեսցէ ընդ
Մահմեափ: Սարտեան ամենեքեան ընդ այս, քանզի ծա-
նեան իսկոյն, թէ ոչ ևս ունի զօրութիւն յանձին Մահ-
մեա առ ի գալ ի պաշտօն Կատուծոյ, որոյ ոչ երրէք, և
ոչ առ հիւանդութեան՝ լքեալ էր զաղօթս հասարակաց,
և գեռ ևս ի նմին աւուր յառաւօտեան պահու տեսեալ
էր զնա ժողովրդեանն: Իսկ Մահմեա ի տան իւրում
անկեալ զնէր ասպացեալ ի մահման, հանգուցեալ զզը-
լուխ իւր ի մէջ բազկաց կնոջ իւրոյ սիրելոյ զստեր
Կրու-Ռէքը բրայ, Կյիշոյի, որ էր կին զեղեցիկ ութե-
տասն ամաց. թափէր յամախակի յուշոյ և ի ցնորս ան-
կանէր. շունչ նորա գամ քան զդամ արգելոյր ի կոկորդի

իւրում և ծանրանայր և ընդհատելու Արինչդեռ մրժնջեր
Վյիշայ զազօթս՝ ետես, և աշա մեռեալ էր Արհմէտ:

Ելլչք գործ զրչե՛ ի վեր հանել զշափ և զսահման
յուղմանցն և շշնչոց, որք յարեան ասաի անտի յորժամ
լու եղե ամենեցուն, եթէ վախճանեցաւ Արհմէտ, զի
փոքր մի ևս՝ և տապահելու գործն զրդ գործեաց Արհմէտ.
քանզի յուսացաւ անդէն բազմութիւնն չե ևս պնդեալ ի
նոր հաւատու, թէ աշա գարձուացուք մեզ անդրէն զազա-
տութիւնն մեր և զիրօնս նախնեաց, և զի յարեան երկպա-
սակութիւնք յազգականս և ի մերձաւորս Արհմէտի յա-
զագս յաջորդութեան նորա, զի չեր ցուցեալ մարդարէնն
զաք իւր յաջորդ: Ելլ բազմութիւն ժողովրդեանն ըն-
տրեաց զԵրու-Բէքը, զի նմա յանձն արարեալ էր Արհ-
մէտի պաշտել զազօթս փոխանակ իւր. նմա երդուաւ
և Օմար, ընկեր մահրիմ և գործակից Արհմէտի, և խոս-
տացաւ լինել նմա հաւատարիմ և հնազանդ. և ըստ օ-
րինակի Օմարաց արարին ամենեքեան:

Երբե երդուան ամենեքեան Երու-Բէքը՝ յոտն ե-
կաց Երու-Բէքը և ասէ ցայնոսիկ, որ շուրջն կային՝
զբանս զայս. Աշա ընտրեցէք գուրք զիս, զի հովուեցից
զձեղ և խնամեցից: Եթէ բարի ինչ արարից՝ օգնական
լիրուք ինձ. Եթէ չար ինչ գործեցից՝ նախատեցէք զիս.
քանզի ասել զջմարտութիւնն ակն յանդիման արանց
իշխանաւորաց՝ նշանակ է հաւատապմութեան և սիրոյ.
իսկ ծածկելն՝ նշան գաւաճանութեան: Ամենեքին դուք
հաւասարք լիջեք առաջի աշաց իմոց, հզօրն և տկարն.
և զգաւասատանս ձեր արդարութեամբ դասեցայց: Եւ
եթէ թիւրեցայց երբեք ի ճանապարհաց օրինացն Ես-
տուծոյ և մարդարէնն նորա՝ ձեզ ամենեցուն լուծեալ
լիցի բան երդմանն, և մի հնազանդեսիք ինձ:

Սբու-Ռէքը ընտրեաց իւր յաջորդ զՕմար և դշեա
եղեւ բարեկարգութեանց, և բարւոք խնամեաց զժողո-
վուրդն, վասն այսորիկ ամենելքեան հնազանդեցան նմա-
առանց քրթմնջեց, և գոհ էին զնմանէ: Իսկ Օմար ոչ
ըստ օրինակի նորա վարեցաւ, այլ զընտրութիւն յաջոր-
դին իւրոյ յանձն արար ի կամս և ի ցուցումն վեցից ա-
րանց աւազաց: Եւ թէպէտ Ալեայ առաւել էին իրա-
ւունք քան այլոց ի յաջորդութիւն Օմարայ, վասն
մերձաւոր ազգակցութեանն ընդ Վահմեափ, որոյ որ-
դի հօրեղոր էր ինքն և իին ունէր զսիրելի զուսարն
նորա զՓաթիմայ՝ բայց հնարիւք և ջանիւք Այիշայի
ոչ ընտրեցաւ նա յայնմ նուազի, այլ Օթման, որ թէե
այր բարի էր և աղնիւ՝ բայց թոյլ ի կամս և յցլ
ի գործ, վասն որոյ և չէր բաւական ի ընուլ զպի-
տոյս ժողովրդեանն և ի կառավարել զպեատութիւնն, որ
ամէր և զօրանայր օր ըստ օրէ նոր ի նորոյ յազթու-
թեամբք: Իրեւ սպանաւ նա յամին 655-րդի՝ յարեան
անդրէն երկպատակութիւնք և պատերազմ ներքին:
Հուսկ յետոյ ամիրապետ ընտրեցաւ Ալի, որ քաղցր էր
բարուք և մարդասէր և անպանց կենօք. յորժամ եր-
գուեր նմա ժողովուրդն՝ յեց կայր նա յազեզն իւր:
Թուսէր իմն, թէ միամտութեամբ հնազանդելոց են նմա
ամենելքին, որում և իրաւունք ծննդեանն իւրոյ յաջո-
րդին և միաբան ընտրութիւն ժողովրդեանն, այլ ոչ եղեւ
այնպէտ Քանզի հայթայթանօք և ջանիւք Այիշայի և
Մուսաւեայ սատիկանին Ասորւոց, այլ և Ամրուի սատիկա-
նին Նզիստոսի, որ ի նոսա յարեցաւ՝ բարձին ոմանք
ամբասատանութիւն զնմանէ, թէ գործակից լիալ իցէ
սպանմանն Օթմանի, և ասպատամբեցին ի նմանէ: Յա-
րիւնաշեղ և ի սատիկ մարտին անկաւ Ալի և որդի:

նորա Հասան, զոր ընտրեալ էր համախռչիցն Աղեայ
յաջորդ նմա: Օամիրապետութիւնն կորդեաց Մուսաիս,
որ փոխեաց զաթոռ իշխանութեանն ի Մեղինէ ի Դա-
մասկոս:

Եշխանութիւն առաջնոց ամիրապետացն, որպէս
ցուցանէ և բառս Խալիֆ՝ էր առաջնորդութիւն ժողո-
վրդեանն յիլս կրօնից, կամ կրօնապետութիւն. այլ նոքա
վարէն և զամենայն գործս ժողովրդոց, նորին էին և
զատաւորք և զօրապարք զօրացն ի պատերազմի: Յնեղա-
նակ կենաց նախկին ամիրապետացն զրեա թէ ոչ իւիք
խորէր ի կենաց սոսկ առն արաբացւոյ. Արու-Դէքը
առնոյր ոռձիկ ի գանձուէն հասարակաց գահեկանու հինգ
և եթ յաւուրն. ոչ այլ ինչ եթող Օմար զինի մահուանն
խրց, բայց միայն հանդերձա, զարուէն իւր և զուզան.
ննջէր նա ի վերաց աստիճանաց մզկթին ընդ մուրացիկս.
Օթման ասյր համար և զմից մից գանզի ճշգլուու-
թեամբ: Զէր ամիրապետացն իրաւունք շնորհելց ումեք
զիհանս, այլ և նորին իսկ ընդ գատաստանոք անկանէին:

Հասից պետութեան ազրերք էին այսոքիկ. 1) Հարկ
ըստ զիից մարդաթուի յագգաց նուաձելոց, 2) Հարկ
հողոց, 3) Հարկ յեկամաից ի պէտս աղքատաց, 4) Տա-
սանորդ ի հողոց մահմետականաց, 5) Մաքս ի վաճառաց
և ի գործոց արուեստաւորաց, 6) Նիւթք պաշարոց ի
նուաձեալ ազգաց ի ոռձիկ զօրաց, 7) Տուզանք ի պար-
տելց, և 8) Հինգերորդ մասն յաւարէն պատերազմի, որց
չորեքին այլ մասունք բաշխէին մահմետականաց առհա-
սարակ:

Երկոքին առաջին աեսակք հարկաց այսոցիկ դցին
և առ Ռիւղանդացիս նովին անուամբ (tributum capitis և
tributum soli). զիսակմք զի և առ Ասանեամբք էր ի Պարա-

կաստան զվիսահարկ ըստ մարդաթուի: Օմար զառաջինն նշանակեաց ճշգրտօրէն զսակ պյսր հարկի: Ճշգիտառու և յԱսորիս և ամենայն ուրեք ուր ոսկի էր ի կիրառութեան՝ ամենայն արութ հասակաւորի եղաւ սակ չորից գահեկանաց (գենար, solidis) ամի ամի. իսկ ուր ուրեք արծաթթով վարէնն, որպէս ի Միջազես և ի Պարսկաստան՝ հասուցանէնն զբամն 40 Աստանեանց արծաթթու: Այլ ի զանազան աշխարհու և իսկեխակ ըստ զաւաց գաւառաց փոփոխէր սակ հարկին: Բայ պյամ էր անփոփոխ և սակ հարկին ի հոգոյ:

Մահմետականաց ամենեցուն մի և հաւասար էնն իրաւունք. ստացուածք էնն հասարակաց զանձն պետութեան և երկիրք նուածելոց. էր իրաւունք ամենայն առն մահմետականի առնուլ թոշակ ամ ըստ ամել ի զանձնուէն. այլ ոչ կարէր ստանալ երկիր և գործել զայն յաշխարհու նուածեալ ազգաց. զի մահմետականաց էր լինել դաս զինուորական, որոյ ի լրումն պիտոյից հարկ էր նուածեալ ժողովրդաց գործել զերկիր և հայթայթել նոցա զպարէնն: Վասն պյտորիկ այն ինչ այլ ժողովուրդք զուն զործէնն խուսափել յաշխարհազիրն մտանելոյ, որով թէ զերծանիցին ի հարկատուութենէ յօժարութեամի սրախ մտանէնն յաշխարհազիր մահմետականք, որ ինչ աղբիւր էր եկամոխց վասն նոցա:

Ժողովուրդք որք չէնն մահմետական կրօնիւք՝ ունէն ի պարանոցս իւրեանց նշան յաստուի, ²⁾ որ ցուցանէր թէ մտեալ իցէ նոցա յաշխարհազիր:

1) Կահեկանին (գենար), յորում էնն գրամք 10—12 գինք են ըստ պյտմուս ֆրանկք 13 Կազզիացւոց. ազաւրեմն նուազագոյն գին գրամցն համարելի է ֆրանկ մի:

2) Օպյս ոովորութիւն ակնարկէ Պեսոդ և ըստ նմանէ

Վանդի այս օրենք, որը ի լրութիւն եկին առ Օմարաւու՝ արտունութիւնս մեծամեծս մասամարտէին առն մահմետականի՝ վասն այսորիկ ի ժամանակի աշխարհակալութեանցն Արաբացւոց զբաղումն յօսար գտւանութեանց կորզեալ ձգեցին ի մահմետականութիւն, որ ինչ մի է ի պատճառաց ծաւալման մահմետական կրօնից ի սուզ ժամանակի:

Առ նախկին ամիրապետօքն յեղանակք վարչութեան աշխարհաց պետութեանն և հարկապահանջութեանն, համարակալութիւնն, չափք և կշիռք և զրամք մնացին անփոփոխ ըստ այնմ, որպէս եինն միւրաքանչեւր աշխարհի յառաջնութեան, մինչ չե ևս տիրեալ եր նոցա Արաբացւոց. զործակալք պետութեանն Յոյնք եին և Պարսիկք, որոց և լեզուք եին ի կիրառութեան ի զործս վարչութեանն: Ճողովուրդք որք ոչ եին մահմետական օրինաք՝ զգործու իւրեանց վարեին ինքեանք, և կրօնապետ նոցա եր գատաւոր հօտին իւրօյ:

Ի ժամանակի ընդունելութեան կրօնիցն Ամահմետի ունեին արզեն Արաբացիք զհմառութիւն զործոց պատերազմի, զոր մարթ եր նոցա ուսանել ի մերձաւոր ազգացն, ի Բյուզանդացւոց և ի Պարսից, և մարզել յայնմիկ և ևս ի հանապազորդ կախւ իւրեանց ընդ միմեան:

Պասք զինուորութեանն Արաբացւոց յօրինեալ եին ըստ ցեղի ցեղի և եին հետեւակք և հեծեալք: ՕՇնք հետեւակ զօրուն եին պապար, նիզակ և սուր, կամ աղեղն և պարս: Ի պաշտպանութիւն իւրեանց ի կիրականէին զօրքն հետեւակք ասպար մեծ փայտահայ պատեալ

Առօղիկ, թէ «զներ ինիք կապարեայ ի պարանոցս ամենեցուն» ևն տես ի մատենիս, էջ 127. Առօղիկ, յէջը 132 134:

կաշւով կամ թիթեղաւ, կամ ասպար փոքր կոչեցեալ
թարծ. իսկ զէն այրուձիցն էր նիզակ երկայն։ Դև ևս
առ կենդանութեամբ Աշամեատի զիտէին Երարացիք ար-
յուհել զզօրս ի գունդս երիս, որք են գունդ միջակ կամ
կենդրոնի, թեք աջակողմեան և ձախակողմեան, ի յառա-
ջապահս և ի վերջապահս։ Խակ այրուձին ընդ աջմէ և
ընդ ձախմէ պահպահնէր թեոցն երկոցունց։ Զոկատ ա-
ռանձինն էր զնդին աղեղնաւորաց. և իրարանչեւր ցե-
զի իւր զրօշակ առանձինն։ Քաջալիք մահմետական զօ-
րուն էր յշյան ժառանգիլց զարքայութիւնն իւրեանց, և
մանաւանդ ակնկալութիւնն աւարոյ պարտելոցն և կա-
պուտ անկելոց։ Բայց թող զայտսիկ՝ գեր ի վերց էր
զնուուրութիւնն Երարացւոց քան զայլոց աղբաց ժա-
մանակին և այսու, զի սակաւապիտք էին առհասարակ
և վարժեալք քաղցի և ծարաւու և նեզութեանց, վասն
որց և երագունք էին ի պատերազմի։

Առ ամիբապետաւն առաջնով և մանաւանդ առ եր-
կրորդաւն տիրեցին Երարացիք բազում աշխարհաց. Ե-
սորիք և Շարելոն և Խզիառոս, աշխարհք փարթամբ՝
նուածեցան մի զմից կնի ընդ իշխանութեամբ նոցա-
Ռմէն մի նուածեալ երկրի կեսպր յարաժամ բանակ սպա-
ռազին, որ ի հնազանցութեան ունէր զժողովուրդն և
պաշտպանէր աշխարհին։ Զօրավայրք բանակացս այսո-
ցիկ էին սատիկանք, որք յանձանց ըստ կամի ընտրէին
իւրեանց զործակալ։ Փոխանորդք էին նոքա ամիբապե-
տաց յիրս կրօնից, այլ և էին առաջնորդք զօրուն, վա-
րիչք զործոց աշխարհին և զատաւորք, նոքին և ժողո-
վոդք հարկաց արքունի ի նուածեալ ժողովրդոց։ Սմբ-
բապեան Օմար զհետ եղեւ կարծելց զերաւունս սատի-
կանաց, վասն որոյ սահմանեաց ի տեղիս տեղիս զործա-

*



կալս առանձինն, գաղի կոչեցեալ որք էին հարկահանք անկախք յիշխանութենէ ոստիկանաց: Այլ ոչ հաջոյ թուեցաւ այս յաւս ոստիկանաց, զի համեր ի նոցանէ զաղբիւրն կարեօր արդիանց նոցաւ Որպէս Ամր, որ նուածեալ էր զԵղբատոս և ոստիկան էր նորա՝ բողոք երարձ ընդդէմ այսր հրամանի Օմարաց, թէ ողբարդ լինեցի այս, թէ զեղջերաց կովուն ևս ունիցիմ, իսկ զկաթն օտարք կթիցեն:

Օրէնք և սահմանազրութիւնք Օմարաց, որովք կարգաւորեաց զներքին և զարտաքին վիճակ մահմետականաց՝ մինչեւ ցայսօր հիմունք օրինաց համարին յամենայն աշխարհու մահմետականաց:

Յետ արիւնահեղ պատերազմին Օմմայեանց ընդ առաջ նորդութեամբ Մուաւեայ ընդգէմ Ալեայ, որ պարազուին համարեալ էր և պաշտապան վաղեմի կարգաց և սովորութեանց՝ վախճան առնուն ժամանակ.ք նախկին ամիրապետաց և յեղանակի վարչութեան նոցաւ Յաղթութիւնն Մուաւեայ ոչ միայն սկիզբն եղեւ նորոց կարգաց և վարչութեանն, այլ և ի նմանէ և այսր անկաւ ի մահմետականս հերձուածն երեւելի ի Առնիս և ի Շիհս, որոց հերձուածոյն բազմազիմի եղեն հետեանք ի զարս զարս ի պատմութեան մահմետական ազգաց:

¶.

Հիմնադիր հարստութեանն Օմմայեանց զոր Մահմէտ ձայնէր Ազքատ՝ առ Օմարաւէր ոստիկան Դամասկոսի, և կարի կարձեալ էին իրաւունք նորա. առ Օթմանաւ ընկալաւ նա զոստիկանութիւն ի վերաց ամենայն Ասուրոց և յոյժ ընդարձակեցաւ իշխանութիւն նորաւ Խոկիրքե եղեւ ամիրապետ՝ եղ զաթոռ իւր ի Դամասկոս, որ

եղեւ և մնաց քաղաքամնայր ամիբասպետաց ընդ բովանդակ ժամանակ աէրութեանն Օմինայեանց, (յամս 661—750):

Քաղաք կարի վազեմի է Դամասկոս, շինեալ վազագցն քան զսկիզն պատմական ժամանակաց: Անդստին ի հին դարս երեելի էր նա ընդ բովանդակ Փոքրն Սահմ, և թազաւորք նորա իշխեին ի վերայ ամենայն Ասորւոց Աշան դրիցն պատշաճութեան դեռ ևս ի կանուխ ժամանակ վայր միջակ եղեւ Դամասկոս, յորում ի հազորդութիւն զային իրերաց ժողովուրդք աշխարհաց աշխարհաց և փոխանակէին զվաճառու ընդ միմանս, վասն որոց և ընդ հուագ բարդաւաճեցան ի նմա կեանք քաղաքային: Զին ժամանեալ առ մեզ տեղեկութիւնք, թէ յորում վիճակի լեալ իցէ Դամասկոս ի ժամանակս արբապեառութեանց Ասորեստանեայց, Քաղզէացւոց, Շարելացւոց և Պարսից, առ Եղեկիելի մարդարեին և եթ ևն տեղեկութիւնք կարճառուոք զնմանէ: Ազէքսանդր Մեծն յետ յաղթութեանն առ Իսսոս գետով եղիտ ի Դամասկոսի զգանձս և զհարձու Դարեհի արքային: Յետ Ազէքսանդրի էր Դամասկոս ընդ իշխանութեամբ Անլեկեանց, և զինի՝ առ Տիզրանաւ տիրեցին նմա Արշակունիք Հայոց, իսկ յետ պարտութեանն Տիզրանաց Մեծի ի Պոմպէոսէ՝ անկաւ բովանդակ երկիրն Ասորւոց ընդ իշխանութեամբ Հառվամյացւոց, որոց փոխհիւպատուք յաճախակի նստին ի Դամասկոս: Ի քաղաքի յայսմիկ քարոզեաց Պաւլոս առաքեալ աստ շինեաց և թէոգոս կայսր առաջար Աստուծոյ, իսկ Դիոկղետիանոս նորոգեաց զհին պարիսոս նորա: Առ պատերազմօքն Իշխանուքացւոց և Պարսից կարի անշքացաւ քաղաքն աւերածովք: Աւերակք պարսպացն, որք զո՞ն մինչեւ ցայսօր՝ վկայ են

ընդարձակութեան նորա ի ժամանակին յորում տիրեցին նմա Արաբացիք:

Ի ժամանակս Օմայեանց և ևս ընդարձակեցաւ և պայծառացաւ Դամասկոս լի և հօծ էին հրապարակք նորա վաճառք և կերտուածովք երեցունց մասանց աշխարհի զենային ի նոսա ժողովուրդ անհամար և գործք ճարտարապետացն Շիւղանղիջ զարգարէին զնոսաւ Վուաւիս շինեաց ի քաղաքին իւր ապարանս այլ մանաւանդ Ալիք Ա. Ճնխացցց և զարգարեաց զայն Յայսմ ժամանակի ապարանք ամիրապետաց պահէին յոսկի և ի մարմարինն ձեղունք նոցա, որմունք և յատակք յօրինեալ էին միւսիննաւ, շատրուանք ջրոց սփռէին զով տմոքարար, որոց և կարկաջք և մրմունջք նիրհ քաղցր աչաց բերէին: Խրամք հաւուց երկեցողաց զեղզեղէին զցայդ և զցերեկ ի մեջ սատոց սազարթախիտ ծառոց և երին երին բուսոց պատուտակաց: Ի ներքս ի սրահուն էին զեղցիքն ի կանայս աշխարհի, որոց սպաս հարկանէին սարունք զգեցեալ ի հանգերձս մետաքսեացն յերեւելիս, երիներանզն գունովք: Այլ և բազում վիպատանք և բանաստեղծք, երդիչք և նուազահարք բնակէին յապարանս անդ ի խրախութիւն և ի զովեստ ամիրապետաց:

Ի նախնութեան վիճակ կանանց յապարանս ամիրապետաց չը այնպէս վատթար և ստորին, որպէս եղե ի յետոյ ժամանակս յաշխարհս մահմետականաց սյլ վայելէին նոքա յազատութեան, և մասն կարեոր ունէին ի վճիռս քազաքային զործոց, այնպէս զե երդեմն նոքին իսկ էին ձշմարիտ իշխաննք պետութեանն (առ Արդլ-Վելիքաւ): Իսկ ի ժամանակաց անտի Ալիք Բ. (յամն 743—744) մուծան հարձանոցք (հարէմք) և փոխեցաւ վիճակ կա-

նանց: Ե Ռիւզանգիոյ ընկալան ամիրապետք զսովորութիւնն ունելոյ ներքինիս ի ծառայութիւն տիկնանց և ի պահպանութիւն հարձանոցաց, և յայնմշետէ եղն ներքինիք արք կարեւորք ի զբունա իշխանաց արեւելեան ազգաց: Ե Պարսկաստանէ մուծաւ սովորութիւնն ըմբելոյ զգինի, թէպէտ և արզելու Առքանն ի կիր արկանել զայն:

Թէպէտ և ամիրապետքն Դամասկոսի զեղիսք և շուայաք էին առ հասարակ, և ոչ ունեին փոյթ զերաց վարչութեան՝ այլ էին նոցա ինչ ինչ պարակք, զորովք չէր մարթ նոցա զանցանել: Առաջինն ի պարտուց աստի և ծանրագոյնն քան զամանացն՝ էր երթալ հնդիցոյ յաւուր ի մզկիթն ի պաշակէ զկարգաւորութիւնս հասարակաց ազօթից: Յաւուրս ուրբաթուց հարկ էր ամիրապետաց քարոզել ժողովրդեանն. յայսոսիկ աւուրս, մանաւանդ եթէ տօն զիսպէր հանդիսաւոր՝ մեծաւ շքով իջանեին նոքա ի մզկիթն, զզեցեալ հանդերձս սպիտակս և փեղյոր սրածայր ի զլուին. կլանեին այսովէս յամբիոնն և քարոզէին անտի: Զայս առնեին նոքա և յաւուրն յորում ընտրեին յամիրապետութիւն: Այլ և հարկ էր նոցա ըստ վազեմի սովորութեան նստել յաթոռ դատաստանի և դատել, զի նոքին իսկ էին աւագ դատաւորք աշխարհին իւրեանց: Վրասրբին նշանք պատուց և աստիճանի ամիրապետաց էին մատանի կնքով և դաւազան ի ձեւ գայխոնի:

Յորժամ դադարեաց հարսաութիւնն Օմմայիանց և աիրեցին Վրբասեանք՝ անկաւ յայնժամ Դամասկոս ի մեծութիւնէն և եղեւ իրեւ զմի ի քաղաքաց դաւառաց փոխանակ նորս ամբարձաւ Շաղգադ քաղաք և եղեւ աթուանիստ Վրբասեանց առ երկորդաւ ամիրապետաց այսր տոհմի:

Ի ժամանակս Արքասնանց ի պատուի մեծի եղին Պարսիկք ի զբանն արքունի և կարեորդը յիրս վարչութեանն, որք և աւագ գործակալք էին պետութեանն: Մուծան յարքունիս բարք և սովորոյթք Աստանեանց Պարսից, զորոց և զտօնս սովորեցան տօնել Արարացիք, շնայրութն, զՄիհրիանն և զԱմազ զաւարազ հանդիրձից նոցա զգեցան և զփեղցը նոցա սեւ կոնաձե: Յայսըմ ժամանակի եմուտ և սովորութիւնն խիլայից, այս ինքն է հանդերձից ասղնազործից, ոսկեթել զրուածովք ի վերոյ, զորս տային ամիրապետք ի նուելու:

Զհետ փոփոխութեանց բարուց յարքունիս և ի տունս մեծամեծաց եկին և խլրամունք և աւատանութն մտաց յիրս կրօնից. յարեան աղանդք նորք, որք մուծին ի հաւատալիս իւրեանց նորոգութիւնս, և յուլացան առ հասարակ ամենեկեան ի հաւատոյս:

Եկրիս գասս արոհեալք էին զաւառքն ըստ վարչական և քաղաքական հանգամանաց, առաջին՝ երկիրն սուրբ, որ էր Մեկիէ և շրջակայք նորա, երկրորդ՝ աշխարհն յորում էին երկոքին քաղաքքն նուիրականք Մեկիէ և Մեղին, այն է բուն Արարիս (Higaz), և երրորդ՝ այլ ամենայն աշխարհք պետութեանն: Առ Մուաւեաւ պետութիւնն Արարացւոց արոհեալ էր ի նահանգս տասն, յորոց միջն անուն կոչէր Հայաստան: Առ նախին Արքասնամբք նահանգք երկուասան էին, յորոց մին էր Միջագետք (Քեղերէ) հանդերձ Հայովք և Ասրագատականաւ. այլ յետոյ անջատեցան Հայաստան և Ասրագատական ի Միջագետաց և եղին նահանգ առանձինն: Աւագ զործակալք ի վերայ նահանգաց էին սստիկանք, որոց իրաւունք և իշխանութիւն ընդարձակ էին յոյժ: Օմենցիանք հանին յոստիկանաց զտեսութիւնն ի վերայ զանձուց և

դատաստանաց, որք յանձն արարան առանձինն գործակալաց, և գուն ուրեք ունեին ոստիկանք զահացութիւնն գանձուն և դատաստանաց, զոր տային նոցա երեմն ամիրապետք ի նշանակ սիրոյ և հաւատարմութեան նոցա: Ի ժամանակս ամիրապետութիւն Կղեղի Ռ. (յամ 680—683) և մուտ սովորութիւն կաշառօք ստանալոյ զեշխանութիւն ոստիկանութեան. իսկ զինի և ևս վատթար սովորութիւն և մուտ ի նոսա, զի ոստիկանք կային մնային ի դրունս և յապարանս ամիրապետաց, իսկ զաշխարհ իշխանութեանն իւրեանց վարեին ի ձեռն հաւատարիմ արանց իւրեանց. և սոքա ամենայն ջանիւք զշետ լինեին՝ ըստ չափու հնարից և կարից իւրեանց յաւելուլ զեկամուտս և զկողողուտս յաշխարհէն յօդուտ անձանց իւրեանց և անարից ոստիկանաց:

Ըստ նուազել իշխանութեանն ամիրապետաց ի ժամանակս Աբրասեանց՝ առաւելութիւն իրաւունք և իշխանութիւն ոստիկանաց, որք զբեա թէ անկափ էին յամիրապետաց. շատանային ամիրապետք այսու և եթ, զի ծանիցին կրնապետ և զուլս ամենայն մաշմատականաց: **Առքա տիրեին միայն ի վերայ նահանդին՝** յորում էր քաղաքն նոցա աթոռանիստ:

Առ Աբրասեամբք սահմանեցաւ պաշտօն աւագ հրամանատարաց (վեղերք), որք էին սպարապետք ամենայն զօրաց պետութեանն և առաջին խորհրդականք ամիրապետաց. նոքօք վճարէր ամենայն զործ պետութեանն, և իշխանութիւնը (։): ի ձեռն նոցա էր մուտն և ելն զրան արքունի: **Այլ իշխանութիւնն նոցա երեմն ամեր և երեմն նուազեր ըստ բուռոյ բարուց և համոյից ամիրապետաց:**

Ի զիւրել զշազորգութիւնս ամիրապետաց ընդ ոստիկանու՝ յօրինեաց **Մուտախատուն դպրաց, յորում հանեին**

Ե ժամանակս Արբասեանց ի պատուի մեծի եղին
Պարսիկք ի զրանն արքունի և կարեռը յիրս վարչու-
թեան, որք և աւագ գործակալք էին պետութեանն:
Մուծան յարքունիս բարք և սովորոցան տօնել Արաբացիք,
Պարսից, զրոց և զտօնս սովորոցան տօնել Արաբացիք,
Վեափրուզն, զՄիհրկանն և զԱրամ զտարազ հանգեր-
ձից նոցա զդեցան և զփեզոյր նոցա սեւաւ կոնաձեւ: Յայ-
սըմ ժամանակի եմուտ և սովորութիւնն խիլայից, այս
ինքն է հանգերձից ասզնազորձից, ոսկեթել գրուածովք
ի վերոյ, զրոս տային ամիրապեաք ի նուէր:

Օհետ փոփոխութեանց բարուց յարքունիս և ի
տունս մեծամեծաց եկին և խլըամունք և ատաանումն
մտաց յիրս կրօնից. յարեան աղանդք նորք, որք մուծին
ի հաւատալիս իւրեանց նորոգութիւնս, և յուլացան տո
հասարակ ամենեքեան ի հաւատայու:

Յերիս զասս տրոշեալք էին գաւառքն ըստ վար-
չական և քաղաքական հանգամանաց, առաջին՝ երկիրն
սուրբ, որ էր Մեկիէ և շրջակապը նորա, երկրորդ՝ աշ-
խարհն յորում էին երկոքին քաղաքքն նուիրականք Մեկ-
իէ և Մեգին, այն է բուն Արաբիա (Higaz), և երրորդ՝
այլ ամենայն աշխարհք պետութեանն: Առ Մուաւեաւ
պետութիւնն Արաբացւց տրոշեալ էր ի նահանգս տասն,
յորոց միոյն անուն կուէր ։ այսաստան: Առ նախիին Ար-
բասեամբք նահանգք երկուաստան էին, յորոց մին էր Մի-
ջազեաք (Քէզիրէ) հանգերձ ։ այսովք և Արաբատականաւ.
այլ յետոյ անջատեցան ։ այսաստան և Արտօպատական
ի Միջազեաց և եղին նահանգ առանձինն: Աւագ գոր-
ծակալք ի վերաց նահանգաց էին ոստիկանք, որոց իրա-
ւունք և իշխանութիւն ընդպարձակ էին յոյժ: Օմիմայեանք
հանին յոստիկանաց զտեսութիւնն ի վերաց զանձուց և

Վերին
այլուր
բարձրաց
ունենալ
այլուր
կամուն

(1) Տիմա-
հական
2) Տիմա-
հական
3) Տիմա-
հական

Կամուն
այլուր
բարձրաց
ունենալ
այլուր
կամուն

1. Պարսկաց այլուր
բարձրաց
ունենալ
այլուր
կամուն

գաւասատանաց, որք յանձն արարտան առանձինն գրրծակալաց, և դուն ուրեք ունէին սատիկանք զահազութիւնն զանձուն և գաւասատանաց, զօր ապյին նոցա երբեմն ամիրապետք ի նշանակ սիրոյ և հաւատարմութեան նոցա: Ի ժամանակս ամիրապետութեան Խղիզի Ա. (յամ 680—683) եմուտ սովորութիւն կաշառօք սատանալց զիշխանութիւն սատիկանութեան: իսկ զինի և ևս վատթար սովորութիւն եմուտ ի նուսա, զի սատիկանք կային մնային ի զրունս և յապարանս ամիրապետաց, իսկ զաշխարհ իշխանութեանն իւրեանց վարեին ի ձեռն հաւատարիմ արանց իւրեանց: և սոքա ամենայն ջանիք զհետ լինէին՝ ըստ չափու հնարից և կարից իւրեանց յաւելուլ զիկամուտս և զիողոպուտս յաշխարհէն յօդուտ անձանց իւրեանց և աեարց սատիկանաց:

Ըստ նուազել իշխանութեանն ամիրապետաց ի ժամանակս Արքասեանց՝ առաւելուին իրաւունք և իշխանութիւն սատիկանաց, որք զրեա թէ անկախք էին յամիրապետաց: շատանային ամիրապետք այսու և եթ, զի ծանեցին կրօնապետ և զլուխ ամենայն մահմետականաց: Սոքա ամիրէին միայն ի վերոյ նահանգին՝ յօրում էր քարաքն նոցա աթոռանիստ:

Առ Արքասեամբք սահմանեցաւ պաշտօն աւեադ հրամանատարաց (վէղիք), որք էին սպարապետք ամենայն զօրաց պետութեանն և առաջին խորհրդականք ամիրապետաց: նորօք վճարեք ամենայն զործ պետութեանն, և ի նոցա ի ձեռն նոցա էր մուտան և ելն զրան արքունի: Այլ իշխանութիւնն նոցա երբեմն ածեր և երբեմն նուազեր ըստ բոււսց բարուց և համոյից ամիրապետաց:

Ի զիւրել զհազորպութիւնս ամիրապետաց ընդ սատիկանս՝ յօրինեաց Մոււախս տուն դպրաց, յօրում հանէին

պատճենս յամենայն թղթոց, որք յամիրապեաէն յդէնս
առ ոստիկանս կնքեալք մատանեաւ նորաւ: Նոյն և սահ-
մանեաց սուբհանգակս թղթատարս ըստ օրինակի Ծիւ-
զանգացւոց կամ Պարսից: Ի ձեռն սուբհանգակաց յնոյց
ժամանակաւ և հասարակ մարդիկ յդէնս թուղթս: Եթ առ
Երարացիս և սուբհանգակ թղթատարութիւն աղաւնեաց:
Աահմանեալ էին և այլ ևս ատեանք հարկաց, համարա-
կալութեանց և արքունի ստացուածոց:

Երրորդն յամիրապեատս Երբասեան տոհմին ասէր,
թէ հարկ է ամիրապետին ունել գասաւոր արդար, տե-
սուչ իրաւասէր ի վերայ նեղքին բարեկարգութեանց,
հմտւու պաշտօնեայ ի վերայ գտնձուն արքունի և հա-
ւատարիմ պետ սուբհանգակաց: Այլ անկ է զիտելը զի
տեսուչքն բարեկարգութեան ի սկզբան անդ պետք էին
թինեապահ զօրաց ամիրապետաց. իսկ որք պետքն կո-
չէին սուբհանգակաց գործ էր նոյցա ի մէն մի նահանգի
պետութեանն զիտել զամենայն և տալ տեղեկութիւնս
ամիրապետաց, մինչ զի յանկազցն ևս է կոչել զնոսա
վերատեսուչ գաղանի ոստիկանութեան ըստ այժմուս:
Պային նաև գէաք և լրտեաք առ նոսաւ:

Յեղանակ վարչութեան գանձուն անփերազարան իմն
առ Օմմայիամբք և որիշ որիշ յեղանակաւ վարեին ի
նահանգս նահանգս, ամենայն ուրիք ըստ վաղեմի սովո-
րութեան տեղւցն, յարեւմուտս ըստ յեղանակի Ծիւզան-
դից և յարեւելս՝ ըստ Պարսից: Աահմանագրութիւնքն
Օմարայ Ա. յաղագս հարկաց յար և նոման էին օրինացն
Խոսրովայ Անուշուանայ: Հանգցն սմին մուծին Երա-
րացիք ի կիրառութիւն առ իւրեանս և զամփս և զիշեռս
և զդրամս ազգացս այսոցիկ: Առ Երբասեամբք իսկ ոչ
սահմանեցաւ Տշպրիտ յեղանակ հարկացն ժողովելց. քանզի

մէն մի նահանդի էին ուրոյն ուրոյն վեճակ և իրաւունք,
ըստ պայմանաց դաշնն, յօրժամ նուածեցան ընդ իշխա-
նութեամբ Արարացւոց, կամ ըստ արտունութեանցն,
զորս տուեալ էր նոցա ամբապետաց:

Հարկը նահանդաց մտանէին ի գանձարանս ոստիկա- Աշխատ իւս իւ
նաց, որք ընուին անտի զպիտոյս զօրաց և զայլ ծախս զ գործ աշխատ իւ
վարչութեան նահանդին, իսկ զմնացուածսն յզէին ի գործ աշխատ իւ
գանձն արքունի առ ամբապետաց: Պատ նուազել իշխանու- Աշխատ իւ
թեան ամբապետաց և առաւելուլ իրաւանց ոստիկանաց Աշխատ իւ
նուազեցան և հսոքն արքունի, զի ոստիկանքն զմնա- Աշխատ իւ
ցուածս հարկաց ոչ յզէին այլ ևս յարկունիւ

Տեսակը հարկաց ի ժամանակս Երրասեանց էին այ- կ
սոքիկ. 1) Հարկ հողոյ ըստ երից ահսակաց նորա, այս ա
ինքն է ա) ըստ չափու հողոյն, բ) ըստ եկամտից և գ) ըստ կապալոյ. 2) Հարկ ստացուածոց. 3) Տասանորդ ի ա
նաւաց. 4) Հինգերորդն յարգեանց մետաղաց և յարօտից. 5) Գլխահարկ նուածելոց. 6) Առկ տանց զբամահա- ա
սութեան. 7) Հասք մաքոյց. 8) Առկ աղահարկաց և ի ա
ձինաւեղիաց. 9) Հարկ վասն շինելոյ ի շուկայս և ի կ
հրապարակս քաղաքաց կրապակս. 10) Հարկ ջրաղացից կ
և գործատանց, (որպէս ի Պարսկաստանի գործատունք կ
վարդեջրոյ). 11) Հարկ յիրաց պահուածանաց:

Պատմագիւք ոմանք Արարացւոց, Իրն Խալգուն, որ
եկաց ըստ Հեջերի յամ 158—170, յամ Տեսան 775—
786, Առգամաց (վախճ. յ337 ամին Հեջերի, 948—9
ամի Տ.) Իրն-Խորդագրէզ (255—59 Հեջերի, յ870—
92 ամի Տ.) աւանդին աեղեկութիւնս քանի մի կարծա-
ռօսս յաղագս վարչութեան գանձուն առ Երրասեամբք
և սակի հարկացն միոյ միոյ նահանդի: Պատ վկայու-
թեան Իրն-Խալգունի ի միջոցի ամաց 775—786 միա-

Համուռ գումար արծաթյն, որ եմուտ ի գանձն արքունի՛ էին 411 միլիոնք զբամոց ըստ Առղամաց յամն 819—20 գումար գանձուն էին միլիոնք զբամոց 371 և կես ըստ Խորդագրեղի ի միջոցի 845—74 ամաց հապն արքունի գանձուն ոչ առաւելան քան զ293 միլիոնս զբամոց: Օպատաճառս նուազման արքունի հարկաց ամ ըստ ամեւ զիւրին է մակարերել ի պատմութենէ անտի պետութեանն ամիրապետաց: Յարաժամ կոխեք և խոռվութիւնք, երկպառակութիւնք ի ներքոյ և պատերազմունք արտաքօյ, շոայլութիւնք ամիրապետաց և անցագուրդ ընչասիրութիւն ոստիկանաց ապականեցին առհասարակ զաշխարհն ամենայն, և մինչգեռ կեղեքէին զժողովուրդն ոստիկանք վասն հարկաց՝ ունայն եր յարծաթոյ գանձն ամիրապետաց. վասն այսորիկ և եմոյծ ամիրապետն երկրորդ յԵրբասեանց ի վարձու աալ զնահանգն ոստիկանաց, որք կուէին նմա զարծաթին ըստ որոշեալ սակի:

Ասկ հարկին որ ելանէր ամի ամի ի ռայասատան աշխարհէ ըստ վկայութեան Երն-Խարդունի եր 13 միլիոն զբամոց. ըստ Առղամաց ինն միլիոնից և հարիւր հազարաց. իսկ ըստ Խորդագրեղի չորից միլիոնից: Եյլ նահանդք քանի մի հնոյն Հայաստանի համարեալ էին ի մասունս Կարպատականի և Վիթազետաց:

Որպէս յիշատակեցաք ի վեր անզը՝ առ Երբասեամբք գործակալք պետութեանն Երաբացւոց և մանաւանդ տեսուչք գանձուն Պարսիկք էին և Յոյնք, որք և վարեին լեզուօք իւրեանց. այլ և արծաթ և ոսկի ամենայն, որ էին ի կիրառութեան՝ Պարսից էին և Ի՞իւզանդացւոց: Խակ իրեւ նստաւ յաթոռ Երդլ-Վելիք՝ ձեռն էարկ ի փոփոխութիւնս կարեռաւ. փոխանակ Յունաց

և Պարսից եղ զործակալու մահմետական կրօնիւք, և մոյք
ի կիրառութիւն զլեզուն Սրաբացւոց ի զործու
թեան, և կոխեաց զբամ արարացի զբովք, (յամի
Տեան 717—718): Ասհմանեաց ի պետութեանն կշիռ
հասարակաց, որով ամենեկին վարեսցին, և զբամոյն կշիռ
մախալաց, իսկ գահեկանին (գննար) կշիռ միոյ մախալի:
Դրամոցն ի պղնձոյ բազում յոյժ էին տեսակք, ըստ
կշռոյ նոցա և ըստ մեծութեան: Ի վերայ զբամոց ոս-
կւց և արծաթց կոխեին ամիրապեաք զանուանս իւ-
րեանց իսկ ոստիկանաց էր հրաման կոխել զանուանս
իւրեանց ի վերայ պղնձոյ և եթ: Մինչև ցայս վայր
յայտնի են վայրք 160, յորս հատանեին զբամք, և ո-
րոց անուանք զբոշմեալ տեսանին ի վերայ զբամոցն Ս-
րաբացւոց: Ըազում անզամ փոխանակ անուանց քա-
զաքացն, յորս հատեալ են զբամքն՝ զբոշմեալ են ա-
նուանք նահանգացն, յորս էին քազաքքն. զոր օրինակ
Դնի Սարպատական (Սգերբէջան) փոխանակ Սրտաւի-
րոյ (Սրգէրիլ), Հայստան (Սրմինիս) փոխանակ Դունայ
(Դէրիլ), Արևնիք (Սրբան) փոխանակ Պարտաւայ (Շէր-
դան): Եյլերբեմն զնին անուանք քազաքացն և նահանգացն
ի միասին. զոր օրինակ Հարունապատ և Հայստանի Ի
վերոզիւլցոյ երեկի, զի և ի Հայստան աշխարհի էին
զբամատառնք քանի մի, յորս կօխեին զբամք: Ի մերում
ժամանակի գոն գեռ ևս զբամք կոխեալք յԱւրմիա, յԱ-
միզ, ի Պարտաւ, ի Դունայ, ի Մարփին, ի Մծրին, ի
Տիգիս և յայլ տեղիս, որը ամենեկեան ի սկզբանէ ան-
տի Ծ., զարուն համարեալ էին մասունք Հայստան
նահանգին:

Զինուորութիւնն Սրաբացւոց գեր ի վերոյ էր քան
զՅունաց և Պարսից վասն բարիոք կարգաց և կարգա-

ուրութեանց, որք գամ մի սահմանեալք յօմարայ՝ ոչ փոփոխան յետոյ, իբր զի չիք յիշատակութիւն առ պատմազիրս Արաբացւոյ, թէ յաջորդացն Օմարայ մերձաւորաց փոփոխեալ իցէ բնչ ի կարգացն այնոցիկ: Զինուորք նոցա հլու էին հրամանատարաց իւրեանց և արիանիրաք. թոշակ կարգեալ էր նոցա բաւական. կրօնք քաջալեր էին նոցա ի հանդերձեալ կեանս և յըս կողոպուտից յաստիւ: Բառ սահմանազրութեան Առւրանին ամենայն զենուոր ունէր մասն յաւարէ թշնամեաց, վասն որոյ և զինուորութիւնն առ նոսա, որպէս ի վեր անզը յիշատակիցաք գամ մի՝ ոչ միայն զործ էր աստուածահամաց, այլ և արզիւնաւոր: Առ Օմայինամբք ի սուղ ժամանակի ուսան Արաբացիք զարուեստ պատերազմի ի Ի-իւզանդացւոց և ի Պարսից. զօրավարք նոցա, ըստ օրինակի Ի-իւզանդացւոց, աւուր միոյ ձանազարհաւ հեռի ի թշնամեաց՝ զակիշ զործէին, զորով շիրաւոր փակէին և փոս հասանէին: Յաշխարհս նուաճելոց ի պատշաճուոր վայրս կազմին բանակ մնայուն, յորում ըլունակէին զինուորք նոցա հանդերձ ընտանեօք իւրեանց և ընդունէին թոշակ յարքունուստ: Ե յետոյ ժամանակս փոխանակ տալոյ նոցա զթոշակն՝ տային նոցա աշխարհ մի, յորոյ յեկամտիցն կերակրեացին. այլ զործէլ զերկիք յաշխարհին ոչ էր նոցա հրաման, քանզի օրէնք մահմետականաց արզելուն նոցա զերկրազործութիւն. զի անկ է նոցա կեալ զինուորութեամբ: Բանակն Արապատականի ի սկզբան անդ դնէր ի Մարտազյ, առա փոխեցաւ յԱրտաւիլ:

Առ Օմարաւ միոյ միոյ մահմետականի էր թոշակ ամ ըստ ամէ 500—600 զրամոյ. իսկ առ Արբասեամբք ընդունէր հետեակն զրամս 80 յամանանն, իսկ հեծեալն

զրամն 160: **Զօրացն** Արարացւոց թիւ առնախկին ամիբապետք յՕմնայեան տանէ էր իր 60 հազարաց, յորոց վերայ ծախէին ամի զրամք 60 միլիոն, ապա ուրեմն զրամք հազար ըստ զինուոր: Այլ իրրենուազաւ գանձն արքունի վասն յոռի մատակարարութեան՝ պակասեցաւ սակ թոշակի զօրացն, կամ թէ ոչ դայր ճշգրտութեամք ըստ սահմանեալ ժամանակաց:

Զէնք արարացի զօրուն էին որպէս և յառաջն՝ սուսեր, նիղակ և ասպար, աղեղն և կապարձք և զրահք. Էին նոցա. և մէքենայք պաշարման և քարաձգութեան ըստ օրինակի Յունաց: Առ ի գիւրել զըուս և զշարժմունս զօրաց և զաղիսից նոցին՝ յարզարէին խնամով զուղիս, զաղիս բանակին և զօրաց փոխէին ի տեղւոջէի տեղի բարձեալ ի վերայ ուղարուց: **Վ**ասն այսր ամենայնի ծախէր արծաթ մէծագումար. որպէս զի ի կաղմաւորութիւն բանակի միոյ 40 հազար զինուորաց ի մաւորութիւն յաշխարհն Աակաստան՝ ծախեցան առ Արդէ Մէլիքաւ երկու միլիոնք զրամոց: Բատ աճել իշխանութեանն Արարացւոց առաւելոյր և թիւ զօրաց նոցա և քան զիւս. առ ամիբապետաւն Մայմունաւ (816—7) թիւ զօրաց բանակին, որ պահէր զաշխարհն Իրան՝ էր 125 հազարաց: Բատ այսմ փոփոխէր և կազմութիւն ծննդեամք պակասէին գամ քան զգամ և յաւելուին զինուորք ի նուաճեալ ազգաց, յորոց բազումք ընդունէին զկրօնս մահմատականաց և մասնէին ի զինուորութիւն նոցա յուսով հարուստ աւարաց: **Ի** սուզ ժամանակի զունդ առանձիննեղնն նոքա, որում տուաւ պաշտօն արքունի թիւնապահաց: Բայց այս ձեռնարկութիւն ամիբապետաց վնասակար յոյժ եղե վասն պետութեան

նոցա, զի զօրսավագքն թիկնապահաց ընդ հուսպ այնքան զօրսացան յարքունի գրանն և զայնապիսի զգեցան իշխանութիւն՝ մինչեւ նստուցանել զոք յաթռու ամիբապետութեան կամ ընկենության ըստ կամի իւրեանց այլ թող զայս և բնակիչքն հաղղագայ և առհասարակ Ըրաբացիք խեթիւ աջօք հայէին ընդ այս, զի զանց արարեաւ ամիբապետաց զԸրաբացւովք՝ յայլոց աղբաց ընտրելին իւրեանց թիկնապահա:

Դ.

Յարաբերութիւնք մահմետականաց ընդ աղքան, որք չիցնն մահմետական կրօնիւք՝ սահմանեալ են ի Կուրսանի, որ պատուիրէ հաւատացելոցն մարտնչել ընդ նոսա ցանդ, մինչեւ ածցնն ի մահմետականութիւն կամ յաղթեալ արկցնն զնոսա ընդ ծառայութեամբ իւրեանց: Յորժամ մտանէին աղքքն օտարք ի գաւանութիւնն մահմետականաց ընդունէին զամենացն իրաւունս առն մահմետականի. իսկ եթէ մնային ի գաւանութեան իւրեանց՝ կէին այլովք սահմանօք և կարգօք իրրե հպատակք և հարկատուք յաղթականաց իւրեանց: Խւ քանզի յաւուրց անտի Մահմետի ծաւալեցաւ շուրջանակի իշխանութիւնն Ըրաբացւոց ի վիրայ աղքաց քրիստոնէից՝ վասն այսորիկ և յարաբերութիւնք նոցա և պատմութիւն վիճակի քրիստոնէից ընդ իշխանութեամբ մահմետականաց սկսանին յօրէ անտի ծաւալման կրօնիցն Մահմետի. սա ինքն Մահմետ յաղթեաց քրիստոնեաց ժողովրդոցն որք ի հարաբեակողման Ըրաբից և կուեաց ընդ նոսա դաշնուս, որք պահին մինչեւ ցայսօր:

Օմար մերժեաց արտաքս յԸրաբից դհամօրէն քրիս-

տոննեայս. արգել այլոց ազգաց խօսիլ և ընթեռնուլ մատեանս յարաբացի լեզու. բայց սահմանազբութեանցդ ոչ էր նպատակ հալածել կամ նեղել զգաւանողս օտար կրօնից, այլ զի Երաբացոց միայն լիցի աշխարհն Երաբիա, և զի մի խառնեացին մահմետականք ընդ օտարս և մի մոլորեացին յօրէնս նոցա. քանզի թոյլ ետ քրիստոնէիցն մերժելոց յԵրաբիոյ՝ առնուլ ընդ իւրեանս զինչս և զստացուածս իւրեանց, և կրամայեաց տալ նոցա յաշ խարհս նուռաձնալս պետութեանն իւրոյ՝ երկիր նոր վին չափով, որքան էր նոցա ի հայրենի աշխարհն իւրեանց յԵրաբիա: Այնպէս և յորժամ էառ Օմար զարուսաղէմ՝ կռեաց ընդ ժողովրդեան քաղաքին զաշինս ուխափի, թէ մի ձեռն արկցէ յազատութիւն քրիստոնէից և յեկեղեցիս նոցա և մի յինչս նոցա և եկեղեցեաց և վառնաց նոցա: Իսկ յորժամ տիրեաց նա Ասորւոց՝ եդ ընդ նոսա այլ պայմանս, որոյ սահմանազբութիւնք մինչեւ ցայսօր համարին օրէնք յարաբերութեանց մահմետական ժողովրդոց ընդ քրիստոնեաց: Զայս թուղթ պայմանի ըստ Արէմէրի (յէջս 102—4) ածհմք աստ ի ներքս բովանդակ ի բարւոք վերահասութիւն հանգամանաց կինաց քրիստոնէից առ նախին ամիրապիտօք:

«Ենուամբն Աստուծոյ, զթածին և ողորմածին: Եյս է թուղթ առ Օմար Իրն Քատար իշխան հաւատացելոց (մալիմանաց), ի քրիստոնէից քաղաքին (այս անուն):

Յորժամ մուէք գուք յայս աշխարհ՝ աղաջցաք զձեղ վասն ապահովութեան (աման) կինաց մերոց և ընտանեաց, վնչեց մերոց և վասն եղբարց մերոց հաւատացելոց. և խոստացաք ձեղ՝ զի մի շինհոցուք յայնմշետէ ի քաղաքի աստ և շուրջ զնովաւ վանս և եկեղեցիս, մի մնաստանս և մի անապատս ի նորոյ, և մի նորոգեսցուք զա-

ւերեալն անդրէն և զայնոսոիկ որ ի քաղաքամասին անդ
մաշմետականաց իցեն. զի մի արդելցուք մաշմետակա-
նաց՝ ունել յեկեղեցիս մեր բնակութիւն զերիս գիշերս,
և զի կերակրեցուք մեր ընսաս. զի մի ընկալցուք և
մի պաշհացուք ի տունս մեր և յեկեղեցիս մեր դէտս և
զամենայն այլ թշնամի մաշմետականաց. զի մի ուսուս-
ցուք որդւոց մերոց ընթեռնուու զԱռւրանն զշաւատա-
լիս կրօնից մերոց մի պաշտեացուք յայտնապէս և մի յա-
րեցուացուք զոք ի պաշտամունս մեր: Կ. և մի արդե-
լցուցումք զոք յազգակցաց մերոց, եթէ կամիցի ունել
զիրօնս մաշմետականաց. զի պատուեցուք զմաշմետա-
կանս, և յոտն կայցուք ի տեղեաց, եթէ կամիցին նորա
նստել զի մի նմանեացուք նոցա եթէ տարադու փեղու-
րաց իցէ և եթէ ապարօշից, եթէ ի կօշիկս և եթէ ի
գերծումն հերոց: Խոստացաք մի վարիլ լեղուաւ նոցա,
և ոչ անուանս մեզ գնել ըստ անուանց նոցա, մի նստիլ
ի վերայ թամրի և մի սուսեր ածել ընդ մշջ, մի առնուլ
գնոց զէնս և մի արկանել զանձամր, և մի զբել ի վերայ
մատանեաց մերոց բառ արարացի, մի վաճառել զինի. զշերս
ի վերոյ ճակատուց մերոց գերծուլ և հանդերձիւք մերովք
վարիլ յորում վայրի և իցեմք: Զի գոտի աճցուք ընդ
մշջս, մի զիցուք խաչ ի վերայ տաճարաց մերոց, մի տար-
ցուք զխան և զսուրբ զզիրս մեր ի շուկայս և ի հրապա-
րակս մաշմետականաց, զի զպանզակս տաճարաց մերոց
մի ուժզին հարկանիցեմք, և մի բարձր ճայնիւ ընթերց-
ցուք զշողեոր մատահանս մեր յազօթարանս մեր, եթէ
մաշմետական ոք առ երի կայցէ. զի մի արասցուք թա-
փօրս հանդիսաւորս արմաւենեօք և խաչեւք. և մի ի
ժամ թաղման ննջեցելոց մերոց ճայնիւ մեծաւ երգեսցուք
և մի մոմեզնս լուցցուք ի շուկայս և ի հրապարակս

մահմետականաց. զի մի կալցուք ստրուկս՝ որք լիալ իցեն յառաջագոյն ստրուկք մահմետականաց, և զի մի զիտեցուք զմահմետականն ի առն իւրում: Իրրե ընթերցաւ Օմար զայս թուղթ պայմանաց՝ յաւել յանձնէ ձեռք իւրովք. զի մի հարցուք զոք մահմետական: Զայս ամենայն խոստանամք պահել մեք և հաւատակեցք մըր. և փոխանակ սոցա ընդունիմք ի ձենջ ապահովութիւն (կենաց և ստացուածոց մերոց). և եթէ վրիպեցուք իւիք յամենայնէ ի սոցունց, զօր խոստացաք, և յորս հարկեցուցէք գուք զմեզ՝ պահանեացէ ի մենջ պաշտպանութիւն ձեր, և գուք զերծ լիջիք առնել ընդ մեղ զօր օրինակ ընդ հետոզս և ընդ ապստամբու:

Ընդ ամենայն ժամանակս իշխանութեան իւրոյ զհետ լինէք Օմար, զի սահմանազրութիւնքն իւր կատարեացին ճշգրտութեամք, և ոչ տայր թշյլ քրիստոնէից վարել պաշտամունս ի պետութեանն Իրրե խնդրեաց մի ոմն յոստիկանաց Հրաման ի նմանէ յազագս կարգելոյ գքրիստոնեաց ի զործակալութիւն արքունի՝ զայս ինչ ևս նմա պատասխանի Օմար. մի տայր թշյլ անհաւատից միջամուխ լինել ի զործս մեր, մի տայր նոցա զայն, զօր Աստուած արգել և մի յանձն արասջիք նոցա զգանձս ձեր: Յուշի կայջիք զպատուիրան զայսոսիկ, զի են ի նոսա ճշմարիտ սկզբունք կենցաղավարութեանու Այշ լում ումեմն զրեաց Օմար զթուղթս զայս. որոյ իցէ առենազպիր քրիստոնեաց՝ մի ազրեացի ընդ նմա և մի սիրեացէ զնա, մի նստուացէ զնա առ երի իւր և մի խորհուրդ արացէ ընդ նմա. քանզի և առաքեալն Աստուածոյ (Մահմէտ) և ամիրազեսն որ է փոխանորդ նորա՝ ոչ տան թշյլ ունել արքունի զործակալս ի քրիստոնէից նուածելոց: Իրրե խնդրեաց Աստուածա բէն Արու Առ-

Վեան յՕմարայ հրաման կարգելոյ ի գործակալութիւն զքրիստոնեայ ոմն Ճարտար արուեստիւ համարտկալութեան՝ եւ նմա պատասխանի Օմար, թէ պահեսցէ զմեզ Տէր ի չարէ. ընթիրցայ զթուղթն քո յաղագս քըրիստոնէին. այժմիկ մեռեալ է քրիստոնեայն այն: Խաղաղութիւն ընդ քեզ:

Եյլ ի սուզ ժամանակի մոռացօնք եղին սահմանադրութիւնքն Օմարայ: Դեռ ևս առ նախկին ամիրապետքն ի տանէն Օմայյեանց ոչ միայն բարձ և պատիւնիկալան քրիստոնեայք յարկունի դրան, որպէս Սփոդալ որ եղեւ բանաստեղծ պաշտանն Արզլ-Մելքայ, այլ և բաղդումք եղին արքունի գործակալք:

Օմար Բ. որդի Արզլ-Եզիզայ, զե կարի ջերմեռանդն էր ի մահմետական կրօն՝ նորոգեաց վերստին զաահմանազրութիւնս զորս հաստատեալ էր Օմարայ Ա. որյաշղագս քրիստոնեայ հպատակաց: Առ ամենայն կուսակալս իւր յշեաց հրաման այսպիսի. զու եղեւ ինձ, թէ ի նախնութն յորժամ մահմետականք տիրէին գաւառի իրիք՝ ընդ յառաջ ելանէին նոցա անհաւատքն, իսկ մահմետականք պահանջէին ի նոցանէ աջակից լինել իւրեանց ի վարչութեան երկրին, իրբու յայն սակա թէ բանիբունք իցեն նոքա և հմուտք վարչութեան և հարկահանութեան: Եյլ ոչ է մարթ բանիբունս լինել և մտացիս այնոցիկ յորոց վերայ հեղաւ բարկութիւնն Աստուծոյ և մարգարէի նորա: Եւ այս այսպէս ձկեցաց յորշափ ժամանակս սահմանեալ էր Աստուծոյ: Ոչ է ինձ յայտ, թէ իցէ արդեօք ոստիկանի ուրուք գործակալ որ ոչ իցէ մահմետական օրինօք. եթէ ծանեայց ոստիկան այսպիսի մերժեցից զնա ի պաշտամանէ իւրմէ: Վանդի առաջին պարտիք ձեր են մերժել զնոսա (զըր-

քիստոնեայս) ի պաշտամանց և խափանել զկրօնս նոցա.
ապա ուրիմն անկ է ձեղ ածել զնոսա յամօթ և ի նա-
խառինա, զոր առհմաննեաց Աստուած վասն նոցա: Օպջշ
լերուք, զի մի նատցին քրիստոնեայք ի վերայ թամբի,
այլ ի վերայ կապերտից, և մի կանայք նոցա ի թամբս
փայտեղէնս կամ ի կաշըց, այլ ի գձուձ կապերտս, զոր
սփռեն ի մնարս բեռնաբարձ անասնոց, և զի յորժամ
հեծանիցին՝ զոտս իւրեանց ի մի կողմն անասնոյն արկ-
ցեն ի խոնարհ: Օպյս ամենայն պատուիրեաջիք խստիւ
գործակալաց ձերոց: Հնազանդ լերուք հրամանի իմում:

Խող զայս՝ յաւել Օմար Ի: պատուէր, զի համօ-
րէն քրիստոնեայք զերծուցուն զհերս իւրեանց ի վերայ
ճակատուն և գոտի ընդ մէջ ածցեն. արգել նոցա զզե-
նուլ վերարկուս (կապյս), ապարօշս զիլոց (տայլէսան)
ըստ զիտնոցն մահմետականաց, այլ և զէնս: Յետ այ-
սորիկ հրամայեաց, զի կործանեացն առհմասարակ զա-
մենայն եկեղեցիս քրիստոնէից, որք շինեալք իցեն ի նո-
րագոյն ժամանակս, այլ արգել արկանել ձեռն յայնոսիկ
որք գցին ի ժամանակին յորում մահմետական կոնք
մուծան յաշխարհն: Աստիկանն Դամասկոսի Ավեթ զե-
կեղեցին քրիստոնէից յանուն Ա. Յովհաննու արար մըզ-
կիթ մահմետականաց. փոխանակ նորա ևտ Օմար քը-
րիստոնէից այլ եկեղեցի, որ չէր նոցա յառաջագոյն: Ես
խստիրեալութեան կարգացս սցոսցիկ բազումք ի քրիս-
տոնէից ընկալան զմահմետական կրօնա Իսպայ առ Օմ-
այեամբք վայելէին առհմասարակ քրիստոնեայք ի շնորհս
ամիրապետաց, իբր զի ու ոք ի նոցանէ հալածեաց և
նեղեաց զքրիստոնեայս բաց յՕմարայ Ի:

Իսկ յորժամ ամիրապետեաց տունն Երբասեանց՝ և
ևս յաւելաւ ազգեցութիւն քրիստոնէից, զի նոցին յանձն

արտաք ամիրապեան Առանսուր խուզել և ըմբռնել զմնացորդս տանն Օմմայիանց և գհամախոհս նոցա. այլ թուի թէ կարի տագնապեցին քրիստոնեայք զմահմետական իշխանութեամբ իւրեանց, ոյլ վասն ամբաստան եղել զնոցանէ առ ամիրապեան մեծազօր իշխան մի (Եկեղիքին Շահը). վասն որոյ և ընկեցան քրիստոնեայք յիւրաքանչիւր իշխանութեանց հրամանաւ ամիրապեաին: Հանգոյն սմին և ամիրապեան Մեհզիք (Առհազիք) ըստ ամբաստանութեան մահմետականաց ևս հրաման, զի մի կալցին սաստիկանք և առհասարակ ամենայն մահմետականք ատենագլիրս իւրեանց իքրիստոնեից. և սպառնայր հատանել զձեռն այնոցիկ որք վնասակար գատանիցին յայսմ իրի: Աշխապէս և Հարուն էռ Ուաշիդ ըղձացիեալ համբաւու թէ մահմետական բարեպաշտ իցէ Հըրոսվարտակաւ ընկէց զքրիստոնեայս յիշխանութեանց արքունի գործակալութեան, և հրամայեաց նոցա զգենուել տարագ հանգերձից ոյլազդ ի մահմետականաց, և զեկեղեցիս նոցա աւերեաց: Ամիրապեան Առմուն որ ի սկզբան անգ յաջողէր քրիստոնեից՝ յետ նուաճելց գլուխիս և գառնալց յեղիպտոս՝ սահմանեաց կանոնս ինչ ընդգէմ նոցա:

Ըս յաջորդք երկոքումբք Առմունայ և ի սկիզբն իշխանութեանն Առթաւալքէլի տուան անդրէն քրիստոնեից իրաւունք արքունի գործակալութեան. և այնչափ բաղմացաւ թիւ գործակալց քրիստոնեից, զի համօրէն պաշտօնեայք առ ամիրապեաին և մօր նորա և աղգականաց նորա, այլ և ամենայն գործակալք գանձուն և զինուորական և քաղաքային գործոց իքրիստոնեից անտի էին: Արեցին նոքա որոգայթու ընդգէմ մահմետական գործակալց, զի յօրինեալ ցանկ մի ամենայն ա-

ւագ զործակալաց մաշմետականաց և ի վերին երեսս
մուծեալ ի ցանին և զանուանս քանի մի քրիստոնէից՝
ետուն զայն ցՄոթաւաքէլ թէ արքն նշանակեալը
փարթամացեալ են յօյժ դանձուք: Ի՞ոյց մաշմետակա-
նացն կանխեալ ցրեցին զիսորհուրդս նոցա և այնպէս
ամբաստան եղեն զնոցանէ առ ամիրապեան, զի ընկէց
զամենայն քրիստոնեաց յիշխանութեանց իւրեանց, այլ
և յամի Տեառն 849-րդի ետ հրովարտակ, զի ամենայն
քրիստոնեայք ի վերոյ զգեստուց իւրեանց արկցեն կա-
պերտ փոքր զեղին զունով և մի զգենուցուն ի սպի-
տակս, որով խարեսցին ի մաշմետականաց: Այնպէս
հրամայեաց Մոթաւաքէլ զի ասպանզակք քրիստոնէից
փայտեղէնք լիցին, և տաճարք նոցա կործանեացին, զրւ-
խահարկ ըստ մարդաթուի կրիստապատիկ լիցի քան զա-
ռաջինն. զի մի երթիցեն նոքա ի բազանիս մաշմետա-
կանաց, այլ յիցին նոցա բազանիք իւրեանց առանձինն,
յորս ծառայեսցեն քրիստոնեայք, և զի մի ունիցին քը-
րիստոնեայք ի ծառայութեան իւրեանց մաշմետականս՝
Նշ առ ի հսկել այսմ ամենայնի կարգեցաւ գործակալ
յատուկ:

Երբե ամք ըրբ անցին ի վերայ՝ հաստատեաց վերըս-
տին Մոթաւաքէլ զօրինսն զորս սաշմանեաց յառաջա-
գյն, և զայլս ևս յաւել ի նորոյ, զի մի ունիցին քրիս-
տոնեայք իրուունս նատելոյ յերիվար, այլ յէշս և ի ջո-
րիս և եթ, զի յիտուստ կողմանէ թամբիցն հաստա-
տեսցեն զունդս երկուս փայտեղէնս. ի վերայ տանց նո-
ցա եղաւ սակ հարկի ամ ըստ ամէ տասանորդ մասն
զնոց նոցա: Ի զրունս տանց նոցա եղան փայտեղէն կեր-
պարանք զիւաց և զերեղմանք նոցա հաւասարեցան հո-
զոյ: Ատրիայն քրիստոնէից հրամայեցաւ կրել ի վերոյ

վարժեաց ձորձս երկուս զանազան գունովք, ի լայնութիւն չորից մատանց: Արդելաւ մաշմետականաց, զի մի ուսուցեցն զքրիստոնեացս և մի կարգեացն զնոսա ի գործակալութիւն: Այլ առ յաջորդօք Մոթաւաքելի մոռացօնք եղն օրէնք նորա, և քրիստոնեայք մաին անդրէն յարքունի գործակալութիւնս և եղն երեւլիք ի պետութեանն:

Յորժամ նստաւ յաթոռ ամիրապետութեան Մուկտիկիր-Ռիլլահ յամին 908¹ ընկեց զքրիստոնեացս յիւրաքանչեւր իշխանութեանց և հրամայեաց մի կարգել զնոսա յարքունի գործակալութիւն: “Նոյն բնքն ետ սպանանել զքրիստոնեայ ոմն Նասր անուն, զի էր տաննագալիք առ առն մաշմետականի: Ամիրապետն Ուազի-Ռիլլահ նորոգեաց անդրէն զսաշմանազրութիւնս նախորդաց իւրոց ընդգեմքրիստոնէից: Աւելջն եղեւ սա ամիրապետ անկախ անձնիշխան, զի յայսմ ժամանակի համբէն քաղաքային իրաւունք ամիրապետաց էին ի ձեռս պետին արքունի թիկնապահաց, որում անուն կուէր ամիր ալումբ:

Այլ ի վերայ այսր ամենայնի օրէնք մաշմետակառաց արգելուխն նոցա միջամնելս լինել ի կրօնական գործս քրիստոնէից, որք յայսմ մասին վայելէին յազատութեան և յանկախ իրաւունս հոգեւոր անտեսութեան: Այնապէս և ամուսնական խնդիրք քրիստոնէից զերծ էին յօրինաց նոցա, բայց միայն եթէ այրն և կինն քրիստոնեայ զիմեալ եկեղեցն առ դրասաւորն մաշմետական: Տուեալ էր քրիստոնէից իրաւունք պաշտելոյ զազօթս իւրեանց, նորոգելոյ զեկեղեցիս իւրեանց և զվանս ըստ նախկին ձեւոց նոցա, այլ և շինել եկեղեցիս ի նորոյ, բայց մի ի քաղաքու մեծամեծու, ուրանոր մաշմետականք առաւել

- 5) Հարուն էս-Ռաշիդ, որդի էլ-Մէհմէտ, յամա
170—193, (786—809).
- 6) Մահմէտ էլ-Ռաշիդ, որդի Հարունայ, յամա 193—
198, (809—813).
- 7) Արդուլլահ (Արդլայ) էլ-Մամուն, որդի Հարուն-
այ, յամա 195—218, (810—833).
- 8) Արու-Իսհակ Մահմէտ էլ-Մուտասիմ-Բիլլահ,
որդի Հարունայ, յամա 218—227, (833—842).
- 9) Արու-Ջաֆար Հարուն էլ-Ասեկ-Բիլլահ, որ-
դի էլ-Մուտասիմի, յամա 227—232, (842—847).
- 10) Արուլ-Գազի Ջաֆար էլ-Մութեկիկիլ Կղեալ-
լահ (Մոթաւաքէլ), որդի էլ-Մուտասիմի, յամա 232—
247, (847—861).
- 11) Արու-Ջաֆար Մահմէտ էլ-Մուտասիմ-Բիլ-
լահ, որդի էլ-Մութեկիկիլ, յամա 247—248, (861—
862).
- 12) Արուլ-Արբաս Աշմէտ էլ-Մուտասիմ-Բիլլահ,
որդի Մահմէտի, յամա 248—252, (862—866).
- 13) Արու-Արբալլահ Մահմէտ էլ-Մուտակ-Բիլլահ,
որդի էլ-Մութեկիկիլ, յամա 252—255, (866—869).
- 14) Արու-Արբալլահ Մահմէտ էլ-Մուկտեղի-Բիլ-
լահ, որդի էլ-Աստէղի, յամա 255—256, (869—870).
- 15) Արուլ-Արբաս Աշմէտ էլ-Մուտասիմ-Կղեալլահ,
որդի էլ-Մութեկիկիլ, յամա 256—279, (870—892).
- 16) Արուլ-Արբաս Աշմէտ էլ-Մուտասիմ-Բիլլահ,
որդի էլ-Մուլաֆաֆիկի, յամա 279—289, (892—902).
- 17) Արու-Մահմէտ Էլի էլ-Մուկտեֆի-Բիլլահ, որ-
դի էլ-Մուտասիմի, յամա 289—295, (902—908).
- 18) Արուլ-Գազի Ջաֆար էլ-Մուկտեղի-Բիլլահ,
որդի էլ-Մուտասիմի, յամա 295—320, (908—932).

պէս ասէ՝ Վելլարիոս՝ հասանէր առ նա յայնժամ թուղթ
մի յառնէ միոջէ անծանօթէ Մեկի քաղաքին, զի ընդու-
նիցի Կոստավ զՄաշմէտ՝ մարդարէ Կստուծոյ բարիա-

գերս արձակէին ի գտաւգդացն, յորժամ կամէր արքայից
արքայն յորս վտանգաւոր ելանել։ Ի ծառայութիւն և ի
զրօսանս արքային մեծի պահէին փիղս ինն հարիւր և վաթ-
սուն, յորժամ ի չու ելանէր արքայն՝ զաղիս նորա և զվրանս
բարձեալ տանէին զինի նորա երկոստասան հազար ուղտուք
մեծամեծօք և ութ հազարօք մանումքը։ Հախոսս արքունի
էին ջորիք և երիվարք վեց հազար, յորոց երագագոյնքն և
գեղեցկագոյնք էին Աբերդիս և Բայիդ։ Փուշտիպանք վեց
հազար կային յարաժամ ի պահպանութիւն դրանն արքունի,
ի ներքին գայլիճն պալատանն սպաս հարկանէին ստրուկը.
երկոստասան հազար։ Խոկ ի հարձանոցի արքային կէին աղջ-
կունք երեք հազար, գեղեցիկըն ի բովանդակ Ասիայ։ Գան-
ձըն արքայի անհամար, որ էր յոկուց և յարծաթոյ և յա-
կանց առատուականաց, ի ծանրագնի կերպասուց և յանուշա-
հոտ խնկոց՝ պահէր ի նկուզս հարիւր. խոկ ի գայլճին որ
կոչէր Բագավլերդ պահէր պարզեն հոգմոց, որք վանեցին
ընկեցին զտորմիզ նաւացն Ներակդի ի նաւահանգիստ մի
Ըստուց որ էր ընդ իշխանութեամբ Խոսրով, թշնամւոյ
նորա։ Լեզուք զդոմարտք մեծաբանէին առասպելեօք՝ լինել
երեսուն հազարաց վարագուրից և առագաստից պճնելոց ի
զարդ որմոց պալատանն, և սեանց քառասուն հազարաց յար-
ծաթոյ, կամ թերեւս ի մարմարիոնէ ծեփեալ արծաթով, յո-
րոց վերայ յենոյր գմբէթն. խոկ ի ներքոյ կախեալ զդմեր-
թէն հազար գնդից ոսկեզինաց ի նմանութիւն շարժման մո-
լորակաց և նշողից Օռդիակոսին։ Օռյո նկարագիր Վիր-
բոնի (ՔՀ. Խ.Օ) Ու Կ. Պորտէր ի ճահ համարի աւերա-
կացն, զորս եղիս յարեւելից կուսէ Արմանշահի յանուանեալն
Տախտ-ի-Կոստանի, (ամոռ դրախտի)։ Առ ամին ծովակին
Ուրմիայ ընդ մէջ Երասմի և Տիգրիսի է գիւղ մի, որ
անուանեալ կոչի Կաստակերտ։

յեալ Կոստովու պատառեաց զթուղթն՝). զոր իրեւ լուաւ Մահմէտ՝ ազադակեաց «Եյսպէս պատառեացէ Կատուած զթագաւութիւնն Կոստովու և անտես արասցէ զա- զաւանս նորաս: Քանզի մերձ էր Մահմէտ ի ասհմանս պետութեանցն երկոցունց՝ զիտէր ուշի ուշով, որպէս երեւ յերեսներորդ զիլսց Առւրանին, թէ զիարդ վատ- թարէին նոքա զմիմեանս, և գեռ ևս ի ժամանակի յաղ- թութեանցն Պարսից զուշակեաց, թէ զինի ամաց ինչ անցցէ յաղթութիւնն ի կողմն Յունաց:

Յորժամ գարձաւ Ներակլ յաղթանակաւ ի պա- տերազմէն Պարսից՝ ընդ առաջ ել նմա յԱմեսաց գես- պանն Մահմէտի, որ կարգայր առ ամենայն թագաւորս երկրի և ազինս, զի ընկալցին զօրէնս Մահմէտի: Յա- նորոշ պատասխանւոյն Ներակլի ի կարծիս եղին Երա- րացիք, թէ ընկալաւ Ներակլ ի ծածուկ զկրօնս մահ- մէտականաց, վասն այսորիկ և խաղաղութիւնն եղեւ ընդ նոսա առ վայր մի: Եյլ ընդ հուով ի պատճառս սպանման պատգամաւորի միոջ մահմէտականի արշաւե- ցին Երարացիք երեք հաղարք թուով ի Պաղեստին ընդ արեւելս Յորդանան գետոց: Պարշակն սուրբ յանձն ա- րարաւ Օէյիդի. կարգեցան և այլ երկու արք, որք առ առջնորդելց էին զօրուն զինի միմանց, եթէ զիարեր մահու հասանել Օէյիդի. իսկ եթէ գետ լիներ անկա- նել և երկոցունցն վերջնոց՝ ապա առւեալ էր զօրացն հրաման՝ ընտրել իւրեանց զըրավար զո և կամիցին: Եւ արդարեւ անկան ի Ճակատամարտին սոքա երեքեան մի

1) Զէ մարթ գիտել հաւաստեաւ զամն՝ յորում յղեաց Մահմէտ զթուղթս զայս, համակ և զթուղթն առ Ներակլ կայսր նովին իմաստիւ:

զինի միոյ. և զօրավար ընտրեցաւ Կալէդ որ նորոգ ընկալեալ էր զմահմետականութիւնն. ամբարձեալ նորս զբոշակն աղաղակեաց. «մատերուք յառաջ և մի երկրնելք. մեղ կայ յաղթութիւն կամ արքայութիւն»: Յետ յաղթութեանն զոր յաղթեաց քրիստոնէից Կալէդ՝ ընկալեալ անուն յորջորջանաց Սուսեր Աստուծոյ: Օկնի մահուանն Մահմետի Կալէդ ըստ հրամանի Երուրէքրի ասպատակեաց ի սահմանս տէրութեանն Պարսից և քանի մի յաղթութեամբ հարթեաց իւր ճանապարհ ի կողմանս Խփրատայ. այլ առ վայր մի զտեղի էառ յարշաւանաց իւրոց ի Պարսիկս և դարձաւ յԱսորիս՝ առաջնորդել զօրուն Երարացւոց ընդդէմ Յունաց: Խւյայսմ երեկի ճակատամարտին առ Յարմուկ զետով (յամին 634) եղիտնա յաջողութիւնն, զի յաղթահարեաց և հար զՅոյնս սաստկապէս և հարթեաց ճանապարհ Երարացւոց յԱսորիս: Խւյայսմ յիշխանութեանն Օմարսյ յաղթութիւնս բազում տարան Երարացիք. զօրավարն նոցա Երու Օրէյլքա տիբեաց Գամասկոսի, Խփրատայ, Բաալբէկի, Տիբերիյ, Անտիոքայ և Հալէպի: Խսկ այլ բանակ մի Երարացւոց ընդ առաջնորդութեամբ Եմիրի տիբեաց Պաղեստինի: Խրուսաղէմ երաց զդրունս իւր առաջի Օմարսյ:

Ի սմին ժամանակին սկսաւ վերստին գործ պատերազմի ընդդէմ Յաղիերատի Սասանեանց արքայի. և թէպէտ ի սկզբան անդ ու յաջողէր մարտն Երարացւոց՝ այլ յետոց ընկալան զյաղթութիւնն երեկի առ Աադեսեաւ (յամին 635 կամ 636), յետ որոյ անցին Երարացիք ընդ Խփրատ գետ և առին զՏիբուն զաթուանիստ քաղաք Սասանեանց, և հիմն եղին երկուց քաղաքաց նորոց Բասրայի և Առջայի առ ի սահմանութիւն

աշխարհին։ Եւ թէպէտ աշխատ եղեւ Յաղկերտ ի քանի
մի նուազս զգէմ ունել արշաւանին՝ այլ ոչ յաջողէր
նմա, մինչեւ ուր ուրեմն ի ճակատամարտին առ Նէշա-
վինդիւ խորտակիհալ և պարտահալ զինովին՝ ճեպեաց ի
փախուստ, և Արաբացիք յառաջեցին մինչեւ ցԱպահան,
զոր առեալ աւերեցին. ապա ի սուզ ինչ ժամանակի տի-
րեցին գամ քամ զգամ ամենայն զաւառացն Պարսկաս-
տանի ի հարաւոյ կուսէ, այսինքն է Կրմանայ, Անջես-
տանի, Մկրանայ և քաղաքացն Տուսայ, Սարուրի,
Ստահրի, Շիրազի, Դարաբջերզի և այլոց Իսկ ի հեռ-
սիսակողմն Պարսկաստանի աիրեցին ափանցն Ասապից
ծովուն, Թաքարիստանի, Ֆորջանի և Սարպատականի,
և յարեելս կըսյ ամենայն զաւառացն մինչեւ ցափունս
Սմու Գարեայ գետոյն։ Սակաւ մի յետոյ այն է յամս
640—641 Սմր իրնել-Ղաս նուածեաց զԵրիպոսս
հանգերձ քաղաքաւն Սղէքսանզրի և հուսպ ի Մեմփիս
հիմն էարկ նորոյ քաղաքին Գոստատոյ, որ զարդիս կո-
չի Գաւհիրէ։ Արշաւեաց Սմր անտի յարեմուստ և ընդ
իշխանութեամբ իւրով արար զբարբարիկոս ժողովուրդս
հիւսիսակողմանն Ափրիկէի։ Այլ և յետ մահուանն Օ-
մորոյ յամին 644 ոչ ինչ զկայ առին յաղթութիւնք և
ափրապեատութիւնք Արաբացւոց։ Առ ամփրապետան Օթ-
մանաւ որդւով Աթֆանի Մոււաւիք որդի։ Արու-Առ-
ջեանի, որ ազգակիցն էր նորա՝ զինու զօրութեամբ էառ
ի Բիւզանզիոյ քաղաքս քանի մի ի Փոքրն Սախա և զԱր-
բեակ կզզէ։ և Արգուլայ որդի Սասպայ որ եկաց փո-
խանակ Սմրի՝ ընդարձակեաց զիշխանութիւնն Արաբա-
ցւոց յԱփրիկէ և ևս յարեմուստ։ Սարպատական և Թա-
քարիստան, Ֆորջան և Կրման, որք ապստամբեալն է-
էին զայսու ժամանակաւ՝ ընդ հուսպ նուած եցան ան-

զբէն: Օկնի Օթմանայ (վախճ. 656) և յաջորդին նորա
Ալեայ (վախճ. 661) դամիրապետութիւնն կորդէաց տունն
Օմմայեանց, որոց իշխանութիւն ձգեցաւ մինչև յամի
132 ըստ Հեջիբի (ամ S. 750): Այս են անուանք ըս-
րկառասան ամիրապետացն յՕմմայեան տանէն.

1) Մուաւիա Ա. որդի Երու-Առջեանի իրն Ումեյի,
ըստ Հեջիբի յամս 41—60, (ամք S. 661—680).

2) Եղիղ Ա. որդի Մուաւիայ, յամս 60—64, (680—
683).

3) Մուաւիա Բ. որդի Եղիղի, ամիսս ինչ յամին
64, (683).

4) Մրուան Ա. որդի Էլ-Ասկէմի, յամս 64—65,
(684—685).

5) Արդ-Մելլք որդի Մրուանայ, յամս 65—86,
(685—705).

6) Ա-ալեք (Ա-ալեթ) Ա. որդի Արդ-Մելլքի, յամս
86—96, (705—715).

7) Առելյաման որդի Արդ-Մելլքի, յամս 96—99,
(715—717).

8) Օմար որդի Արդ-Եղիղոսյ, յամս 99—101,
(717—720).

9) Եղիղ Բ. որդի Արդ-Մելլքի, յամս 101—105,
(720—724).

10) Հեշամ որդի Արդ-Մելլքի, յամս 105—125,
(724—743).

11) Ա-ալեք Բ. որդի Եղիղի, յամս 125—126,
(743—744).

12) Եղիղ Գ. որդի Ա-ալեքի, ամիսս իրու 6, յամին
126, (744).

13) Երբահիմ որդի Առալիկի, յամս 126—127,
(744—745).

14) Մրուան Ռ. որդի Մահմետի, յամս 127—132,
(744—750).

Առ Առալիկաւ Ա. սահմանկը իշխանութեանն ամի-
րապեաց ընդպարձակեցան առաւել յօյժ մինչեւ ի ծագս
լրութեան իւրեանց, զի յարեելս կըս ձգէին մինչեւ
ցՔաշդար և ց՛Նդիկս, իսկ ընդ արեւմուտս զօրացն
Երաբացւոց նուածեալ զամենայն հիւսիսակողմն Եփ-
րիկայ՝ անցին անտի ի Ապանիտ ընդ նեղուցն, որ ա-
նուամբ զօրավարին նոցա կոչեցաւ յայնմշեաէ, և տի-
րեցին Պիրենեան կիսակիզլոյն Խւ թէպէտ բազում
ձգամբք դշեա եղեն արեւմուան Գութք հալածել զնո-
սա՝ այլ յաղթահարեցան յարիւնահեղ ճակատամարտի
անդ առ Վէրէսու զը լա Փրոնտէրայ յամի Տեսան
711-րդի, յիտ որց մեծագոյն մասն Ապանիոյ անկաւ
ընդ իշխանութեամբ Երաբացւոց: Կամէին Երաբացիք
նուածել և զՊազդիա աշխարհ, յօր արշաւեալ էր նոցա
ի քանի մի նուազս բազմաձեռն զնդոք, այլ ու ժամանե-
նեցին ի լրումն կամաց իւրեանց, զի յամին 732-րդի առ
ամիրապեատաւն Հեշմաւ եհար զնոսա սաստկապէս Կա-
րոլոս մականուանեան Կառն (Մարտէլ) առ երի Տուր
քաղաքին. և յայնմշեաէ դադարեցին արշաւանկը նոցա
անդը ևս յաշխարհս Խւրոսպից:

Ի ժամանակս իշխանութեան վերջնոյ ամիրապեատին
յՕմիսյեան տանէ Մրուանայ Ռ. յարեան ի պիտու-
թեանն խռովութիւնք և երկաստակութիւնք, որոց հե-
ղինակք էին մանաւանդ սերունդք Երբասայ հօրեղբօրն
Մահմետի, որք խռովէին զժողովուրդն ընդդէմ տանն
Օմիսյեանց, թէ բոնաբար կորպէալ իցէ նորա զաթոռ

զրէն: Օ-կնի Օթմանայ (վախճ. 656) և յաջորդին նորս
Ելեայ (վախճ. 661) զամիրապետութիւնն կորզեաց տունն
Օմիսյեանց, որոց իշխանութիւն ձգեցաւ մինչեւ յամին
132 ըստ Հեղերի (ամ S. 750): Այս են անուանքը չո-
րեքտասան ամիրապետացն՝ Օմիսյեան տանէն.

1) Մուաւիս Ա. որդի Աբու-Առջեանի իրն Աւմէյի,
ըստ Հեղերի յամն 41—60, (ամք S. 661—680).

2) Եղեգ Ա. որդի Մուաւեայ, յամն 60—64, (680—
683).

3) Մուաւիս Ի. որդի Եղեգի, ամիսս ինչ յամին
64, (683).

4) Մուուան Ա. որդի Էլ-Հակիմի, յամն 64—65,
(684—685).

5) Արքլ-Մելկը որդի Մուուանայ, յամն 65—86,
(685—705).

6) Ա-ալեք (Ա-լիթ) Ա. որդի Արքլ-Մելկի, յամն
86—96, (705—715).

7) Առլ-յամն որդի Արքլ-Մելկի, յամն 96—99,
(715—717).

8) Օմար որդի Արքլ-Եղեղայ, յամն 99—101,
(717—720).

9) Եղեգ Ի. որդի Արքլ-Մելկի, յամն 101—105,
(720—724).

10) Հեշամ որդի Արքլ-Մելկի, յամն 105—125,
(724—743).

11) Ա-ալեք Ի. որդի Եղեգի, յամն 125—126,
(743—744).

12) Եղեգ Վ. որդի Ա-ալեքի, ամիսս իրուհ 6, յամին
126, (744).

13) Կըսաշիմ որդի Պալեղի, յամն 126—127,
(744—745).

14) Արուան Ռ. որդի Մահմետի, յամն 127—132,
(744—750).

Առ Պալեղաւ Ա. սահմանք իշխանութեանն ամի-
ւապեաց ընդարձակեցան առաւել յցժ մինչև ի ծագս
Առութեան իւրեանց. զի յարեկը կցս ձգէին մինչև
յ՛Քաշգալ և յ՛Նդղիկս, իսկ ընդ արեմուտս զօրացն
Երաբացւոց նուածնեալ զամենացն հիւսիսակողմն Ափ-
րիկայ՝ անցին անտի ի Ապանիս ընդ նեղուցն, որ ա-
նուամբ զօրավարին նոցա կոչեցաւ յայնմշետէ, և տի-
ւցին Պիրենեան կիսակզղւցն: Եւ թէպէտ բազում
ճգամբք զհետ եղեն արեմուեան Գութք հալածել զնո-
սա՝ այլ յազթաշարեցան յարիւնաշեղ ճակատամարտի
անդ առ Վերեսաւ զը լս Թամնտէրայ յամի Տեառն
711-րդի, յիտ որոյ մեծագոյն մասն Ապանիոյ անկաւ
ընդ իշխանութեամբ Երաբացւոց: Աամեին Երաբացիք
նուածնել և զՊազզիա աշխարհ, յոր արշաւեալ էր նոցա
իքանի մի նուազս բազմաձեռն զնդօք, այլ ոչ ժամանե-
նեցին ի լուսն կամաց իւրեանց. զի յամին 732-րդի առ
ամիբապեատն Ճեշմաւ եշար զնոսս սաստկապէս Աա-
րոլոս մականուանեալն Առան (Մարտէլ) առ երի Տուր-
քաղաքին. և յայնմշետէ զադարեցին արշաւեանք նոցա
անդը ևս յաշխարհս Եւրոպիոյ:

Ե ժամանակս իշխանութեան վերջնոյ ամիբապեամին
յՕմիայեան տանէ Մրուանայ Ռ. յարեան ի պետու-
թեանն խռովութիւնք և երկպառակութիւնք, որոց հե-
ղինակը էին մանաւանդ սերունդք Երբասաց հօղեղրօնն
Մահմետի, որք խռովիչին զժողովուրդն ընդգէմ տանն
Օմիայեանց, թէ բռնաբար կորզեալ իցէ նորս զաթոս

ամիրապիսութեանն: Վշուխ եկաց երկպառակելոցն Մահմէտ իրն Ելի թռոնորդի Երբասայ, որ իրմէ ծանեաւ եթէ ընդ ամենայն ծագս պիտութեան տիրեն ազմուկը շփոթից՝ յայտնի ապստամբեաց ի Մրուանայ. զհեանորա յարեցան բազումք, մանաւանդ որպէ ի գաւառս Պարսկաստանի, և որ բար օրէ յաւելցըր թիւ համախուցից նորա: Երու Մալիմ գործակիցն Մահմետի հալածեաց զհրամանատար ամիրապիտին ի Կորասան աշխարհէ և ամբիեց Մէրփի, որ եր քաղաքամայր Խորասանայ: Իսկ այլ մասն զօրուն Երբասեանց իմնւայ Ելրակ և տիրեալ Առվիայի հռչակեաց ամիրապիտ զԵրուլ Երբաս բէն Մահմէտ: Ես Օար գետով պարտեցաւ Մրուան յԵրբասեանց, որով վտանգեցաւ իսպառ իշխանութիւն տուհմին նորա. զի և Դամասկոս յետ պարտութեանն ապստամբեաց ի Մրուանայ, որ փախեաւ յԵղիպտոս, յորում և սպանաւ յամին 750-րդի: Ի տանէն Օմմայեանց, զոր սպառ սպուռ ջնջել խորհեցան Երբասեանք՝ ապրեցաւ թող զայլ և Երգեռ-Ռահման, որ յամին 756 մեկնեցաւ յԱպանիա և Հիմն եղ անկախ իշխանութեանն, որ կոչեցաւ ամիրապիտութիւն արեւմուեան Օմմայեանց:

ՅԵրուլ-Երբասայ սկիբըն առնուն ամրապիտել ամիրապիտը յԵրբասեան տանէ, որոց այս են անտւանք.

1) Երուլ-Երբասս էս Սաֆֆախ, որդի Մահմետի, ըստ Նէջերի յամն 132—136, (աճք Տ. 750—754).

2) Երուլ-Պաֆար (Պափր) էլ-Մանսուր, որդի Մահմետի, յամն 136—158, (754—775).

3) Մահմէտ էլ-Մէջդի, որդի էլ-Մանսուրի, յամն 158—169, (775—785).

4) Մուսա էլ-Պագի, որդի էլ-Մէջդիայ, յամն 169—170, (785—786).

5) Հարուն Էռա-Ռաշիդ, որդի Էլ-Մէհեմայ, յամա
170—193, (786—809).

6) Մահմէտ Էլ-Սմին, որդի Հարունայ, յամա 193—
198, (809—813).

7) Արդուլլահ (Արդայ) Էլ-Մամուն, որդի Հարուն-
այ, յամա 195—218, (810—833).

8) Արու-Իսհակ Մահմէտ Էլ-Մուտասիմ-Բիլլահ,
որդի Հարունայ, յամա 218—227, (833—842).

9) Արու-Գափար Հարուն Էլ-Աստէկ-Բիլլահ, որ-
դի Էլ-Մուտասիմի, յամա 227—232, (842—847).

10) Արու-Գափար Գափար Էլ-Մութէվէկիլլիլ Ալհալ-
լահ (Մոթաւաքէլ), որդի Էլ-Մուտասիմի, յամա 232—
247, (847—861).

11) Արու-Գափար Մահմէտ Էլ-Մունտասիր-Բիլ-
լահ, որդի Էլ-Մութէվէկիլլիլ, յամա 247—248, (861—
862).

12) Արու-Արբաս Աշմէտ Էլ-Մուտասային-Բիլլահ,
որդի Մահմէտի, յամա 248—252, (862—866).

13) Արու-Արբալլահ Մահմէտ Էլ-Մուտէղ-Բիլլահ,
որդի Էլ-Մութէվէկիլլիլ, յամա 252—255, (866—869).

14) Արու-Արբալլահ Մահմէտ Էլ-Մուկսեղի-Բիլ-
լահ, որդի Էլ-Աստէզի, յամա 255—256, (869—870).

15) Արու-Արբաս Աշմէտ Էլ-Մուտամիդ-Ալհալլահ,
որդի Էլ-Մութէվէկիլլիլ, յամա 256—279, (870—892).

16) Արու-Արբաս Աշմէտ Էլ-Մուտաղիդ-Բիլլահ,
որդի Էլ-Մութէվէկիլլիլ, յամա 279—289, (892—902).

17) Արու-Մահմէտ Ալի Էլ-Մուկինի-Բիլլահ, որ-
դի Էլ-Մուտաղիդի, յամա 289—295, (902—908).

18) Արու-Գափար Գափար Էլ-Մուկսեղի-Բիլլահ,
որդի Էլ-Մուտաղիդի, յամա 295—320, (908—932).

- 19) Արու-Մանսուլը Մահմետ էլ-Ապղբը-Բիլլահ, որդի էլ-Մուտագիղի, յամս 320—322, (932—934).
- 20) Արու-Արբաս Աշմետ էռ-Աւազի Բիլլահ, որդի էլ-Մուկտազիղի, յամս 322—329, (934—940):
- 21) Արու-Խաչակ Իբրահիմ էլ-Մուտասիկի-Լիլլահ, որդի էլ-Մուկտազիղի, յամս 329—333, (940—944):
- 22) Արու-Ասորմ Արգուլլահ էլ-Մուստեկիղի-Բիլլահ, որդի էլ-Մուկտազիղի, յամս 333—334, (944—946):
- 23) Արու-Ասորմ էլ-Մուֆադդալ էլ-Մուղի-Լիլլահ, որդի էլ-Մուկտազիղի, յամս 334—363, (946—974):
- 24) Արգու-Աերիմ Արու-Բէկիր Էտ-Տայի-Լիլլահ, որդի էլ-Մուտեայ, յամս 363—381, (974—991):
- 25) Արու-Արբաս Աշմետ էլ-Ապղբը-Բիլլահ, որդի էլ-Մուտասակայ, յամս 381—422, (991—1031):
- 26) Արու-Գափար Արգուլլահ էլ-Այիմ բի-Ամրիլլահ, որդի Ապղբը, յամս 422—467, (1031—1075):
- 27) Արգուլլահ էլ-Մուկտազի բի-Ամրիլլահ, որդի Մահմետի իրն-էլ-Այիմի, յամս 467—487, (1075—1094):
- 28) Արու-Արբաս Աշմետ էլ-Մուստազգէր-Բիլլահ, որդի էլ-Մուկտազեյ, յամս 487—512, (1094—1118):
- 29) Արու-Մանսուլ Գաղլ էլ-Մուստարշիղ-Բիլլահ, որդի էլ-Մուստազգէրի, յամս 512—529, (1118—1135):
- 30) Արու-Գափար Մանսուլ էռ-Աւազիղ-Բիլլահ, որդի էլ-Մուստարշիղի, յամս 529—530, 1135—1136):
- 31) Արու-Արգալլահ Մահմետ էլ-Մուկտազի լի-Ամրիլլահ, որդի էլ-Մուստազգէրի, յամս 530—555, (1136—1160):
- 32) Արու-Մուղիղի Կւսուք էլ-Մուստանջիղ-Բիլ-

Համհետ, որդիքի էլ-Մուսկատեֆեայ, յամն 555—566, (1160—1170):

33) Արու-Մահմետ էլ-Շասան էլ-Մուստագի բի-
Էմրիլլահ, որդիքի էլ-Մուստանջիզի, յամն 566—575,
(1170—1180):

34) Արու-Արքաս Աշմետ Էն-Եասըր Լիդին-ալլահ,
որդիքի էլ-Մուստագեայ, յամն 575—622, (1180—1225):

35) Արու-Եասր Մահմետ էլ-Օազէր բի-Էմրիլլահ,
որդիքի Էն-Եասըրի, յամն 622—623, (1225—1226):

36) Արու-Գափար էլ-Մանսուր էլ-Մուստանիլր-
իլլահ, որդիքի էլ-Օազէրի, յամն 623—640, (1226—
1242):

37) Արու-Աշմետ Արգուլլահ էլ-Մուստասիլ-Բիլ-
լահ, որդիքի էլ-Մուստանիլրի, յամն 640—656, (1242—
1258):

Ի սկիզբն աերութեանն Արքասեանց աթոռ իշխա-
նութեանն փոխեցաւ ի քաղաքս քանի մի, որպէս ի Մերփ,
և յնիրար և ի Նաշէմիա. այլ ուր ուրեմն հաստատե-
ցաւ ի Բաղդադ քաղաքի, զոր շնեաց Արու-Գափար էլ-
Մանսօր: Առ ամիրապետաւս այսուիկ մանաւանդ առա-
ւելան ազգեցութիւն և իշխանութիւն Պարսից ի պետու-
թեանն. զի նոքին իսկ էին որք ձեռնտու եղեն տանն
Արքասեանց հասանել յիշխանութիւն, վասն այսորիկ և
լրախտաւորք իմն համարեալ էին նորոյ հարստութեանն:
Իրեւ ամիրապետեաց Նարուն էս-Բաշիդ՝ Խաղաղացոյց
զերկիրն ի պատերազմաց ընդ Խաղարս և ընդ Բիւզան-
դացիս, յաղթեալ երկոցունց, և ձեռն արկ ի ներքին բա-
րեկարգութիւնս աշխարհին իւրոյ, պաշտպան եկաց վա-
ճառաւականութեան և արուեստից, կունաց առ ինքն զա-
կանուոր գիտունս ժամանակին իւրոյ, և այնպէս քաջա-

Երեր զքերթողս և զզիտունս՝ մինչեւ ժառանդել նման
անուն մեկնասի արեւելից: Ըստ սյամ յեղանակի վա-
րեցան և յաջորդքն նորա էլ-Ամին և էլ-Վամուն, յորոց
երկրորդն սիրող էր և վարդապետութեան գենին մաշ-
դղանց: Կարգեաց նա իւր իշխանակից և յաջորդ զԱլի
որդի Վուսայի ի սերնդոցն Ալեայ, որպէս զի այսու զա-
դարեացին ի քրթմնջելոյ Ալեանք, որք պնդէին յար, թէ
իւրեանց իցէ աւագ իշխանութիւն ի պիտութեանն ըլլա
կրծից: Այլ համախոհք և ազգակիցք նորին իսկ Վա-
մունի յուղեցան ընդ այս և ապստամբեալ ի Վամունայ
եղին իւրեանց ամիրապետ ի Բաղդադ գԵրբահմամ որդի
էլ-Վէհղեաց: Բնդ լուր համբաւոյս այսորիկ փութացաւ
եկն Վամուն ի Վերգ քաղաքէն ի Բաղդադ և օգնու-
թեամբ Տաղերի զօրավարին իւրոյ ընկեց յաթոռոցն զԵր-
բահման ընդ հուզ մեռաւ և Ալի իբն-Վուսայ: Յետ
չարունայ յարեան անդրէն ներքին երկպառակութիւնք
և պատերազմունք յաղագս իշխանութեանն՝ ընդ էլ-Վա-
մուն միտեալն ի Պարսիկս և ընդ էլ-Ամին կուսակիցն
Արաբացւոյ, որ պարտեալ անկաւ ի պատերազմի: Յետ
Վամունի նստաւ յաթոռ եղբայր նորա էլ-Վուստամիմ,
որ զառաջնն ընտրեաց իւր թիկնապահս յաղատաղիք
զերեաց ի աաճիկ աղդէ, որք ապա կարի վտանդեցին
զպետութիւնն:

Ամիրապեան էլ-Վաստէկ-րիլլահ որդի Վուստամիմի
ընդ ամենայն ժամանակս իշխանութեան իւրոյ, որ ամս
5 ձգեցաւ՝ զհետ եղեւ միայն կրօնական խնդրոց և հա-
լածէր ուժգին զայնոսիկ, որք ոչ ըստ մտաց իւրոց խոր-
հէին ի հաւատոյս: յաջորդն նորա Վուստամիլ հա-
մարձակ հալածէր զԵրէայս և զքրիստոնեայս ի պիտու-
թեան իւրում, այլ և կարի նեղէր զառհմն և զհամա-

Խոհանոց: Յամին 850-րդի գործ յօյժ լիսասակար դործեաց Մոթաւաքէլ զի զամենայն աշխարհս իշխառ նուբթեանն իւրոյ բաժանեաց որդւոց իւրոց երեցունց. անդրանիկանն իւրում Մահմետի և ի ժառանգութիւն զգաւառս Սվիրիկէի, զհիւսիսակողմն Սորուոց և Միջակիսաց, զԻրակ, զԱնդ, զՄկրտի և զՂզուազ: Երկրորդին, որում անուն էր Տալիս՝ յանձն արար զԻորասան, զԹարարիստան, զԱհել, զՄարտատական, զՀոյս և զՊարսիկս. նմա հաւատաց յամին 854-րդի զաւադ իշխանութիւն ի վերայ արքունի գանձուն և զտեսութիւն ի վերայ ամենայն տանց զրամահատութեան, և ևս նմա իրաւունս կոխելոյ զանուն իւր ի վերայ գրամց: Եսկ կրտսերն Երբահիմ ընկալաւ վիճակ ժառանդութեան զԽոհմ, զԴամասկոս և զՊաղեստին: Եւ որպէս առ Հարունաւ, որ ձեռնարկեաց բաժանումն այսպիսի՝ անկան երկպատակութիւնք ընդ էլ-Խմին և էլ-Մամուն՝ սցնալէս և առ Մոթաւաքէլիւ յարեան վէճք և խոռոչութիւնք ի տոհմին Արքասեանց, և մինչդեռ պատերազմօք և ներքին շփոթիւք նուազէր գամքան զդամ զօրութիւն ամիրապետացն՝ զօրանային ևս քան զիս ոստիկանք նահանդաց և թօթափեալ յանձնանց զիշխառնութիւն ամիրապետաց՝ լինեին տեսլք (ամիրայք) աշխարհաց անկախիք ի նոցանէ, որպէս Եզրիսեանք, Աղարեանք, Խոշիսանք, Տուլունեանք, Տաղէրեանք, Առֆարեանք, Ասմանեանք, Դէյլէմիաք և այլք: Ամիրապետն էութիւրիլլահ խորհեցաւ սանձահարել զապերասան դնացս սատիկսնաց և սահմանեաց զպաշտօնն կոչեցեալ էմիլ էլումար, որ է ամիրայ աւագագոյն, որում յանձն արար զվարչութիւն համօրէն գործոց զինուորականաց և քաղաքայնց: Այլ այս սահմանագրութիւն նորա ոչ

ինչ օգտեաց ի բարեկարգութիւն զործոց պետութեանն,
այլ մանաւանդ և ևս փութացոյց զվախճան իշխանութեան
ամիրապետաց. զի յայնմշետէ մեծաւ ջանիւք
զհետ լինէին արք իշխանասէլք կորզել ի ձեռս բերել
զպաշտօն էմիր էլութմարութեան, և ընկալեալ զայն՝ վարելին
զամենայն զգործս պետութեանն անձնիշխանութեամբ յամենայնի, թողեալ ամիրապետացն միայն զիշխանութիւնն ի խնդիրս կրօնից:

Նուսի ուրիշն առ ամիրապետութեամբն էլ-Մուստասիմի արշաւեցին Մողոլք ի սահմանս պետութեանն
Սրաբացւոց և յամի Տեառն 1258-րդի առին զիազդագ
քաղաք և սպանին զէլ-Մուստասիմ, որով բարձաւ տերութիւնն Սրբասեանց, և կործանեցաւ ամիրապետութիւնն արևելեան:

Ե.

Սրուեստ բանաստեղծութեան, որ ի մեծի պատուի
էր առ Սրաբացիս անդստին ի վաղեմի ժամանակաց հետէ՝
յետ մուծման կրօնիցն Մահմետի և ևս բարդաւաճեցաւ:
Ասհմանեցան կանոնք յաղագս յանդաց, վանկից և ամառնակաց. մուծան ի քերթուածս նոցա նմանաձայնութիւնք
ձարտասանականք, բռնազրոս աւարտք յանդաց և սկրուածք և այլ բաղումներութիւնք արտեստաւորք: Ասեկայն որչափ առաւելան քերթողական երկք ի վերջին ժամանակի ըստ արտաքին ձեռոցն վայելչութեան և ըստ
դիւրալուր հեշմանն՝ այնքան պակասեցին ի նոսա աւիւն քերթողական և ողին աշխոյժ, որպէս էլն նախ քան զժամանակս Մահմետի: Ի բաղում քերթողական զրուածոց արաբացի գպրութեանն արժան է յիշատակիլ զերե-

ւելի մատեանն առակաց կուցեալ Հաղար և մի զիշերք,
որ թարգմանեալ է յամենայն լիուուս Եւրոպացւոց, վի-
պասանութիւնքն Հարիւրեայ և առակըն Լոխմանի,
որք մինչեւ ցայսօր յեղյեղին ի բերանս ժողովրդեան մերոյ:
Եյլ և Առւրանն բովանդակ զրեալ է յանդաւոր արձակ
բանիւք. և նու վայրք ի նմա վսեմք, մանաւանդ ի նկա-
րազրի անդ վերջն դատաստանին և տանջանացն ի
գժոխս:

Եյլ մանաւանդ առ Պարսիկս ծաղկեցաւ արուեստն
քերթողական յետ մոտանելոյ նոցա ընդ իշխանութեամբ
Երաբացւոց և յօրէնս նոցա: Հոչակեալ նու ընդ ամենայն
աշխարհ վէպքն հնցն Պարսկաստանի, կուցեալ Գիրք
Թագաւորաց (Կահնամէ), զոր զրեաց Փիրուուսի (վախճ.
յամին 1030), Բուրաստանն վարդից (Գիւլիստան) և
Տիկոցն (Բոստան) Սաազեայ (1189—1291), և հրդքն
սիրոյ և իրախճանաց մեզուաշուրթն Համբիսի (վախճ.
յամն 1389—94), Քերթուածքն Յամեայ (վախճ. յամին
1492) և այլ բարում զրուածք առակաւորք, վէպք և
պատմութիւնք, յորոց սակս աշխարհ բանաստեղծից անկ
է կուել զՊարսկաստան:

Ծնդ ամել իշխանութեանն Երաբացւոց, յորժամ ի
հազորդութիւնս մտին Երաբացիք ընդ Բիւզանդացիս,
և մանաւանդյաւուրց անտի Օմմայեանց, իբրև փոխեցաւ
աթոռ իշխանութեանն ի Դամասկոս՝ զիտութիւնք և ա-
րուեստք կարի յառաջեցին առ նոսա: Ի սկզբան անդ
հրահանգիչք Երաբացւոց էին ճարտարքն և զիտունք
Բիւզանդացւոց, զորս կուէին ամիրապետք ի Դամասկոս
էր զոր ի կառուցանել նոցա ապարանս հօյակապս, էր
զոր ի վերատեսչութիւն գանձուց և զայլս պաշտամամբ
բժշկութեան: Եյլ մահմետականաց Երաբացւոցն ու-

սեալ ի նոցանէ՝ ի սուզ ժամանակի գերազանցք եղեն
քան զվարդապիտու իւրեանց յարուեստու այլ մանաւանդ
ի զիտութիւնս: Եստ սկիզբն եղեւ նորոյ ձարտարապե-
տական ոճոյն, որ կոչի Երարացի-Ռիւզանդական, որոյ
յատկանիշք են սիւնքն վայելատեկ թեթեք, և բաղ-
մութիւն ծագանկար զարդուց: Գիտունքն Ռիւզան-
դացւոց հիմնեցին ի Դամանակոս Ճեմարանա, յորս աւան-
դէին զարուեստ ուսողութեան և զբժկութեան և զրբ-
նական զիտութիւնս: և առ ի զիւրել զուսումն սոցա՝
թարգմանեցին ի յունէ յարարացի լեզու զմատեանսն,
որք Ճառէին զայսոցիկ զիտութեանց, ուսուցանէին ի
Ճեմարանսն նաև զիւլսովայութիւն, զզիտութիւն լե-
զուաց և զքերականութիւն, որ կարեւոր յշյժ էր վասն
լեզուին Երարացւոց: Յեայ ժամանակաւ մուծաւ և
աստուածաբանութիւն ըստ հաւատալեացն մահմանա-
կանաց, որ պատճառք եղեւ ծագման հերձուածոց և
աղանդոց ի կրօնս նոցա: Եռ մահմատականս ի Դամաս-
կոս, ի Ռազզատ, ի Ապանիա և ի Պարսս ծաղկեցան մանա-
ւանդ զիտութիւնքն ուսողականք, այնէ ասանեղաբաշխու-
թիւն, տարբարանութիւն, ուսողութիւն և աշխարհա-
զրութիւն ուսողական. զասանորդական ոճ զրու-
թեան թուոց, որով վարի սյսօր աշխարհ ամենայն՝
զառաջինն ի կիրառութիւն մուծին Երարացիք, առեալ
ի Նորդկաց. նոքին իսկ եղեն հեղինակք հանրահաշուին,
որ մինչեւ ցայսօր առ Եւրոպացիս անուանի արարացի
բառիւ Ելջերաց: Ի Ռազզատ, ի Ամրզանդ, ի Ռուխա-
րայ և ի Ներագ էին Ճեմարանք և մատենագարանք և
զիտանոցք, յորս զննէին զշարժմունս երինացին մարմնոց
և պարապէին յաստեղաբաշխութիւն: Երու Աշհան ընդ
համօրէն միջին դարս առաջին համարեալ էր զիտուն

յաստեղաբաշխութեան, յուսողութեան և յաշխարհապութեան: Յամին 1080-րդի զառաջինն հաշուեաց Օմար Քէյան զերկարութիւն տարւոյն կարի ճշգրտութեամբ: Քարտէպն երինից և մասանց տշխարհի, զորս յօրինեցին զիառունք Երաբացւոց ի Ճ և ի ՃԱ գարս՝ ի պատուի մեծի էին՝ առ Խւրոպացիս մինչև ցդարսն ՃԵ և ՃՕ. իսկ յօրինեալքն ի Ամրդանդ ի Պարսից լեզու՝ մինչև յայտօր ժամանակի օգտակարք են զիանոց: Այլ ոմանք ի զիանոց նոցա մոլորեցան յաստեղաբաշխութենէ յաստեղազիտութիւն, այսինքն է ի գուշակութիւն սպասնեաց ըստ շարժմանց երկնային մարմնոց, և ի տարբազիտութենէ յալքիմիա, որ է սուտ արշեատ բազարելոյ զոսկի: Ի բնական զիտութեանց ծաղիեալ էր ի նոսա բնազիտութիւն, մանաւանդ մասն մի նորա, որ կոչ լոյս և տեսութիւն. իսկ ի բժշկական զիտութեանց՝ զեղաբանութիւն և անդամագնիութիւն, ի պէտս որպ յօշէին զիտունք նոցա զզիտակունս մեռելոց և զննէին, թէպէտ և արգելուն զայս կրօնք մահմետականաց: Վաթէպէտ և արգելուն զայս կրօնք մահմետականաց: Մատեանն կոչեցիալ Տարերք բժշկական զիտելեաց, զոր զըրեաց Եվլիցիննա (վախճ. յամին 1037) թարգմանեցաւ ի Լատին լեզու և յընթացս քանի մի գարուց էր դասաւորք յազարդս աւանդելոյ զզիտութիւն բժշկութեան: Այլ և արուեստն երաժշտութեան բարգաւաճեցաւ կարի ի նոսա, յորոց առեալ ասեն, եմոյծ յԽւրոպա զիերսութիւն երաժշտական խաղից Գիլդյ Երեցցոյ ի ՃԱ գարուն:

Քան զամենայն մատեանս Յունաց ի պատուի էին՝ առ Երաբացիս մատեանքն Երիստուէլի փիլիսոփային, զորս թարգմանեցին յարաբացի լեզու և զրեցին բազում դիրս մեկնութեանց ի վերայ նոցա, մանաւանդ մեծ

Փիլիսոփիայն Արարացւոց իրն Ոռջ, որ հասարակօրէն
կոչե Ավելրոյէս (յամ 1105—1198):

Օ.

Ե սկիզբն աշխարհակալութեանցն Արարացւոց Նայ-
ասան աշխարհ բաժանեալ էր ընդ երկոսին պետու-
թիւնս սահմանակիցս, ընդ Դիւզանգացիս ասեմ և ընդ
Պարսիկս, որոց նոյն սահմանք էին ի Նայս, որք հաս-
տանեցանն ընդ Վօրիկ կայսր և Խոսրով Ռ. Փարվէզ¹⁾,
և նորոգեցան անդրէն առ Ներակլիւ²⁾):

Յորմամ ասպատակեցին Արարացիք ի Պարսիկս՝ ո-
մանք ի նախարարայն Նայոց իւրաքանչիւր այրուձիովք
չողան ի թիկունս օգնականութեան Պարսից, և բազումք
ի նոցանէ անկան ի ճակատամարտի անդ³⁾): Այլ իրրե-
տապալցաւ հիմն ի վեր տերութիւնն Ասսանեանց՝ մասն
մի Նայաստանեայց աշխարհին, որ էրն ընդ իշխանու-
թեամբ Պարսից, որպէս Վասիացոան և Արազածոտն,
Դուին և այլք ևս յարեկլս կոյս՝ առժամանակ մի եղին
ինքնիշխանք, կամ որպէս Ճահ ևս է ասել բանիս՝ ան-
իշխանք, և անմիաբան լիալ ամենայն աղատացն՝ կորու-
սին զերկիրս Նայոց (Սեր. Էջ 103): Ո՞րիայն իշխանն
Ոշտունեաց Թէոդորոս ըստ իւրոյ քաջ իմաստութեան
խնամ ածէր աշխարհին իշխանութեամբ զօրավարու-
թեան, և զգուշանայցր սահմանաց նորաւ Այլ ընդ հուա-
յարեան ասպատակքն և արշաւանք Արարացւոց յեր-

1) Տես զսահմանսն առ Յովհ. Կաթ. յէջ 87—88,

2) Աերէսս, Էջ 101:

3) Աեր. յէջ 103, 107:

կիրա Հայոց, որ քանզի նուազեալ էր յուժոյ վասն ներքին երկպառակութեանց և ապականարար պատերազմացն ընդ միմեանս Յունաց և Պարսից՝ ոչինչ կարաց զգէմ ունել մահմատական հրոսակացն, որք զային ի յաղթել կամ ի մեռանել:

Օսկիզբն արշաւանաց Երաբացւոց տարբեր ի միմանց աւանդին մատենագիրք մեր, որք մերձաւորքն են ժամանակաւ իրացն եղելոց, որպէս Սերէոս, Պեռնդ և Յովհան Մամիկոնեան: Պերջինս այս դնէ զառաջին արշաւանս Երաբացւոց ընդ կողմն Տարօնոյ, որ չիք առ Պեռնդի և առ Սերէոսի. Պեռնդ դնէ զառաջին ելու Երաբացւոց ի Հայս Ճարպատական կողմանէ, որ չիք նոյնպէս առ Սերէոսի. այն ինչ զարշաւանսն, յորում ունին Երաբացիք զԴութին՝ ունին և Սերէոս և Պեռնդ և ամենայն պատմազիրք յետնոցա, որպէս և զմիւս արշաւանսն, յորում յերիս առաջս բաժանեալ զնդին թըշնամեաց աշխարհին: Այլ զիարդ և իցէ՝ որպէս մեքս հաւանեալք եմք՝ համօրէն այսոքիկ երք Երաբացւոց՝ ասպատակք հինից և եթ էին, որք զային հարկանէին զաշխալչն և առեալ զաւար և զգերութիւն՝ դառնային անդրէն յետս, առանց հարկեցուցանելց զայս կամ նուաճելց զնոսա ընդ իշխանութեամբ իւրեանց: Նուառութին Հայաստանեայց ընդ իշխանութեամբ Երաբացւոց և սկիզբն հարկատուութեան նոցա՝ ըստ կարծեաց մեր յետոյ քան զմահն Խոսրովու Ռ. (վախճ. յամին 628) առաջնորդութեամբ Երգուահիմայ քեռորդւոյն

Սապատակն առաջին Երաբացւոց ըստ վկայութեան Յովհաննու Մամիկոնենի (յէջ 57—58) եղել ութ ամք յետոյ քան զմահն Խոսրովու Ռ. (վախճ. յամին 661—661: ըստ եղել յետ ասպատակացս այսոցիկ, յամն 651—661:

Մահմետի, որ ութեատասն հաղարօք զօրաց ևին ևմուտ
ի Տարօն և պահանջեաց հասուցաննել նոցա հարկս:
Ամանք ի նախարարացն այսոց ևին ի կուն Տիրանայ
տեառն Մամիկոնէից, և եղեւ թիւ գնդին այսոց իրը
ինն հաղար զօրաց, որք թեալէտ և նուազազոյնք էին
քան զթշնամիս, այլ ոչինչ թուլացեալ ևին ընդդէմնու
ցա և փոքր միւս ևս և պարտէին զնոսա. այլ Աահուռ
իշխան Ենձաւացեաց զօրու իւրով ելիք զզունդն այս-
ոց ի պահուն յորժամ ի զժիու գայր ևլք պատերազ-
մին, որով բեկաւ զօրու թիւն գնդին այսոց: «Տեսիալ
Տիրանայ թէ ամենայն ինչ ի վերջ հասեալ է՝ յարձակե-
ցաւ ի ներքս, լաւ համարելով մեռնել քան տեսանել
զեկեղեցին Եսաուծոյ հարկատու լեալ Տաճկաց, և պա-
տառեալ յերկուս զազմն՝ պատահեցաւ Աահուռայ և
ասէ, «կաց, ուրացեալ Աահուռ, զի ըմբռնեաց զքեզ
Վրիտառս ի ձևս իմն և ձգեաց զզունին Աահուռայ, և
ինքն անդէն պսակեցաւ երկու իշխանօքն: Իսկ Երգուա-
հիմ անցանէ ընդ ապք ի բասեան և ի Պահանդէ և
առեալ հարկս գառնայ ի Տաճկատան:

Դեսնդ (էջ 7) և ըստ նմանէ Եսողիկ (էջ 120)
պատմեն զայլ իմն ասպատակէ, թէ յիս աւարելոյ զաշ-
խարհն Պարսից և բառնալոյ զթազաւորութիւնն Աա-
սանեանց մեծ մասն զօրուն Կրաքացւոց հատեալ առ-
պատակէին յաշխարհս այսոց ընդ կողմն Պարսից և յա-
ւարի առնուին զաւանս Մարաց, զզաւառն Գողթն և
զդաստակերտն նախջաւաննու ապս անցուցանէին զա-
ւարին և զգերիս ընդ գետն Երասիս առ Քառապայով, զորս
մասն մի զօրուն առեալ տաներ յաշխարհն իւրեանց. իսկ
միւս մասն խազաց և ևս յարեմուսս կըս ի սահմանս
իշխանութեանն Յունաց ի վերաց Պառկոսի զօրավարին

Յունաց, որ բանակեր ի Առգովիտ: ԵԱՀ յուղւոցն յանհկարծակի եհաս ի վերայ նոցա Թէ՛օդորոս Ուշունի հանդերձ զօրուն իւրով և գարանամուտ եղեալ կոտորհաց զքաղումն ի թշնամեաց, և ինքն առեալ զկապուտ անկելոցն մեկնեցաւ ի Պոոկոպէ և զնաց ի Գառնի: Իսկ զօրուն Երարացւոց զիմեալ յառաջ՝ հարին սաստկատէս զՊոոկոպ, և ժողովեալ զառ և զկապուտ բանակին Յունաց՝ գարձան յաշխարհն իւրեանց: Զէ յայտնի սառուզիւ ժամանակ այսր սասպատակի, զի ամի քսան երկրորդ իշխանութեանն Երու-Բէքըրի Օմարայ և Օթմանայ, յուրում զայն զնեն Պեռնդ և Սաողեկ չէ մեկին և իմանալի մինչեւ ցայսօր, զի ոչ զիտեմք թէ զըր ամի թուականութեանս մերոյ համարի Պեռնդ առաջին ամ իշխանութեան նոցա:

Յերկրոսին յայսոսիկ սասպատակս, յորոց առաջինն ի հարաւոյ մուծեալ ի Նայս, ի զաւատէն Տարօնոյ ընդ հիւսիս ձգեցաւ մինչեւ յ՛ւասին և անափ յարեկլս մինչեւ զՊանանդ, և երկրորդն ի Պարսից մարզէն ձգեցաւ յարեմուտս հիւսիսոյ՝ ոչ ժամանեցին Երարացիք ի Պուլին սատանն Նայոց. ի ժամանակին, այլ մերձեցեալ ի նա՝ յեսս ընդ կրունին գառնային: Իսկ երկրորդ սասպատակ յեսս զրեա թէ ամենայն մատենագիրք մեր, Պեռնդ (Էջ 9), Սաողեկ (Էջ 120), Յովհաննէս կաթողիկոս (Էջ 105), Ամանուէլ Ենեցի և մանաւանդ Աերէսս հանգամանօրէն (Էջ 108—109) ձգեցաւ մինչեւ ի Պուլին քաղաք: Յայսմ նուազի որպէս և զառաջինն մտին Երարացիք ի Նայս Ասորիստան կողմանէ ընդ ճանապարհ Զորոյ կամ Զորայոյ յաշխարհն Տարօնոյ, և աւարեալ յուղւոցն զԲաղնունիս, զԵղիովիտ և զՊոոկոպիտ, թափեցան յԵլլա-

բասա, և անտի զիմեցին յարեւելո ի Դուխին քաղաք։ Եշ-
խանք երեք որք ելեալ էին ժողովել զզօքն ճապաղական՝
փութացան անցին ընդ կամուրջն Մհծամօրի (յարե-
մաիցն կուսէ Դունայ) որ տանէր ի քաղաքն, և աւե-
րեալ զայն յետոյ իւրեանց՝ գոյժ արկին ի Դուխին։ Եւ
ժամանեալ զօրուն Երարացւոց ցգեան Մհծամօրի ոչ
կարէին անցանել ընդ ոյն, բայց ունէին առաջնորդ իւ-
րեանց զԱրդիկ իշխան Մոկաց որ կոչէր Եկինիկ, որ
առաջնորդեալ նոցա անցոյց յայնկոյս գետոյն, և նոքա հա-
րեալ ասպատակաւ զերկիրն ամենայն մերձեցան ի Դուխին։
Եւ թէպէտ ոչ զիմեցաւ ի քաղաքին Թէոդորոս Ուշ-
տունի որ զնացեալ էր ի Աստիջաւան, այլ որք ի քաղա-
քին էին ժողովուրդք արխացան ի պաշտպանութիւն
անձանց և քաղաքին։ Եսկ թշնամեացն արկեալ մուխ
շուրջանակի՝ մերժեցին ծխովն և նետաձգութեամբն
զպահապանս պարսպին և կանգնեալ սանդուխս ելին ի
պարիսպն և անկեալ ի ներքս բացին զգուռն քաղաքին։
Եւ զիմեալ ի ներքս զօրք թշնամեացն սատակեցին սր-
բով զբաղմութիւն քաղաքին, և առեալ զաւար և զկա-
պուր, ելին և բանակեցան արտաքոյ քաղաքին և յետ
աւուրց ինչ ելին և զնացին ընդ նշին ճանապարհ ընդ
որ եկեալն էին, հանդիրձ բազմութեամբ զերեաց ոգուց
երեսուն և հինգ հազարաց։ Ի Կողովիտ զաւարին զա-
րանակալ լինի նոցա Թէոդորոս Ոշտունի սակաւ ա-
րամբք, այլ ոչ ինչ աղգեալ նոցա՝ փախստական լինի
ինքն առաջի նոցա, որք զառնան աւալսւն յԱսորես-
տան¹⁾։

1) Օտարբեր ցուցմունս պատմագրացն մերոց յաղագո
ժամանակի առմանն Դունայ տես յԳրդ ծանօթութեան ժա-
մենիս։

Չորրորդ արշաւանք Արքաբացւոց ի հայս, զորոյ
զնկարազիր ունին Աերէոս (յէջս 116—117), Պետոնդ
(էջ 11) և ըստ նմանէ Սառղեկ (էջ 122) և այլք՝ տար-
բեր աւանդին յերկոսին պատմազիրս առաջինս ըստ ժա-
մանակի և ըստ տեղւոյ արշաւանին։ Յայսմնուազի մը-
տանեն Արքաբացիք ի հայս յԵտրպատական աշխարհէ
և բաժանին յառաջս երիս, այն է ըստ Պետոնդի ի Վաս-
պուրական, ի կոմին Տարօնոց և ի Կոգովիտ, իսկ ըստ Աե-
րէոսի՝ յԵլրաբատ, ի սիփական զնդին կողմանս և յԵ-
զուանս։ Յետ բազում աւարառութեանց և սպանմանց
գայ պաշարէ մին ի զնդիցն զամբոցն Արծափաց։ Զօ-
րացն հայոց որ յամիոցին արիաբար պատերազմեալ ընդ
հինին՝ բազում օճիրս վեասուց զործեցին նոցա, մինչւ-
ծանուցեալ թշնամեաց զելն զազտնի ի բերդն՝ զիշերացն
զաղագոզի ելանեն անզը և կալեալ ի քուն զպահա-
պանսն սպանմանեն և ունին զտեղին մինչե ցառաւաօտ,
և ի միւսում աւուրք խուժեն ի ներքս, և յետ սասարիկ
կոտորածից և աւարառութեանց ի բազում անհոգու-
թեան լինին։ Աստ ուրեմն հասանէ ի վերայ նոցա Թաէո-
դորոս Աշտունի և ընդ նմա արք վեց հարիւր վասեալք
զնենու, և հարեալ կոտորէ խսպառ զԻսմայելացին, որք
էին ողիք իրրե երեք հազարք, և թափէ զգերիսն և զա-
ւարս ի ձեռաց նոցա։ Իսկ յայլոց յերկուց զնդացն մին
յաւարի առնու զկողմանս Տայոց, Արաց և Աղուանից
(Աերէոս), և միւսն զԱսպուրական մինչե յ նախջաւան
քաղաք (Պետոնդ)։ Լուեալ Ասսանդինի կայսեր զյազ-
թութենէն Թաէոգորոսի Աշտունոց՝ ուրախ լինի յըժ
և արձակէ նմա շնորհակալութիւն մեծ։

Ժամանակ այսր արշաւանի այլազգ զնի յերկոսին
ժամանակակից պատմազիրս։ Աերէոս զնէ զայն յերկոր-
բատակակալուց պատմազիրս։ Աերէոս զնէ զայն յերկոր-

զի ամին Առստանդնի, այն է յամի Տեսան 642-րդի. իսկ
Վեօնդ և ըստ նմանէ Ասողիկ՝ յերեսներորդի վեցերոր-
դի ամի իշխանութեանն Երուբեքրի, Օմարայ և Օթ-
մանայ, որ ինչ ըստ թուակարգութեանն Վեօնդի այ
(որ զնէ զառումն Դունայ ի համեմալցութորդ ամի նոցին
իշխանութեան և յերեքրդ ամին Առստանդնի) այց զամն
երկոտասաներորդ Առստանդնի, զամ Տեսան 652:

Քանզի ի ժամանակի արշաւանացս այսոցիկ ոչ
պաշապանէնն աշխարհին Ծիւղանդայիք, որպ տեսարքն
համարեալ էին նորա, իսկ նախարարքն առ անմիաբա-
նութեան իւրեանց և առ տեսարութեան ոչ զօրէին զդէմ
ունել բազմամբոխ հրոսակացն՝ ուստի հարկեցաւ աշ-
խարհն հպատակիլ Ճոյն Երաբացւոց, որում խորհրդոց
պարագլուխ եկաց Թէոդորոս Ոշառունի: Եյս նուա-
ճումն ըստ վկայութեան Աերէոսի եղել յերկոտասանե-
րորդ ամին Առստանդնի (յամի Տեսան 652-րդի). «ա-
պրստամբեցին Նայք, առէ Աերէոս (էջ 138), և ի բաց
կացին ի թագաւորութենէն Յունաց՝ և Հնազանդեցան
ի ծառայութիւն արքային Խսմայիլի, եղին ուխտ ընդ
մահու, և ընդ դժոխոց գաշնես կռեցին Թէոդորոս Ուշ-
տունեաց աեր ամենայն իշխանաւքն Նայոց ի բաց ըն-
կեցեալ զաստուածային գաշնաւորութիւն: Նոյն ինքն
Աերէոս ի ներքս բերէ զպայմանս գաշնեն, զոր կնքեաց
ամիբապեան ընդ իշխանս Նայոց, թէ Եյս լեցի ուխտ
հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեղ որչափ ամաց և
գուք կամիջիք, և ոչ առնում ի ձէնչ սակ զերբեամմի.
ապա յայնժամ տաջէք երգմամբ, որչափ և գուք կամի-
ջիք. և զեծեալ կալէք յաշխարհիդ ժե հաղար, և հաց
յաշխարհէն տուք, և իս ի սակն արքունի անդարեմ: և
զհեծեալն յԵսորիս ոչ խնդրիմ՝ բայց այլ ուր և հրա-

մայեմ, պատրաստ լիցին ի գործ. և ոչ արձակեմ ի բերդուսց ամիրայս, և ոչ առաջիկ սպայ՝ ի բազմաց մինչեւ ցմի հեծեալ: Թաշնամի մի՛ մոցէ ի հայս. և եթէ գայ հոռոմ՝ ի վերայ ձեր՝ արձակեմ ձեղ զաւը յաւգնականութիւն որչափ և գուք կամիջիք: Առ երդնում ի մեծն Ըստուած՝ եթէ ոչ ստեմ (Աեր. էջ 138): Երբե լուաւ Աստանդին կայսր զեկանելն հայոց ի ծառայութենե իւրմէ են ի հայս բազմաձեռն զնդաւ ի պատժել զապատամբան. կաթողիկոսն Կերպէս և բազումք ի նախարարացն իւրաքանչեւր զօրու ելին ընդ առաջ նորա իւրի տեառն իւրիանց: Այլ Թակոգորոս Ոշտունի ոչ ծանեաւ զնաւ և ոչ են ի կոչ նորա, միտեալ գոլով Ճրաբացիս ըստ ուխտին գաշնաւորութեան, սոյնալէս և ոչ Վիլք և Ազուանք և Աիւնիք, որք միաբան էին խորհրդոցն նորա: Թակուտ և կարի ջանացաւ Աստանդին վրասիր ածել զԹակոգորոս, այլ ոչ կարացեալ ունել զնա՞ հրամացիաց զօրացն աւերել զգաւառ իշխանութեան նորա և զՎիլք, զԱզուանս և զԱիւնիս. և ինքն ձմերեալ զօրու իւրով ի Դուբն զհետ եղեւ միաբանելց Հայս ընդ Յոյնս ի հաւատոցս և ստիպելց զնոսս զենկալցին զժողովն Կաղկերոնի (Աեր. էջ 119). իսկ իրանալ գարնան չուեաց անդրէն ի Աստանդնուպոլիս: Յետ մեկնելց նորա Թակոգորոս Ոշտունի օգնականութեամբ Ճրաբացւոց մերժեաց յամենայն աշխարհէն զզօրս Յունաց և եշաս յաղթանակաւ մինչեւ ցՏրապիզոն: և նուածեալ զՀայս ընդ աւերութեամբ Ճրաբացւոց՝ չոզաւ ի Գամանկոս և ընկալաւ ի Վուաւեաց իշխանութիւն ի Վիրայ հայոց, Վրաց, Ազուանից և Աիւնիաց: (Աեր. էջս 138—143):

Օհանեղամանս այսր նուածման ու ունի Պետոնդ.

ըստ վկայութեան սորա (յէջս 14,15) Մուռաւիս յառաջնում ամի իշխանութեան իւրոյ և ի չե ամի Կոստանդնի¹⁾ զրեաց հրովարտակ ի ։այս, թէ եթէ ոչ հարկիսնիք ինձ և ոչ անկծիք ընդ լծով ծառայութեան իմց՝ ի սուր սուսերի մաշեցից զամենեսեանք Աւ երկուցեալ ի սպառնալեաց թղթոյն՝ Ներսէս Շինող կաթողեկոս և նախարարլը աշխարհին յանձին կալան հարկել բռնութեան Խոմայիլացւոցն։ ևսուն պատանդս Մուռաւեաց գՎիրիդոր Մամիկոնեան և զԱմբատ Բազրատունի, և համարին ի վերայ աշխարհիս ։այսոց հարկս և գահեկան ի միում ամի հատուցանել նոցա, և աներկիւղ մնալ ի բնակութիւնս իւրեանց։ (Պ. Առնդ, էջ 14):

Եյս զաշնաւորութիւն հարկատուութեան եղեւ անցուշտ յետ մահուանն Թէոդորոսի Աշառունուց (յամին 656), ապա ուրեմն յետոյ է քան զնուածումն ըստ Անրէոսի: Թէերեւ յետ առաջնոյ նուածմանն, զոր Անրէոս աւանդէ՝ եղեն անդրէն խլամունք ի ։այս և հաղորդութիւնք կաթողիկոսին և նախարարաց ոմանց ընդ Բիւղանդացիս. յաղագս որոց զրեաց ամիրապեան զթուղթն սպառնալեաց, յորմէ հարկեցան ։այք կամաւթէ ակամայ առնուլ յանձն զլուծն Արաբացւոց։ Զէ համբ զարդիս միարանել ընդ միմեանս զաւանդեալս ի մատենազրացդ. այլ զայս և եթ կարեմք հանել ի վեր յամենեցունց ի դոցանէ, թէ յետ բազմազիմի արշաւանց Արաբացւոց ի ։այս յամն 636—648՝ հարկեցան ապա ։այք իբաց կալ ի ծառայութենէ Բիւղանդից և ձանաւել իւրեանց տէր զամիրապեաս (յամին 652). իսկ

1) Ա առն թուականացդ տես ի վերջ մատենիս զժանօթութիւնն 11:

յամին 661 նուածեցան ամենելին ընդ իշխանութեամբ
նոցա գաշամբք հարկատուութեան:

Իսկ պատմազիրն Արաբացւոց Բելազորի (ed. Տօյէ
1866, յէջս 199—202) այլազգ ի մատենազլաց մերոց
աւանդէ յաղազս նուածման Նայաստանի ընդ Արաբա-
ցւովք: Պատ սորին վկայութեան առ իշխանութեամբ
Օթմանայ (644—656) Նարիր իրն Մէսլէմէ զօրա-
վար Արաբացւոց զօրու 6—8 հաղարաք յարձակեցաւ
Ենայս ընդ ճանապարհ Ասորւոց և Միջազիտաց և
եկեալ պաշարեաց գքազաքն Ալիկալայ և էսո զօյն:
Իսկ իբրև լուաւ Նարիր, թէ զան Նայք ի վերայ նորա
հանդերձ զօրաք Ալանաց, Ափխազաց և Խազբաց՝ գլ-
րեաց խնզրեաց յՕթմանայ և ի Մոււաւեայ զօրս ի թի-
կունս օգնականութեան. առաքեաց նմա Մոււաւիս զունդ
մի երկու հաղար զօրաց ընդ առաջնորդութեամբ զօրավա-
րին Առուֆայ քազաքին. իսկ Օթման ի ձեռն զօրավարին
Ալմանայ իրն Առարի՛ա յղեաց նմա զօրս վեց հաղար:
Այժ ընդ հուպ յարեան երկպառակութիւնք ընդ Նարիր
և ընդ Ալման, որում ապա հրամայեաց Օթման ար-
շաւել յԱռան (Արւնիս): Իսկ Նարիր յիս տիրելց Աս-
լիկալայ քազաքին խաղաց գնաց ի Խլաթ, յԱրձէշ և
յԱշտիշատ, և անցեալ ընդ գեան Քրդաց (ընդ Երասին)
եկին պաշտրեաց զԴուբին, և բնակիչքն բացին զդրունս
քազաքին առաջի նորա: Աստի զիմեաց նա ի Բազրի-
չանդ, ի Ասխջաւան, ի Արւնիս, ի Վայոց ձոր, ի Գեր-
ջան և ի Տիգիս, զօրս ամենեսին նուածեաց ընդ իշխա-
նութեամբ Արաբացւոց:—Գնէ Բելազորի և զթուզիթն
գոշինն, զոր կնքեաց Նարիր ընդ Դուբին քազաքի, զ-
րինակ զայս.

«Անուամբն Աստուծոյ զթամձին և ողորմածին» այս *

է զիր, զոր շնորհեաց Հարիբ որդի Մէսլէմեայ քրիստոնէից, մօղաց և Հրէից քաղաքին Դուռնայ, ներկայից և բացակայից:

«Շնորհեցի ձեզ զապահովութիւն կենաց և ընչեց ձերոց, զեկեղեցեաց և տաճարաց և զպարապաց քաղաքին ձերոց, և յապահովի լիջիք: Եւ մեք հաստատուն պահացուք զայս զաշն պայմանի, զի համեցայք և խոստացաք գուք տալ զիխահարկ և տուրս ի կալուածոց: Ակայ է Սատուած, և բաւէ վկայութիւն նորան:

«Զայս թուղթ զաշն կնքեաց մատանեաւ իւրով Հարիբ որդի Մէսլէմեայ:

Սռ տիրապետութեամբն Սրաբացւոց անկերպարան իմն էր քաղաքական վեճակ Հայաստանի. զի Սրաբացիք իւրեանց համարեալ զաշխարհն՝ պահանջէին հնազանդելոց և նոցա և տալ զսակ հարկին. իսկ Իշխանովիոյ քամահեալ զձեռներիցութեամբ նոցա՝ իւր կարծէր զայն ըստ առաջնութիւն: Յորժամ ի Հայս զիմեր Առատանդին կայսր՝ քնոք առաջ եղեն նմա ի Դերջան արք Խմնացէլացիք և մատուցին նմա թուղթ յիշխանէն իւրեանց, որ էր զբեալ այսպէս, թէ Հայ+ էմ էն, անդ մի երթար առաջ թէ երթամ՝ ևս զամ ի վերայ քոյ և առնեմ զքեզ որ անողբէն փախչել ոչ կարես: Իսկ արքայ Առատանդին առէ. Աշխարհն էմ, և ևս երթամ. գու եթէ զամ ի վերայ իմ, Սատուած արգարութեան դատաւոր է»: (Արք. էջ 139): Արքա ժողովրդեանն Հայոց ազգեցութեամբ և օրինակաւ եկեղեցական դասուն միտեալ էր ի Իշխանովիա, ի պետութիւնն քրիստոնեայ. և ի սկզբան անդ յաճախակի ապստամբէին նախարարքն ընդդէմ Սրաբացւոց առ ի թօթափիւ զուծ նոցա, այլ քանզի ոչ յընդհանուր աշխարհն սիոնէին ապստամբութիւնքն այլ պարփակէին

ի վայրի միոջ, և սակաւաւորք էին որք մասն ի նոսա
ունեին՝ վասն այսորիկ դիւրաւ անդրէն նոււածէին
զնոսա. Երաբացիք:

Յայսոսիկ ժամանակս «մարտից երկագառակութեան,
անթիւ սպաննանց, գերութեան առից, խռովից, կապա-
նաց, նեղութեանց...աւերելց աւանից, հրգեհից շինուա-
ծոց և ամենայն վնասուց բազում աշխարհաց յերկուց
կողմանց» որպէս ասէ Ասողեկ՝ (Էջ 85) և ևս վատթա-
րէր վիճակ աշխարհին վասն անխոչեմ քաղաքականու-
թեանն Յունաց. զի յորժամ ապստամբէին նախարարք
Նայոց ընդդէմ Երաբացւոց և ինդրէին օգնականութիւն
ի նոցանէ ընդդէմ նեղչաց իւրեանց՝ ոչ տային նոքա օդ-
նականութիւն ինչ կարեռը, որով թէ ի բաց թօթա-
փէին նախարարքն զլուծն Երաբացւոց և մասնէին ան-
դին ի ծառայութիւն նոցա. իսկ յորժամ Նայք հարեալ
և վատթարեալ առ հարկի մասնէին ընդ Ըստին Երա-
բացւոց՝ յայնժամ գային գունդք Յունաց, բայց ոչ ի
պաշտպանութիւն աշխարհին ընդդէմ գերչաց նորս, որ-
պէս զործ էր խոչեմութեան՝ այլ առ ի պատժել զայս
զօրէն ապստամբաց և յաւերել զաշխարհն Աւ բաց
յայսոցիկ գումարէին ժողովս եկեղեցականս և ընդ աշիւ-
զօրաց շուրջանակի պաշտելց հարկեցուցանէին զայս
ընդունել զժողովն Քաղկեդոնի (Ոեր. Էջ 119. Ասողեկ,
Էջ 89): Յորժամ ապստապեալ յանշնարին նեղութեանց՝
յերեսաց սատիկանաց դիմէին նախարարք Նայոց առ
Յշնա և ինդրէին ի նոցանէ, զի թոյլ տային զաղթել
ի սահմանս պետութեան նոցա՝ (Պետոյ, յէջս 23, 35,
ի 133, 168) տային նոցա տեղել բնակութեան կամ ի հե-
ռաւոր ծագս Թրակիոյ կամ յեղերս ծովուն պահտուի
(Փշթ քաղաք), (Պետոյ, յէջս 35, 168. Ասողեկ, յէջս

201, 278): Աշան այսր յեղանակի քաղաքավարութեանն Ծիւզանգից տաղտկացան ի նոցանէ բաղումք և բարւոք ևս վարկանէին ընդ իշխանութեամբ լինել Ծրաբացւոց քան թէ նոցա:

Իսկ ոստիկանացն տեսեալ թէ հանապազ ի հաղորդութեան են նախարարքն Նայոց ընդ Ծիւզանգից և ապստամբեն յար ընդգեմ իւրեանց, մանաւանդ հայրենասէր տունն Մամիկոնեանց, որ զնէր զանձն միշտ ի վերայ աղատութեան աշխարհին և եկեղեցւոց նորա¹⁾ խիթիւ աչօք հայէին ընդ նոսա և համարէին թէ միշտ Խոչ և զայթակղութիւն լինելոց են իշխանութեան իւրեանց (Պետոնդ, էջ 31), վասն այտրիկ զհետ լինէին բառնաւ ամենեին ի միջյ զտոհն նախարարացն Նայոց կամ զէթ տկարագոյնս կացուցանել որպէս զի յապահովի լիցին յապստամբութեանց նոցա և աշխարհին նուածեացի միստութեամբ ընդ լծով իւրեանց:

Ի սկիզբն տիրապետութեանն Երաբացւոց կարգէին ամբագետք իշխանս ի վերայ Նայոց ի նոցին խիկ նախարարաց, որպէս զթէոգորոս Ոշտունի (Ոեր. էջ 143), զԳրիգոր Մամիկոնեան, զԵշոտ պատրիկ Ծաղրատունի (Պետոնդ, էջս 14, 16) և զայլս բայց ի ժամանակաց Երգը Մելքը (685—705) Ճրաբացւոց և եթ կարգէին ոստիկանքն, որք իշխէին երբեմն յատկապէս ի վերայ Նայաստանեաց, այլ երբեմն ընդ իշխանութեամբ միշտ ոստիկանի էին Նայք և Մարպատական ի միասին, զի որպէս ի վերոյ յիշատակեցաք՝ առ ժամանակ մի նաշանդ մի էին Երաբացւոց Մարպատական և Նայք:

1) «Նամազասպ Մամիկոնեան . . . զնախնական քաջութեանցն պայման միշտ Զանայիր լոռութեամբ կատարել մրցարանաց կրթութեամբ»: Յովլէ, կաթ. էջ 112:

Աթոռանիստ քաղաք ոստիկանացն Նայաստանի էր Դուռին, մայրաքաղաքն Նայոց սկսելի Դարեւ հետեւ, որ էր քաղաք վարթամ և կարի բազմամարդ¹⁾։ զի որ-

1) Աստ վկայութեան Խատախրի պատմագրին Արաբացւոց Դուռին քաղաք, որ աթոռանիստ էր կուսակալացն Նայաստանի կարի բազմամարդ էր և վաճառաշահ։ Աիսէին անդ առուխ ազնիւս և զորդս և խոնջանունս, և կերպասս ընտիրս ի պէտս բարձից և բաստեռանց։ Կը նոցա ներկ մի որդան կարմիր (Alkermes), որով զասուխս ներկանէին։ Ընէին անդ և գիպակս մեծադնիս մետաքսեայս, ծաղկեալ երիներանդն գունովք։ Աւանդէ Խատախրի, թէ ի ժամանակի իւրում էր քաղաքն Դուռին ի ձեռս քրիստոնեայ իշխանաց, որը նուաճեալը էին ընդ իշխանութեամբ ամիրապետաց, որոց և հարկս հատուցանէին։ Ա. Ա. յետոյ հանին ի նոցանէ ի ժամանակս իրն Նաւկալի (Hankal) Արաբացիք զիշխանութիւնն և տիրեաց աշխարհին Յուսուփի իրն Աղի Սար։ Յայսմ ժամանակի սահմանը Նայաստանի էին ի հիւսիսց նահանգն Պարտաւայ, յարևելից Ատրպատական, ի հարաւոյ Արիագետք (Քէղերէ), իսկ յարևմտից կուսէ քաղաքն Կարմալայ համարէր սահմանագլուխ ընդ Նիւղանդիոյ Ղանդիա։ Նազորդութիւնն ունէին Նայքի ընդ Տանապարհին յայնմիկ էր ընդ Ճանապարհ Տրապիզոնի, որ ի ժամանակին յայնմիկ էր գեռ ևս ընդ իշխանութեամբ կոյսերացն Յունաց և էր նաւահանգիստ երևելի և քաղաք վաճառաշահ։ Ժողովէին այսր վաճառականք ի տեղեաց տեղեաց և աստի յուղի անկանէին ի Տիւղանդիոն՝ ի վաճառ հանել անդ զաղնիւ ազնիւ անկուածու Նայաստանի, զգիպակն մետաքսեայ և կերպասս ի պէտս զգեստուց։ Արէմբ, էջ 342։

Անդ նայն Ճանապարհ Տրապիզոնի գայլին և վաճառք ի Տիւղանդիոյ, և մտանէին ի Նայսմ յարևելու որպէս է տեսանել ի պատմութենէ Յովհաննու կաթողիկոսի, թէ Անդէր, ասէ (Ամբատ արքայ. առ. Ափշին ոստիկան), Վաշարեալ զիմեալ գաս յոշինչ պէտս, զի թէ սէր ընդ կոյսեր եղի՝ և այն ևս վասն ձեր օգտի, զի թէրէս որ պիտոյ է

սպէս երեկի ի վկայութենէ Թռովմայի Արծրունոց (էջ 230) ի մեծի շարժին որ եղել յամին 893-րդի՝ մեռան ի Վուլին քաղաքի ողիք առաւելքան հօթանատուն հաղար։ Օքարդիս գոն միայն մնացուածք աւերակաց նորա։ Բաց ի Վունաց նստէին երբեմն ոստիկանկըն և ի Նախջաւան և ի Պարտաւաւ։

Ոստիկանացն իշխանութիւն, որպէս զբեցաք ի վեր անողը՝ երբեմն աճէր և երբեմն նուռազէր ըստ կամաց ամիբ-բապեատացն, որք անձամբ ընտրէին զնոսա և առաքէին ի կառավարութիւն աշխարհիս, էին նոքա ընդհանրապէս ընդ իշխանութեամբ ամիբապեատաց անընդմիջապէս, որոց և հասուցանէին զհարկ աշխարհին, ոյլ երբեմն հպատակէին նոքա աւագ ոստիկանացն Աստրապատականի և Ասուրոց։ Վարեկին ոստիկանք յանձնէ զործակալս իւրեանց (ամիբայս), որոց զործ էր մանաւանդ ժողովիւ ի զաւոս դաւառս զհարկս և հասուցանել առ ոստիկանու։

ամիբապեատին մեծի և զբոյ ևս դիւրաւ զպէտս ի յունականաց անտի գտանել մարթացից և ի նպաստ օժտութեան ձեզ ընծայել զերեելի հանդերձից և զարդուց և զսպասուց վայելս. ոյլ և վաճառականաց, որք ընդ դենիդ քո՛ բացեալ ճանապարհ, զի արասցեն մուտ յաշխարհս նոցա, և ի նոցա լիութենէն փարթամացուացեն զձեր զանձարաննագ» (էջ 201): «Եղն պատմագիր այլուր (յէջս 249—250) բացայայտ ևս նկարագրէ զերեելի հանդերձն, զզարդս և զսպասուց վայելս, զորս ընդունէին Հայք ի Տիւզանդիսյ. «Իսկ արքայի (Ալբատայ), ասէ, ուրախ լեալ ի բարեձիր պարգևս նորա (Քուօփայ)... նմա ընծայեր բարեվայելուչ և չընազատես և երեւելի զարդս հանդերձանաց; և նկարակերտ կաղմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց, և ըմբակս և նուազս և կամար ի. համակ ոսկւոյ՝ Գործ հուսնայական Ֆաբրուաբաց, յերանդս գունակ գունակ ապակւոյ»:

սոքա կոչին առ պատմազիլս մեր հրամանատարք կամ պահանջողք հարկի (Ա. ևոնդ, յէջս 136, 138, 139): Ունէին ոստիկանք ընդ իշխանութեամբ իւրեանց գունդ մի զօրաց, որովք ի հնազանդութեան պահէին զաշխարհն նուաձնալ:

Աչ լինէին նոքա միջամուխ ի ներքին վարչութիւն աշխարհին, որ էլ ի ձեռս նախարարաց. այլ հարկեցուցանէին գտողովուրդն, զի ծանիցին զամիրապիսն աէր իւրեանց և հատուցեն զհարկին սակ ամ ըստ ամէ: Առ Վուաւեաւ նշանակեցաւ սակ 500 դաշեկանաց (Ա. ևոնդ, էջ 14), իսկ յետոյ առաւելեալ գամքան զգամը ի ժամանակս Ամբատայ թագաւորի հհաս մինչեւ ցվաթսուն հազար գահեկան (Յովհ. կաթ. էջ 270): Յաճախակի է ընթեռնուլ առ պատմազիլս մեր, մանաւանդ առ Ա. ևոնդիսց, թէ կարի յոյժ տագնապէր ժողովուրդն ծանրութեամբ հարկաց, և զի հարկահանք անդր քան զսահման իշխանութեան իւրեանց կեղեքէին զաշխարհն իւրսուութեամբ և հարստահարութեամբ (Ա. ևոնդ, յէջս 127, 135, 137, 139 և այլն):

Այլուձին նախարարացն Նայոց ի սկզբան անդ ընդունէր ոռօնիկ ուտեսափ յամիրապիսաց, գահեկանս հարիւր հազար յամի, այլ յետոյ հատան ոռօնիկէն յարքունուստ, և հարկեցան նախարարք յանձանց իւրեանց հոգալ նոցին զռոծիկս (Ա. ևոնդ, էջ 113, 128):

Կեղեցին Նայոց առ ոստիկանոք վայելէր ընդհանրապէս յազատութիւնի կրօնից և պաշտամանց, զի ամիբապիտացն չէր կէտ նոպատակի բռնի հարկեցուցանել զաշխարհն յընդունելութիւն մահմետական կրօնից: Այլ իշխանակին երբեմն առ պատմազիլս մեր կողոպուտք և կեղեցեաց և հալածանք յիրս կրօնից և բազում անդամ

ի մասնաւոր զիսպուածո նահատակութիւնք քրիստոնէից՝
որք ոչ առնուին յանձն զկրօնս մահմետականս: Դասն
եկեղեցականաց ի պատուի էր առ ոստիկանս, և բաղում
անգամ երթային կաթողիկոսքն հրեշտակութեամբ առ
նոսս և առ ամիբապեաս, խնդրել զիւրութիւն ինչ
վասն ժողովրդեան իւրեանց, և զառնային պատուովք և
ընծայիւք, ընկալեալ զինզիբրսն (Աւոնդ, յէջս 28—31):

Յետ մասնելցյ Հայոց ընդ իշխանութեամբ Երաբա-
ցւոց թէպէտ և կրօնք երկոցունց ազգացն և պայմանք
յարաբերութեանց նոցա ընդ միմեանս խորոց մեծ ար-
կանէին ընդ մէջ նոցա՝ բայց ընկալան անշուշտ Հայք
ի նոցանէ ազգեցութիւնս որպէս ի սովորոյթս և ի բա-
րոյս վասն հանապազօր կենցաղավարութեան ընդ նոսս,
սոյնպէս և յարուեսսս, ի զիտութիւնս և ի գալրութիւնս,
որք բարգաւածեալ էին առ Երաբայիս: Եյս ազգեցու-
թիւն Երաբացւոց տեսանի մանաւանդ ի գալրութիւնս,
որպէս ի քերթուածս, յորս մուծան ամանակք նորք և
յանդք, որք անծանօթք էին Հայոց նախ քան զԵրաբա-
ցիս, սոյնպէս և յարձակ զրուածս, որք պճնեցան ճար-
տասանական պերճաբանութեամբ և կուտակութեամբք
հոմանայն և հոմանիշ բառից: Իսկ յազագս ազգեցու-
թեանն Երաբացւոց ի զիտութիւնս՝ չէ մարթ մեղ ասել
որոշակի ինչ զարդիս. զի մինչեւ ցայսօր հրատարակին և
հետազոտին ի մատենազրացն մերոց նախնեաց զիեթէ մի-
այն երկք պատմականք և աստուածաբանականք, յորոց
չէ հնար ի վեր հանել զայս ազգեցութիւն. իսկ երկքն
ուսողականք և մանաւանդ բժշկականք, յորս առաւելա-
պէս մարթ է տեսանել զազգեցութիւն արաբացի զիտու-
թեանց՝ չէ ևս են ընծայեալ ի լցոս և մնան ցանդ ընդ
զրուանաւ, թէպէտ և ոմանք ի նոցանէ են կարի հե-

տաքննականը¹⁾): Առան սյսորիկ ցանկալի է յօյժ, զե և սյսորիկ երկը գայցեն ի լոյս և զօրէն պատմական և աստուածաբանական մատենիցն մատչելի լիցին զիտնոց և պաղարերիցեն զարդասխա իւրեանց ի լրումն պատմութեան ուսուղական և բժշկական զիտութեանց:

Յորժամ նուազեցաւ իշխանութիւն ամիրապետացն և անձնիշխանաբար տիրել կալան ոստիկանը ի վերայ նահանգաց պետութեան՝ յայնժամ ամիրապետքն առ ի կարծել զարդերասան ստամբակութիւն ոստիկանաց իւրեանց՝ զհարկահանութիւն աշխարհին յօժարութեամբ յանձն առնելին նախարարացն ։ այսոց և թեթեացուցանելին իսկ զսակ հարկին, և առհասարակ ընդարձակելին զիրաւունս և զիշխանութիւն նոցաւ Տոհմի Ռազմատունեաց որ ի վաղուց հետէ ակնկալէր մեծութեան և պատուց հասանել ընկալաւ զսպարապետութիւն զօրացն ։ այսոց, իսկ առ ամիրապետութեամբն ։ հեշմայ (յամս 724—743) նաև զիշխանութիւն ի վերայ աշխարհիս ։ այսոց, (Պետր, 112, 128). և յայնմշետէ զօրացհաւ և ևս բարզաւածեցաւ, մինչեւ զե յիններորդ գարուն Աշոտ Ռազմատունի ընկալաւ յամիրապետէն թագ արքայական:

1) Ո՞ին միայն ի բժշկական երկոց նախնի մատենագրաց մերոց ընծայեալ է ի լոյս մինչև ցայսօր, Զերմանց մսիթաւ բութիւնն Ոխիթարայ բժշկապետի ։ երացւոյ, յորում և է աեսանել զիտաստ ապացուցի ազգեցութեան գիտութեանցն Արարացոց ի վերայ մերոց. քանզի ի նախարանի անդ յայտնէ հեղինակն, թէ «Ես Ոխիթար ։ երացի ։ ։ ։ վարժեցոյ ի գլուխութիւն Աքաբացոց, պարսից և ։ ելլենացոց... զե ունելին զարուեստ բժշկութեան լի և կատարեալ ըստ առաջին իմաստնոցն»։ և փոքր մի զինի՝ թէ «յազագոս այսորիկ յօժարեցի... առնել զդիրքո զայս ի ։ ։ ։ յԱշտառին և ի Պարսիկ գրենեաց»։

և ընծայս պատուականս, զոր լուեալ կայսերն Ռարազի Ի. Մակեղընացւոյ, որ սերեալ էր ի հայ ցեղէ՝ առաքեաց և ինքն նմա թագ և ծիբանիս հանդերձ թղթով խնդակցութեան, յորում որդի սիրելի անուանէր զԱշոտ, և զժագաւորութիւն նորա՝ սիրելի և մերձաւոր սրտի իւրոյ քան զամենայն թագաւորութիւնս:

Այլ սատիկանքն Եարագատականի յորժամ տեսին, թէ բատ ձեռս նոցա ելանէ մասն մի կարեոր Հայաստանի յաղագս իշխանութեանն Ռազբատունիաց, որ օրքան զօր զօրացեալ ի հաղորդութիւնս մատանէր ընդ կայսերս և ընդ ամիրապետս անընդմիջապէս՝ զհետ եղին նուաճելց զնոսս, վասն որոյ բազում անդամ ինքնազլուխ յարձակէին ի սահմանս իշխանութեանն Ռազբատունիաց և հարկանէին սրով և գերութեամբ. ի միում յարշաւանաց նոցա առ երկրորդաւ արքայիւն Ռազբատունիաց յոյժ սաստիկ եղին աւելաճք և կոտորած աշխարհին, յետ որոց եկն սովու համաճարակ, որ ծախսեաց զբազմութիւն ժողովրդոց: Խակ կայսերքն Ռիւզանդիոյ թէպէտ և բարեկամք էին տանն Ռազբատունիաց, որ ինչ երեխ և ի յաճախակի ընծայից, զորս ովէին միմեանց վեհապետքն երկոքին՝ այլ պատազեալ ի նելքին դաւս և յերկպատակութիւնս պալատանն՝ ոչ ունէին պարագ ի ժամանակի՝ արշաւանացս այսոցիկ՝ զի թէ ձեռն օդնականութեան կարկառեսցին Ռազբատունիաց: Քանզի ծանուցեալ խակ էր Ռիւզանդացւոց, թէ յաղագս ապահովութեան սահմանացն խրեանց անկ է պաշտպանել անկախութեան Հայոց յերեսաց ամիրապետացն և սոտիկանաց, և թէպէտ կայսերք փոփոխէին յաճախակի՝ այլ յամենեսին ի նոսս էր անփոփոխ այս կետ նպատակի: Որպէս յամի Տեառն 920-րդի պատրիարքն Ալիկո-

դայսու, մաերիմ խորհրդական կայսերն Առատանդնի Ե-
րդիաց թուղթ առ կաթողիկոսն Նայոց, յորում յիշ բա-
նից վշտակցութեան յազագս աւելածոցն Նայաստանի
զրեր, թէ Հարկ է նախարարացն յեսս կալ ի ներքին
երկպառակութեանց և ընդ իշխանութեամբ թագաւորին
իւրիանց ելանել միաբանութեամբ ընդդեմ թշնամւոյն
հասարակաց, և թէ զրեալ է իւր արդեն առ թագաւորս
Կարաց, Աղուանից և Ափխաղաց, զի իւրաքանչեւր զօ-
րու եկեսցեն ի թիկունս օգնականութեան Նայոց: Ենդ
հուրդ յետ այսորիկ եկին ի Նայոց պատղամաւորք կայ-
սերն, զի կոչեսցեն ի Առատանդնուղոլիս զիաթողիկոսն և
զօրինաւոր ժառանգն թագաւորութեանն Բազրատու-
նեաց: Զգալուստ Աշոտց յայս կոչ կայսերն և զնկարա-
կիր պատուց և ընծայից, զորս ընկալաւ նա ի կայսե-
րէն՝ աւանդեն ոչ միայն պատմազիրք Նայոց (Յովհ.
կաթ. էջ 356) այլ և Յունաց (տես Rambeaud, L'empire
Grec au X^e siècle, էջ 504):

Առեալ Աշոտց ի կայսերէն նպաստ արծաթոյ և
դունդ զօրաց յօդնութիւն՝ դարձաւ անզրէն ի Նայո-
ցողիաց նմա և ամիրապեան, որ ետ նմա զտիտղոսն
պլքայից արքայի (Կահանշահ) և այսու ծանեաւ զնա
պիտի և զլուխ այլոց թագաւորաց մանունց Նայոց (որ-
պէս թագաւորին Կասպուրականի և Ապրուց կամ
Կանանդայ), զորս ոստիկանք Ատրպատականի, Հետ-
ակալ ամիրապեացն թագաւորեցուցանէին այսր և անդր,
որպէս զի արկցեն երկպառակութիւնս ընդ նոսա և ընդ
Բազրատունիս և նուազեսցեն և ևս զզօրութիւն նոցա:
Մինչդեռ յուժի էին Կրաբացիք և արևելեանս սահ-

մանք կայսերութեանն չէին յապահովի ի յարձակմանց
նոցա՝ ինամեին և գգուէին կայսերք զիշխանութիւնն

Բազրատունեաց և պաշտպանէին նմա զինու և խոր-
հրդովք: Այլ յորժամ ի նահանջումն եկն իշխանութիւն
ամիբապետայն և ոչ ևս դյոյ ի նոցանէ վանդ վասն
կայսերութեանն, այլ մանաւանդ նոքին կայսերք ի ձեռն
զօրավարաց իւրեանց, այսոց մեծաւ մասամբն՝ հանեին
մի զմիոյ կնի քաղաքու և գաւառու Ճարաբացւոց՝ փոխե-
ցաւ յայնժամ և յեղանակ յարաբերութեանցն Յունաց
առ Բազրատունիս. փոխանակ սիրոյն և պաշտպանու-
թեանն զոր ցուցանէին կայսերք յառաջազդոյն՝ դհետ ե-
ղեն սյնուհետեւ նուազելց զնոսա գամ քան զգամ և
ուր ուրիմն բարձին ամենեին զեշխանութիւն նոցա.
այնպէս զի ի ճահ է ասել թէ նուազումն իշխանու-
թեան ամիբապետայն եղեւ պատճառք բարձման և իշ-
խանութեանն Բազրատունեաց:

Ճամանակն և հանդամանք կենաց Վեռնդեայ, զո-
րոյ զպատմութիւն ընծայեմք ի լցո նորոգ տպազրու-
թեամբ՝ չն յայնի ճշգրտօրէն, զի ոչ ինքն և ոչ որք
զինի նորա պատմազիրք չասեն ինչ որոշակի զայսմանէ:
Օսյո ինչ և եթ զիտեմք, թէ եկաց նա յՈւթերորդ
դարու և էր եկիզեցական, զոր ոմանք վարդապետ կոչն
և այլք երէց: Օպատմութեան զիրս իւր զրեաց նա
ի խնդրոյ տեսան Ըստհոյ Բազրատունոց, հանդոյն
Մովսիսի Խորենացւոյ, Եղիշէի, Վաղարայ Փալավեցւոյ
և այլոց պատմազրաց մերոց, որք ի խնդրոյ իշխանաց
ի զրի հարին զանցս և զդիպուածս աշխարհիս մերոյ:
Ե ձեռագիր օրինակս պատմութեանն Վեռնդեաց է խո-
րագիր այսպիսի. «Պատմութիւն Վեռնդեայ մեծի վար-
դապետի այսոց որ յաղազս երևելց Վահմեաի և զինի

նորին, թէ որպէս և կամ որով օրինակաւ տիրեցին այն-
զերաց, ևս առաւել ազգիս Հայոց. այլ պատմութիւնն
նորա սկսանի մահուամբն Վահմեսի (յամին 632) և
ձզի մինչև յամն 788, այնպէս զի բովանդակէ զժամա-
նակս 156 ամաց. Պահոցս մերձաւորս նմա ժամանակաւ
պատմէ իրրե ականատես:

Վատեանն Վեռնդեայ կարւեոր է յաջ բանասիրաց
ոչ միայն վասն սառուղաբան պատմութեանն անցից և
դիպուածոց Հայրենի աշխարհիս մերոյ, այլ և այնու,
զի աեղեկութիւնս ոչ սակաւս աւանդէ և յաղագս Ե-
րաբացւոց, Խաղբաց և Ծիւղանդացւոց իւրոյ ժամանա-
կին, զորս չէ դասնել առ այլ պատմազիլս մեր և օտա-
րաց: Պատուականն են մանաւանդ թղթակցութիւնքն
ընդ Օմար ամիրագես և Լեռն Վ. կայսր, յորս երեխն,
թէ որպիսի ինչ էին կարծիք քրիստոնէից և մահմետա-
կանաց զմիմեանց անդատին յառաջին դարուն ծագման
նորոյ կրօնիցն, այլ և են աեղեկութիւնք ի նոսա կարի
հիտաքննականք յաղագս կրօնիցն մահմետականաց, ա-
ղանդոց նոցա, բարուց և սովորութեանց Երաբացւոց
և կանուխ ժամանակին: Աւ քանզի արաբացի պատմիչք
անցից այնր ժամանակի յարեան անազան, ի թ. և ի Ճ-
շարս, իսկ մատենազբացն Յունաց աեղեկութիւնք հա-
տուկտիք են մեծաւ մասամբն և ոչ ըստ ամենայնի ար-
ժանահաւատաք՝ վասն այսորիկ և ևս առաւելուն ար-
ժանիք ստուգաբան պատմութեանն Վեռնդեայ:

Ի զիանոցն Աւրոպից զառաջինն ի կիր էաս զպատ-
մութիւնն Վեռնդեայ Ըլոսսէ անդամ Շեմարանին Վի-
տութեանց ի Ա. Պետերբուրգ, որ յամին 1849-րդի
քաղուածոյաբար եղ աեղեկութիւնս ինչ անտի ի մա-
տեանն իւր կրօնիցեալ Histoire de la Géorgie (յէջ 252,

257, Additions, էջ 136 և անդը): Յամի Տեսոն 1856-րդի Ա. Վ. Շահնազարեանց ընծայեաց ի լցու ի Փարվիքաղաքի զթարգմանութիւն պատմութեանն Պետոնդեաց ի լիզու Գաղղիացւոց հանդերձ բազմաթիւ ծանօթութեամբք, ընդ խորազբաւո «Histoire des guerres et des conquêtes des Arabes en Arménie, par l'éminent Ghevond vartabet arménien, écrivain du huitième siècle»: Իսկ յամին 1857 զառաջնն ընծայեաց նա ի լցու ի նմին քաղաքի և զհայերէն բնազիր պատմութիւնն հանդերձ ծանօթութեամբք, զորս մեծաւ մասամբն առեալ կեղ ի հայ ի գաղղիական թարգմանութենէն իւրմէ: Օտապազիրն իւր արար Ա. Վ. Շահնազարեանց ըստ միում օրինակի, զոր գաղափարեալ էր նորս ի ձեռազիր պատմութենէն Պետոնդեաց մատենազարանացն Ա. Էջմիածնի: Յամին 1862 ըստ առաջարկութեան Ճեմարանին Գիտութեանց որ ի Ա. Պետերբուրգ՝ արար Վ. Պատկանեան պատմութեանս ի լիզու Առուսաց և յաւել ի նմա ծանօթութիւնս բազումն կարի հետաքննութեանս ի բացարութիւն և ի բարւոք վերահստութիւն պատմութեանն:

Նորս այս մեր տպազիր արարաւ համեմատութեամբ առաջնոյ տպազիրն ընդ ձեռազիր օրինակի պատմութեանն Պետոնդեաց որ առ մեզ, զորմէ աւանդեալ են լիսակատար տեղեկութիւնք ի Յառաջարանի պատմութեանն Եսոդիան յէջս 14—ը: Եւ քանզի, որպէս անդն յիշատակի, թերի էր ի ձեռազիր յայսմիկ պատմութիւնն Պետոնդեաց ի սկիզբն մինչեւ ցգլուին ՃՎ (յէջն 43 տպազիրս մերոյ) վասն այսորիկ խնդրեցաք յարժանապատիւ Յուսկանէ վարդապետէ Մովսիսեանց տալ գաղափարել ի Զեռազիր օրինակէն Մատենազարանին Ա. Էջմիածնի զմասնն թերի Զեռազիրս մերոյ զոր ըն-

կոլեալ՝ շնորհակալիս բազում ունիմք առ հայրն արժանապատիւ:

Դաղդատութեամբ ձեռագիր օրինակացս այսոցիկ ընդ առաջնոյ տպագրին՝ ըստ խնդրոյ մերում կազմեաց պնդագիր մերոյս Տպագրի Առ. Վալխասեանց, հանդերձ ցուցմամբք տարբեր ընթերցուածոցն ի ստորոտս խւրաքանչեւր իջեց:

Դվասկարգութիւնք յայսմ Տպագրի նշանակեցան ըստ բաժանմանց զլինոց Ձեռագիր օրինակին որ առ մեզ, քանդի զյլսակարգութիւնք Փարիզեան Տպագրին՝ ոչ են Դևոնդի, այլ հրատարակչին նորին Ա. Ա. Շահնազար- եանց: Օգտակար վարկաք յաւելոււ ի վերջ մտանիս թարգմանութեամբ զայնոսիկ ի ծանօթութեանցն Վ. Պատկանեան և Ա. Շահնազարեան, որք ըստ կարծեաց մերոց կարեռքն են ընթերցողացն ։ այսոց:

Օսյս հրատարակութիւն Դևոնդեայ յօդուա Ռի- կերութեանն Տփղեաց հրատարակութեան հայերէն զմաց արարաք՝ գոլով կտակակատար հանգուցելոցն Յովսիսայ Իզմիրեանց, արծաթովին զոր նուիրեաց ի յիշատակ նորա եղասյր հանգուցելոցն վասն այսր նպատակի: Տիղեկու- թիւնք քանի մի գանմնուաննալիք բարեկամն մերոյ և զադ- դասէր առնէն Յովսիսայ Իզմիրեանց եղեալ են ի հրատա- րակութեանն Յովկան (Յառաջաբան, յէջս խոր խոր) որպէս և յօդուածք Ատակին նորա յԱ. յաւելուածին:

Ա. ԵԶԵԱՆՑ:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Kremer A. Culturgeschichte des Orients unter den Chalifen. 2 Bd. Wien, 1875.

Kremer A. Culturgeschichtliche Streifzüge auf dem Gebiete des Islams. Leipzig, 1873.

Weil G. Geschichte der Chalifen, 3 Bd. Mannheim, 1846—51.
Sédillot L. A. Histoire général des Arabes, 2^e édit, 2 vol. Paris, 1877.

Lebeau, Histoire du Bas-Empire. Edit. St. Martin, Paris 1830.
Gibbon E. The history of the decline and fall of the Roman

Empire. London, 1840.

Rambeaud A. L'Empire grec au dixième siècle. Paris, 1870.

Le Rou G. La civilisation des Arabes.

Petermann I. H. De ostikanis, arabicis Armeniæ gubernatoribus.
Berolini, MDCCCXL.

Hübschmann. Zur Geschichte Armeniens und der ersten Kriege
der Araber. Aus dem Armenischen des Sebēos. Leipzig.

Flügel G. Geschichte der Araber. Leipzig, 1867.

Тизенгаузен В. Монеты Восточного Халифата. Спб. 1873.

Гирласъ В. Права христианъ на Востокѣ по мусульманскимъ
законамъ. Спб. 1865.

Մատենագրութեան պատմութեան պայասանի քաղեալք
յարաբցի պատմազրաց: [Ժարդ: Աարդ: Խոթիւն:]
Ա. պոլիս. 1874.

- Յանձնաւու Առաջինների գլատմութիւն Տարբուդոյ: Ա Ենեաթիկ,
1832.
- Վաղութանաց Բարձրագեղագիտաց գլատմութիւն տիեզերական,
Առակուայ, 1861.
- Աշբեստի Եպիսկոպոսի գլատմութիւն ի Աերական. Ա. գլետեր
բուրգ, 1879.
- Յանձնաւու Հայոցի ի գլատմութիւն Տարբուդոյ, 1867.
- Սովետանաչ Առաջին գլատմութիւն տիեզերական. Ա. գլե-
տերբուրգ, 1885.
- Յանձնաչ Արծըն-ե-այ գլատմութիւն առան Արծընեաց. Ա.
գլետերբուրգ, 1887.



ՂԵՐՈՆԴԵԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1800-1810 800-900

1800-1810

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԵՒՌՆԴԵԱՅ

ՄԵԾԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ

ԳԼՈՒԽ Ե.

ՆԵՐ և առաջին որք և Սմբկ-ալ Մումիկը¹ առաւանեցան զի զէ² ամ կալեալ զիշխանութիւնն Մահմետանի⁽¹⁾: Յետ այնորիկ փոխանորդէ զիշխանութիւնն Մահմետի Սրու-Շաքը և Սմբ և Օթման³, ամս Է⁽²⁾ ի մետասաներորդ ամի Ներակղե⁴ աստուածապահեալ և բարեպաշտ թագաւորին Նոռունց, որ⁵ մինչդեռ էր կենդանի աստուածապահեալն Ներակղես⁶ ոչ կարսցին սփառել զասպատակս իւրիանց ի վերայ⁷ Նրեաստանի. զի համբաւ քաջութեան նորա սփառեալ էր և զարհութեցանէր զնոսա: Աւ նորա տիրեալ ունէր զիշխանութիւնն Նրեաստանի և Սոորեստանի մինչեւ ի վախճան կենաց իւրոց⁽³⁾:

Եւ իրեւ թագաւորեաց որդի նորա⁸ փոխանակ Նե-

¹ Զ. ամբողջմամբէց

² Տ. քառան

³ Զ. առթման, և ամենայն ուրեք զինի՝ առ փոխանակ ո:

⁴ Տ. առա և զինի Ներակղեաց

⁵ Զ. զօր

⁶ Տ. Ներակղես

⁷ Զ. առա և ի առօրեւ բազում անուածութիւն ի վերա

⁸ Զ. նորոց

բակզի հօր իւրոյ՝ յայնմշետէ զարթոցց աէր զհողի աւ
բանցն չարաց, զի առցէ նոքօք զվրէժխնպրութիւն յագւ
զէն քրիստոնէից¹, զորս² մեղաքն առաջի տեսան Աս-
տուծոյ մերոյ: Աւ սկսան զունդ կազմել և զօրս զու-
մարել ի վերաց իշխանութեանն Առատանզնի, ի վերաց
Նրէաստանի և Ասորեստանի. զի զպատուեր օրինագրին
իւրեանց ունեին օժանդակ³, զոր պատուիրեացն որու-
մանցն սերմանողի⁴, թէ ելբէք ի վերաց աշխարհաց, նուա-
ձեցէք զնոսա ընդ ձեռամբ ձերով. զի մեղ, ասէ, տուեալ
և ի վայելո⁵ զպարարտութիւն երկրի. կերայք զմիս ընտ-
րելոց⁶ երկրի և արբէք զարիւն զօրաւորաց: Որոց և
սազրիչք եղին և առաջնորդք՝ Նրէայք⁷, որք երթեալ
ի բանակս Վազիամու ասէին ցնոսա «Երրահամու, ա-
սին, խոստացաւ Աստուած տալ զնակիւն երկրի ի ծա-
ռայութեան, և մեք եմք ժառանդք⁸ և որդիք նահապե-
տին: Արդ ի մէնջ առաջկացաւ Աստուած վասն չարու-
թեան գնացիցն մերոց և երարձ ի մէնջ զթագաւորու-
թեան գաւաղանն և մատնեաց զմեղ ի սարկութիւն ծառ-
այութեան. այլ և զուք էք զաւակիք⁹ Երրահամու և
որդիք նահապետին: Ելբէք ընդ մեղ և փրկեցէք զմեղ ի
ծառայութենէ արքային¹⁰ Յունաց, և ի միասին կալցուք
զիշխանութիւնու մերոց: Երբեւ զայս ևս ըւան՝ քաջալե-
րեալ զիմեցին ի վերաց Նրէաստանի:

Իսկ ապա ազգ եղեալ թագաւորին Յունաց՝ զբէ

1 2.³ քրիստոնէից

2 Տ. որք: — Օր. Տ. և 2.³ այսպէս

3 2.³ աւելինդակ

4 2.³ սերմանաւզք

5 Ի. Տ. պակասէք ի վայելոց

6 2.³ ընդորելոց

7 2.³ որոց և սարդիչք քեզ ենք և

հրեացք առաջնորդք: — Տ. Որք և
սազրիչ մեղ և առաջնորդ Հրեացք
են: — Մեք պատկես:

8 2.³ ժառանդքք

9 2.³ ծառապութեան, այլ և զուք
զաւակ

10 2.³ այբային

առ զօրավարն որ ի Նրէաստանի. «լուսյ¹, ասէ, թէ Աս-
սակինոսպ ելին յարձակեալ² ի վերայ Նրէաստանի և Ե-
սորեստանի։ Երդ գումարեա զզօրս քոյ և մարտիր ընդ
հոսա և արգել զնոսա. զի մի ասպատակեցնե ի վերայ
երկիր մերոյ և ածիցնեն սուր և սատակումն ի վերայ
դոցո³. այլ արդ սպառապինեալ կազմեա զզօրս քոյ⁴:
Իսկ նորս⁵ ընկալեալ դհրամանն օգոստական՝ գրէր⁶ առ
զօրապլուխս որ ընդ իւրով իշխանութեամբ, զի ուր և
եցնեա առ նա հասցեն։ Առ վաղվաղակի հասեալք՝ ի
միասին լինելին բանակ մեծ. և խաղացեալ յառաջ գնա-
ցին ընդդէմ հինին նորս որ զօրացեալ⁷ գայլ ի վերայ
նոցա։ Երթեալ յանդիմանն լինելին միմեանց ի սահմանն
Սպառամբն Երարից⁸. ահանելին զբանակս Վագիամու-
անթիւ բազմութեամբ, և իբրև զգունդս մարտիսոյ՝ զան-
չափութիւն ուղառուցն և ձիոց։ Եպս անդիտացեալ զօ-
րուն Յունաց անդիտութիւն⁹ մեծ՝ զատուցանելին
զաղլսս բանակին իւրիանց բացագոյն ի նոցանէն¹⁰ բա-
զում վատաւանօք, Եքանելին ի բանակին և զերիվարսն իւ-
րիանց. և ինքիանք ի հետիտաս սպառապինեալ ընդդէմ
նոցա զնացին պատերազմել։ Առ ի ջերմութենէ արեգա-
կնային¹¹ տապոյն և ծարաւուա սպառամբէն¹² և յաւա-
զոյն աշխատեալք, և պարտասեալք ի ծանրութենէ զի-
նուցն՝ անկան ի մէջ¹³ թշնամեացն։

1 2.՝ լուս.

2 8.՝ յարձակիլ.

3 8.՝ գորաւ.—Օր. 8. և 2. սպառէու

4 8.՝ ասու և զինի բազում՝ ուրեք՝ քոյ

5 2.՝ նա

6 2.՝ գրէր

7 2.՝ ընդդէմ զինի նորս զաւրս-
ցեալ—թուրի ընթեռնէն¹⁴ ընդդէմ
հինին որ զօրացեալ կամ՝ ընդ-

ու էմ զինին նորս որ

8 2.՝ արարաց

9 8.՝ յանդիտութիւն

10 8.՝ ի նոցանէ

11 2.՝ բազում՝ անգամ՝ արեգակնաբն,
իսմալիի, իսմակլ համաց...12 8.՝ ապառաժիւ—թուրի՝ յանցա-
ռամէն

13 2.՝ ի մէջ

Իսկ նոքա քանզի ի հանգստեան էին՝ յանկարծակից հեծեալ¹ յերիվարս իւրեանց, և յարձակեալ ի վերայ նոց՝ հարին բազում հարուածս ի զօրուէն² Յունաց, և ի փախուստ դարձուցեալ զմնացեալսն, հետամուտ եղեալ մինչեւ ի բանակն³ Յունաց՝ զբազումն առհասարակ կոտորեին. և մնացեալքն հեծեալ յերիվարս փախստական անկան յաշխարհն իւրեանց⁴ (4):

Եւ Իսմայելացւոցն լցեալ յաւարէն Յունաց զանձիւք, և առեալ զկապուտ անկելցն ի սրոյ՝ դարձան խընդութեամբ յաշխարհն իւրեանց: Եւ յայնմշետէ տիրեցին Նրէաստանի և Սորեստանի վերայ. և արիին ընդ հարկօք զաշխարհն և զեկեղեցիս սրոյ քազաքին Երուսաղէմի⁵: Եւ յայնմշետէ դարձեցին ի հարկաստութեանէ⁶ արքային Յունաց Նրէաստան և Սորիք. զի ու կարացին զգէմ ունել⁷ Իսմայելի զօրքն Յունաց: Եւ Իսմայել տիրեաց ի վերայ Նրէաստանի:

ԳԼՈՒԽ Բ.

Իսկ ի գալ միւսոյ ամին⁽⁶⁾ Երուստալ սկսան ընդդէմ արքային Պարսից. և գումարէին⁸ բազմութիւն զօնաց, և եկեալ հասանէին ի վերայ արքային Պարսից, որում անուն էր Յազկերտ (7), որ էր թռոն Խոսրովու: Ժողովեալ և Յազկերտի զզօրս իւր՝ պատերազմէր ընդդէմ

1. 2. առա և ի սոսրէն հեծեալք

2. Տ. ի զօրն: — 2. ի զօրէն: — Մէք եղաք այսոքես ըստ Օր. Տ.

3. 2. ի բանական

4. Տ. Յունաց

5. 1. Տ. պակասէը Երուսաղէմի

6. 2. ի հարկաստութիւնէ

7. Տ. առա և զեկե բազում անզամ ունիք, Խոսիւ...

8. 2. զումարէր

նոցաւ, որում ոչ կարեր ընդգէմունել¹: Հարկանեին զօրս
նորա կոտորմամբ սրոյ, և զթաղաւորն հարեալ սաստա-
կէին: Եւ յայնմշեատէ բարձեալ կործանէր թաղաւորու-
թիւնն Պարսից, որոց եղեւ թիւ² իշխանութեան նոցա-
ամք նա: Եւ Խամայելացոցն³ աւար առեալ զերկիլն
և զգանձսն արքունի՛ հասուցանեին յաշխարհն իւրեանց:

Եւ մեծ մասն զօրուն հատեալ⁴ ասպատակէին յաշ-
խարհս Հայոց ընդ կողմն Պարսից. և առնուին ի գե-
րութիւն զաւանս Մարտ և զգաւառն Գողթն և
զգաստակիրտն Աւախջաւանու⁵. և զբաղումն յարանց
ընդ սուր անցուցանեին, և զայլս գերի վարեալ կա-
նամքը և մանկատեաւ՝ անցուցանեին ընդ գետն Արասխ
ընդ հունն Տռուզայց⁶: Եւ ընդ երկուս⁷ բաժանեալ
զօրքն՝ ոմանք զգերեալսն դարձուցանեին յաշխարհն իւ-
րեանց: Եւ զունդ մի հատեալ ասպատակէին ընդ գա-
ւառն Երտաղ ի վերայ⁸ զօրավարին Յունաց, որում առ-
նուն էր Պռոկոպ, որ էր բանակեալ ի գաւառին Առզով-
տի⁹ ի սահմանս Իշազուձորոյ և Մարտուցոյից. որում
երազեկ եղեալ իշխանն Թէոդորոս, որ էր յազդէն Ուշ-
տունեաց՝ աղդէր զօրավարին Պռոկոպայ, և թէ զօր հի-
նին Խամայելի զարթուցեալ զայ ի վերայ մերու:

Խոկ նա¹⁰ ի բազմութիւն զօրայն ապաստանեալ և
ոչ յԱստուած, որ յաջողէ¹¹ զալատերազմ՝ ոչ ինչ զբեր
դրանս իշխանին Հայոց: Եւ նա մորմոքեալ ընդ կո-
րուստ աշխարհիս Հայոց և ընդ Տռութիւն զօրավա-

1. Տ. որոց ոչ կարեր զգէմ ունել:

2. Օր. Տ. և 2. այսպէս:

3. Տ. եղեւ թիւք:

4. Տ. համայելացոցն:

5. Տ. ամենայն ուրիշ՝ աւախիշեան,

աւախիշեանու:

6. 2. ըուզոցից

7. 2. ընդ երկու:

8. Տ. Երտաղի ի վերայ—2. արտազիկ

վերա:

9. Տ. Պռոկոպիս:

10. 1. 2. պռոկոպէր՝ նա:

11. 2. յաշուի:

լին՝ ոչ ուներ ժոյժ, այլ մտեալ երկրորդէր և երրորդէր զբանն^{1:} Եւ բարկացեալ զօրավարին ի վերայ իշխանին՝ ձգէր զվարզն որ ի ձեռին զհետ նորա: Եւ սրամմանալ թէոդորոս՝ ելաներ յերեսաց նորա, և նոյնամայն հրամայէր զօրացն, որ ընդ իւրով իշխանութեամբն էին, պառեցարուք, ասէ, և ելքը ընդգէմ Խամացելի^{2:} Եւ նորա հեծեալ^{3:} յերիվարս իւրեանց՝ դարանամուտ եղեն ի սուրակին, որում Եղբարսն կուլին. և կալեալ զառաջն կրծիցն՝ զբաղումն ի նոցանէ սատակէին. և առեալ զկապուտ անկելոցն^{4:} Հատուածեալ ի զօրավարէն զնացին ի դաւառն Վառնի: Ճրաման ետ ապա և Պռոկոպն իւրում զօրուն ելանել ի վերայ թշնամեացն. յորոց վերայ հեղեալ զօրն Խամացելի^{5:} Հարկանէին զմեծ մասն Յունաց, և զայլսն փախստական արարեալ անցուցանէին ընդ բանակին իւրեանց. և ինքեանք զարձեալ ի բանակին^{6:} Նոցա հանդէին: Եւ ասեն լինել զմիւ զօրացն Յունաց աւելի քան զվեց բիւր արանց, և զԽամացելացիսն նուազքան դրիւր մի արանց: Եւ ի վաղեւն ժողովեալ զկապուտ բանակին, դարձեալ^{6:} ընդ կրունէին զնացին յաշխարհն իւրեանց:

Եւ եղեւ այս ի քսան և երկրորդ ամի Սրու-Բաքրայ^{7:} և Օթմանայ և Սմրի, իշխանացն Խամացելի: Եւ դադարեցին յելանելց ի վերայ աշխարհիս Ճայոց ամս գ: Սպա ի քսան և վեցերորդ ամի նոցին իշխանութեանն դարձեալ յարձակէին ելանել ի վերայ աշխարհիս Ճայոց զօրու ծանու:

1 Զ.՝ զբանան

2 Զ.՝ խամացելի

3 Զ.՝ հեծեալք

4 Զ.՝ անգելոցն

5 Զ.՝ ի բանակս

6 Տ.՝ և դարձեալ

7 Տ.՝ Սրու-Բաքրի

ԳԼՈՒԽ Գ.

Յերկըսրդ ամի Առատանդնու¹ կայսեր Նոռոմեց, որ
էր թոռն Ներակղի՝ ազգ եղե առ իշխանն Թահողոլոս,
եթէ հեն զարթուցեալ զայ ի վերայ աշխարհիս: Իսկ
նորս առևալ զզօրս իւր՝ կամլք ունել զկիլքն ձանա-
պարհին Զորայց, այլ ոչ կարաց ժամանել յառաջնո-
ցա, քանզի բատ օդաթեն արագութեան յարձակեալք
երրեւ օձք թեւաւորք յառաջեցին թշնամիքն, և զինի իւ-
րեանց թողեալ² զզօրսն Նայոց՝ զէմ եղեալ ընթացան
ի մայրաքաղաքն Կուէն(8): Եւ վասն զի թափուր զտին
Դքաղաքն յարանց պատերազմողաց, զի ամենեքեան³ զհետ
Թահողոլոսի իշխանին զնացեալ էին, բայց միայն զիա-
նայս և զմանկտիս և զայլ խառնիճաղանձն, որք ոչ էին
արք պատերազմի՝ հասին ի վերայ քաղաքին և վաղվա-
ղակի առին զամբոցն, և զգաեալ արսն ի նմա կոտորե-
ցին, և զիանայս և զմանկտիս վարեցին ի գերութիւն
ողիս⁴ լը (9):

Վարդ ով արդեօք⁵ արժանաւորանկէս ողբասցէ զթը-
շուառութիւն աղետիցն. քանզի ամենայն ուստեք անհը-
նարին էր վասնգն: Օչի սուրբ եկեղեցիք, յորս ոչ էր
արժան հեթանոսաց մտանել՝ քանզեալ և քայլայիալ՝ կո-
խան պիղչ⁶ ոտիցն անօրինաց լինէին⁷, և քահանայք
հանդերձ սարկաւագօք և պաշտօնեիւք խողիսողեալ ու-

¹ Տ. Առատանդեաց: — Այժմակո ըստ

² և բատ Օ. Տ. Տ.

³ Տ. թողեալ

⁴ Տ. առաջնորդին

⁴ Տ. յոզիս

⁵ Տ. արդեօք

⁶ Տ. պակասէլք, ողիչ

⁷ Տ. լինէլ

բով ժողիրշ՝ և անողում թշնամեացն. և բաղում տիկ-
նայք փափկասունք, որոց ոչ էր առեալ գփորձ նեղու-
թեան՝ զանալեց քքօք¹ թշնամանեալք և քարշեալք ի
հրապարակս՝ զկականութն ողբոցն բարձրացուցանեին
վասն յիշակարձութն օրհասին. Այլ և աշխարհակառմք
բազմութեանն ըմբռնեալք ուստերօք և զստերօք ի նոյն
վասնդս՝ յաճախեին դհառաչանս և դշեծութիւնս. զի
ոչ զիտեին՝ զօր առաւել ողբացեն, զխողխողեալսն յա-
նօրէն սրոյն, եթէ զինդանւոյն² անջատեալսն զուստերս
և զգատերս, օտարացուցանել ի հաւատոյն որ ի Վրիս-
տոս և ի հոգեռոր յաստուածային³ փառատրութեանցն:
Եւ զոմանս ողորմելի տեսլեամք անկիեալ զիակունս ի
վերայ զիականց ընդ արիւն թաթառեալք թէպէտ և ող-
բովք աշխարեին՝ ոյլ ոչ էին ձեռնհաս⁴ ամիտովել զմար-
մինսն և տալ գերեզմանի: Եւ ի գէպ էր զմարզարեա-
կանն⁵ առնուլ ողբս, որ տաէ Աստուած, մտին հեթա-
նոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ
քո, և արկին զդիակունս ծառայից քոյ՝ գէշ թռչնոց
երկնից, և զմարմինս սրբոց քոյ՝ զաղանաց երկրի. և ոչ
ոք էր որ թաղէր զնոսա»⁶: Զայս ամենայն անցս պա-
տուհասից, յայնժամ Արէաստանի աղէտսն, և այժմ առ
մըրս հասեալ տարակուսանս՝ դէպ եղեւ առնուլ:

Իսկ զօրքն Նայոց Հանդերձ նախարարօքն և իշխա-
նաւն իբրև տեսին զէինս ասսամիկս հասեալ ի վերայ նո-
ցա՝ Լքան ձեռք արանցն պատերազմողաց, և ոչ կարա-
ցին յարձակել ի վերայ հինին. զի թէպէտ և տեսանեին
զկանացս և զմանկունս իւրիսանց վարեալ ի գերութիւն,
ոյլ քանզի նուազունք էին թռուով՝ ոչ կարացին ի զիմի

1 Տ.՝ թքօք

2 2.՝ զինդանոյն

3 Տ.՝ առնուլածացին

4 2.՝ ձեռնհաս

5 Տ.՝ զՄարզարեին

6 Սազմ. ՀՅ. 1—3:

Հարկանել նոցա. այլ նստեալ միայն ողբովք և աշխարհանօք աւաղելին դիանայս և զմանկունս իւրեանց: Եսկ առաջացիքն առեալ տանելին զնոսա յերկիրն Ասորւոց¹. և դադարեցին յելանելոյ ի վերայ աշխարհիս այսոց ամս ժ:

Եպա յետ այնորիկ յերեսուն և վեցերորդ ամի² իշխանութեանն նոցա զօր ժողովեալ դարձեալ յարձակեցան ի վերայ աշխարհիս այսոց. որոց էին զլխաւորք Օթման և Օզբայ: Եւ իրեւ հասին ի սահմանս այսոց՝ յերիս բաժանեալ առաջս՝ սփոհցան յասպատակս իւրեանց: Առաջ մի հասեալ ընդ կողմն Ասապուրական աշխարհին՝ առին զաւանս և զամրոցս որ մինչեւ ի նախջաւան քաղաք. և առաջ մի ընդ կողմն Տարօնաց: Եւ միւս առաջն հասեալ ի Առզովիա³ պաշարելին զամրոցն⁴ Վրծափայց: Եւ գտեալ զմուտ բերդին՝ ի զիշերի գաղտադողի ելին ինս, զի ի քուն գտին զպահապանսն, և առին զամրոցն, և զգտեալ արսն⁵ որ ի նմա արկին ընդ կապանօք: Եւ ի բազում անհոգութեան եղեալ այնուշեան խառնակելին զազրալից պղծութեամբ⁶ ընդ կանցան: Յորս զթացեալ ամենատեսն Աստուած՝ սատանօր ոչ անտես առնելր զհաւատացեալս անուան իւրօյ, այլ առաքել ի վրէժինզրութիւն չարեացն զոր գործեցին՝ զիշանանն Խէնոդորոս. որոյ երազաթե⁷ յարձակմամբ երբեւ զիսյանալ արծուոյ⁸ հասեալ ի վերայ հինին եկեւյց, և ընդ նմա արք և վառեալք զինու, վազվազակի հասեալք՝ սատակելին զթշնամիսն իրեւ արս չու, և զկապեալմն արձակելին. և զսակաւ մնացորդմն թշնամեաց փախստական արարեալ՝ դարձուցանելին զգերեալուն:

¹ 2.¹ ասորաց

² 2.² երրորդ ամի

³ 8.¹ Պողովիա—2.² կողովիա

⁴ 2.³ զամրոցս

⁵ 2.⁴ զարմն

⁶ 8.¹ ողջառութեամբք

⁷ 8.² արագաթեա

⁸ 8.³ արծուց

և զաւար և զկապուտ թշնամեայն ժողովեալ՝ դարձան
խնդութեամբ, փառաւորելով զԱստուած, որ խնդրեաց
զվրէ՛ք ի թշնամեաց¹ նոցա: Իսկ այն զօրք, զոր յառա-
ջազդյն պատմեցի, առեալ զաւար և զգերեալսն՝ զնացին
աշխարհն Ասորւոց². և գագարեցին յիտ այնորիկ ամս
է⁽¹⁰⁾:

Եւ զայս չարիս կատարեալ իշխանացն Իսմայելի Ա-
րու-Իազըրայ³, Օթմանայ և⁴ Ամրի յաւուրս իւրեանց՝
վախճանեցան:

ԳԼՈՒԽ Դ.

Յիտ նոցա ունի զիշխանութեանն ոմն Վառաւիա⁵
ամս ժի և ամիսս դ և վախճանի: Եւ եթէ զիարդ յա-
ռուրս նորա էր իշխանն Վրիդոր, և որ ինչ անցք ան-
ցին ընդ աշխարհս չայցոց, և մահուան իշխանացն:

Ի սորա յառաջնում ամի իշխանութեանն և ի էլ⁽¹¹⁾
ամի Առատանդնի⁶ կայսեր, որ էր թոռն Ներակլի, սկը-
սաւ զօրս գումարել ի վերաց աշխարհիս չայցոց իշխանն
Տաճկաց: Վզգ եղե առ թագաւորն Առատանդին բանն⁷.
և հրամայէր զօրավարին որ ի կողմանս Ալղեկեցւոց,
ելանել ընդգէմնոցա: Ընկենոյր և զիշխանն Թէոդորոս
յիշխանութենէն վասն նենդութեանն, զոր արար առ
զօրավարին Պոռկոպայ, և փոխանակ նորա կացուցանէր

1. 2.՝ թշնամեաց

2. բազում անգամ՝ ասորոց, կե-
լեկեցոց...

3. Տ. Արու-Իազիրայ

4. Ի 2. պակասէր՝ և

5. 2.՝ մահիս ոմն. (ընթեռնին մա-
սիս ոմն): Ի սորեւ մաւելա-

6. 2.՝ կոստանդիանոսի

7. 2.՝ բանքն

զԱմբատ (12) ոմն ի տոհմէ Բագրատունեաց, և առաքէր ընդ զօրավարին իւրում: Գրէր և առ Թէոդորոս Ուշտ տունի¹, որ յառաջն իշխանն էր, ասէ մէլ ընդ մեղ ի պատերազմ զօրք² որ ընդ ձեռամբ քո է: Եւ ոչ կամցաւ նա կանել: Գրէ պարձեալ երկրորդ անդամ: Աթէ ոչ ելքես ընդ մեղ ի վերայ հինգա՝ ի գառնալն մերում այսրէն ջնջեսուք զտունդ քո յազգատոհմէ մերմէ: Որոյ երկուցեալ ի սպառնալեացն՝ հանդերձէր զըրդի իւր ըզ-Վարդ (13) երթալ ընդ իշխանին Ամբատայ, և տայր հրաման՝ նենդութիւն առնել սիրելեացն և միարանել ընդ³ Թշնամեացն: Որոյ երթեալ առ զօրավարին Յունաց՝ ըուեցին ի կողմանս Շառուց և անցին ընդ զոմն Նվիրատայր⁴: Եւ մատուցեալ որպէսյն Թէոդորոսի առ զօրավարին իննդրէր զինքն կարգել⁵ պահապան նոււակիամբ-Հացն, և նորա հրամայեալ նմա պահել զիսելս զոմցին:

Եւ իրրե բախեցին ընդ միմեանս պատերազմաւ, և անկան յերկոցունց կողմանցն հարուածք՝ դարձեալ զօրացեալ զօրքն Տաճկաց՝ փախստական⁶ արարին զգուն-Դրն Յունաց, յաւուր մեծի շաբաթուն զատկին: Իրրե ետես որզին Թէոդորոսի զյազլժութիւնն Իսմայելի՝ զօրացեալ անցանէր յայնկոյս⁷ զետցին, և հատեալ կարեաց դարս կամբջին, զի մի ապրեսացին փախստեայքն: Եւ նոցա ի մէջ արարեալ զզօրսն Յունաց՝ զոմանս զետա-վէժս⁸ առնէն, և ոմանք զերծան⁹ փախստեամբ¹⁰ յաշխար-հըն Յունաց: Եւ յայնմէշեաէ լքաւ սիրտ ալքային Յու-

¹ Զ. ըռըշտունի

փախստական

² Զ. զարովք

Դ. յանկոյս

³ Ի. 2. պակասէր ընդ

Տ. գետավէժ

⁴ Զ. եւիրատա

Օ. գերծեալ

⁵ Ի. 2. պակասէր կարգել

Ս. փախստեայց

⁶ Տ. զորացան զօրքն Տաճկաց և

10 Տ. փախստեամբ — Օ. Տ. և Զ. այս-

ողէս

նաց, զի զիտաց, եթէ¹ ի տեսունէ, և խոտորումն իշխառնութեանն նորա. և ոչ ևս յաւել ելանել ի վերայ Եստմայելի:

Իսկ իշխանն Եսմայելի զրէ հրովարտակ յաշխառհաշու հայոց. եթէ ոչ հարկեաջեք ինձ և ոչ անկծեք բնդ լծով ծառայութեան իմոյ՝ ի սուր սուսերի մաշեցից զամենանան: Յայնժամ ժողովեալ² ի միասինքահանայապեան³ հայոց Անքաւէս (14), շնորդ սրբոյն Գրիգորի, և իշխանը և նախարարը աշխարհիս՝ յանձնն կալան հարկել բռնութեան Եսմայելացւոցն: Ծորոց խնդրեալ պատանիք՝ տային երկուս ի նախարարացն հայոց զԳրիգոր ի Մամիկոնեան տանէ և զԱմբատ ի Բագրատունի տանէ: Եւ տարեալ զնոսա իշխանն Տաճկաց Վոււաւիս⁴ հատին ի վերայ աշխարհիս հայոց հարկիս շ դահեկան (15) ի միում ամի հատուցանել նոցա, և աներկիւդ մնալ ի բնակութիւնս իւրեանց:

Իսկ յերկրորդում ամի իշխանութեանն Վոււաւիտ կոչ զԳրիգոր և զԱմբատ, որ էին պատանիք ի զրանն արքունի. և տայր Գրիգորի զպատիւ իշխանութեանս հայոց. և առաքէ զնոսա բազում մեծարանք յաշխարհս հայոց: Եւ եղե բազում խաղաղութիւն յաւուրս նորա իշխանութեանն:

Եւ յետ նորա Եղիտ որդի Վոււաւեայ⁵. և ազրի ամս է և ամիսս է, և վախճանիւ Եւ նա վարեաց զաշխարհս հայոց ի նոյն սակ հարկի:

Եւ յետ նորա Արդլ-Մելք⁶ (16) որդի Վրոււանայ: Եւ եկեաց⁷ ամս էս և վախճանեցաւ: Եւ այս է⁸ վարք նորա:

1 Տ. թէ

2 Տ. ժողովեալք

3 Տ. քահանացապեայն

4 Տ. առա և ի սուրեմ մաւեա

5 Տ. եղիտ որդի մաւեա

6 Տ. արդլմիւք

7 Տ. եկեաց

8 Ե. 2. պակասեր է

Նա էր այր ժանտ և զոռ պատերազմող¹: Ի յերկրորդում ամի իշխանութեան նորա եղեւ խառնակումն սաստիկ ի մեջ Տաճկաց և պատերազմ, և բազում հեղումն արեանց ինքեանք յինքեանց² հանեին: Եւ սաստիացաւ պատերազմ ի մեջ նոցա զբ ամս. և անթիւ եղեն սպանեալքն ի նոցունց մինչեւ ի կատարիւ³ մարդարէութեանն Դաւթի, որ ասէ, «սուրբ նոցա մոցեն ի սիրտս իւրեանց⁴, և աղեղունք նոցա փշքեսցին»⁵: Օ-ի փօխանակ անսպարտ արեանն և անողորմ սաստակմանցն, զորս յաձախեցին ի վերաց ազդիս քրիստոնէից՝ արիւն վրիժապարտ հեղաւ իրաւացի. և պահանջեաց Աստուած Վրէք արհամարհանաց ծառայից իւրոց նոցին իսկ ձեռքը:

Եսկ Գրիգոր իշխանն Նոյոց յաւուրս իւրոց իշխանութեանն խազազացցց զաշխարհո Նոյոց յամենայն հինից և յարձակմանց. զի էր այր երկիւղած⁶ յԱստուծոյ, եղայլսասէր և օարարսասէր և գարմանիւ ազքատաց, և կատարիւալ ի հաւատս աստուածպաշտութեան: Եւ շինաց նա տուն ազօթից ի զաւառն Արագածոտնին⁷ ի յաւանն Արուճ, աաճար փառաց անուան տեսոն գեղեցիկ վայելքութեամբ, զարդարիւալ ի յիշատակ անուան իւրոց:

Եւ ի ժամանակի պատերազմին որ ի մեջ Տաճկաց՝ դադարեցին ի հարկատուութենէ⁸ նոցա Նոյք, Ա-իւք, Աղուանք, ծառայեալ նոցա ամս և Եւ եղեն աւուրբք ապլուտամբութեան նոցա ամք ք: Եւ ի ըորբորդում ամին

¹ Զ. և Օր. Տ.՝ պատերազմաւ (Թառի թագարեցին պատերազմուոց): —

² Թագարեցին պատերազմաւ (Թառի թագարեցին պատերազմուոց):

³ Տ.՝ յիշեալքութեանց—Օր. Տ. և Զ.

այսպէս:

⁴ Զ.՝ նոցա

⁵ Սարգ. ԼԵ. 15:

⁶ Զ.՝ երկեզած

⁷ Տ.՝ Արագածց սովին

⁸ Զ.՝ ի հարկատուութենէ

տիրեցին ի վերայ աշխարհիս Հայոց հիւսիսային¹ աղջին,
որ ասին Խազելք (¹⁷), և սպանին ի պատերազմին զիշխանն
Գրիգոր և զբազումն ի նախարարացն և զիշխաննն²
Վարաց և Եղուանից: Եւ ինքեանք ասպատակ սփռեալ
ի վերայ աշխարհիս Հայոց՝ առին զբազում գտւառս և
դաւանալ և առեալ զաւար և³ զգերութիւն՝ զնացին
յաշխարհն իւրիանց:

ԳԼՈՒԽ 1.

Ա ասն Աշոտի իշխանութեանն, և պյրեցածին Հոռ
ոսիկ⁴, և մահուանն Աշոտի⁵:

Իսկ ասպայեալ մահուանն Գրիգորի յաջորդէ զիշխա-
նութիւնն Աշոտ պատրիկ, այր երեելի և նախամեծար
ի մէջ նախարարացն Հայոց, ի առհմէ Շազբաատունեաց,
ձոխ և պերճ յիշխանութեանն, և յամենայն վարս երկրա-
յինս զգաստ և առուքինասէր և աղնուական քան զամե-
նեսեան և ծանօթ երկիւղին⁷ Սատուծոյ, և հոգաբարձու-
ամենայն բարեգործութեան, փցթ յուսումնասիրութեան.
և զարդարէր զեկեղեցին Սատուծոյ վարդապետական ար-
ուեստիւք և պաշտօնէից խմբաւորութեամբ, պատուէր և
երեելի սպասուք⁸ յիւրոց գանձուց: Եւ շինէր զեկեղեցին
Դարիւնից յիւրում ոստանին, և զեկեղեցին զպատ-
կեր մարդեղութեանն Վրիսառսի ածեալ ի մաիցն արեւու-
մեծապանչ զօրութեամբ՝ հանգուցանէր ի նմա. և նորա-
անուամբ զեկեղեցին անուանեաց (¹⁸):

1 Զ.՝ հիւսային

2 Զ.՝ պիշխանն

3 և Զ.՝ պակասէր՝ զաւար և

4 Զ.՝ Հառամցի

5 Զ.՝ մահուան

6 Զ.՝ Աշոտից

7 Զ.՝ Երկեղի

8 Զ.՝ սպասուք

Եւ յառաջնումն ամի իշխանութեան նորա երեեցաւ աստղն զարմանալի տեսլեամբ վարսաւոր, զի ձանձնը¹ նշաղիցն սիւնաձև յիւրամէն փողփողէր զլցյան յետոյ ինքեան, զօր² անուանեալ կոչէին աստղ դիսաւոր, որ եղեւ նշանակ սովոյ և սրոյ և մեծի սասանութեան:

Եւ յիրկրորդում ամի թագաւորութեանն Յուստիանոսի³ կայսեր(19), և յիշխանութեանն Եշտափ⁴ պատրիկ առաքէ զօր բազում⁵ ի վիրայ աշխարհիս հայոց. որք եկեալ աւերեցին զաշխարհս աւարառութեամբ և զրազում զեղեցկայաբար շնուրածս հրձիդ արարին յաւերդարձաւ յանուցանելով, և ինքեանք գառնային յաշխարհն իւրանց: Եւ զայն Յուստիանոս թշնամանեալ մեծամեծացն Յունաց և կտրեալ զքիթսն՝ աքսորեցին, և փոխանակ նորա թագաւորիցուցին զլեւոն և զԵփսիմերոս⁶(20) և զՏիրեր(21) և զԹէոզոս(22): Իսկ Յուստիանոս զնացեալ յաշխարհն Խաղբարաց՝ առնցըլ իւր կնութեան բգդուստրն Խաղբարաց արքային Խաղբարաց. և խնդրեալ ի նմանէ զօրս յօդնականութիւն: Եւ նա առաքէր զօր բազում և զՏրուէզ(23) ոմն աներ Յուստիանոսի ընդ զօրումն, այլ հզօր զօրութեամբ: Եւ հասեալ ի Աստանաց գնութեալիս⁸ մարտ եղեալ յաղթէր հակառակորդացն, և վիրսաբն հաստատէր զթագաւորութիւնն: Եւ Տրուէզն մեռանէր ի պատերազմին: Իսկ զայլ զօրսն Խաղբարաց առաքէր բազում պարզեօք և պատուական ստացուածովք յաշխարհն իւրեանց:

Իսկ Եշտափ կալեալ զիշխանութիւնն ամս ու և

¹ Զ.՝ համանա՞ն

² Զ.՝ որ

³ Զ.՝ յուստիանոս.

⁴ Տ.՝ ամենայն ուրիշ՝ աշխաց:—Օր.

⁵ Տ.՝ մերժ աշխաց և մերի աշխաց


⁶ Տ.՝ զօրս բազում

⁷ Տ.՝ զենքն և զափնեմերոս

⁸ Տ.՝ աստ և ի առորեա որուեց

⁹ Տ.՝ կոսուանդիտուազիս—Տ.՝ Կոս-

տուազնուոգիս



չորրորդ ամի իշխանութեան նորա զունդ մի ասպատակութեամբ յորպւոցն Խամայելի յարձակեալ ի վերայ աշխարհիս Նայոց, որ էին որդիք յանցանաց և զաւակք¹ անօրէնութեան, գործէին զանօրէնութիւն յաւանս Աւարաց ի Խրամ, ի Քուղայ և ի Խոշակունիս. դի զարսն հարկապահանջութեամբ խոշտանգելին, և զիանայսն զաղը բայից պղծութեամբ խորհեին խայտառակել ըստ անօրէնութեանն իւրեանց: Ազգ եղեւ առ իշխանն Աշոտ համբաւ չարեաց նոցա, և վաղվազակի հրաման տպըր զօրուն² ելանել ի վերայ նոցա: Հարին զամենեսեան սատակմամբ սրոյ, և զմնացորդսն փախտական առնէին: Խրիե հաես խորամանկ³ որդին սատանայի դշէնն ի վերայ իւր⁴ սաստկացեալ՝ հրաման ևա զօրաց իւրոց զգանձն ժողովեալ ցրուել⁵ ի դաշտին սաւածի զօրացն Նայոց. և նոցա անխորհրդաբար զարձեալ յաւարն՝ թուլացան ի հետոց նոցա: Բայց միայն իշխանն Աշոտ սակաւ արամբք պնդեալ երթայ զինի նոցա. և զօրացեալ թշնամեացն՝ զարձան ի վերայ նոցա, և հարեալ վիրաւորեցին զիշխանն Նայոց: Ազգա ճիչ բարձեալ զօրացն՝ և նոքա վաղվազակի հասեալ հարեալ սատակէին զթշնամիսն. և ինքեանք առեալ ածէին զիշխանն ի Առզովիտ⁶ կարեվեր խոցմամբն, որ ի նոյն մահին զանանեցաւ փառաւուրագիս, և թաղեցաւ ի կայս հանդսահան իւրոց ի զիւղն⁷: Դարիւնս:

1 2.³ զաւակք2 2.³ զօրացն3 2.³ խորամանգ

4 Ի 8. պակասեր իւր

5 2.³ ցրուեալ6 2.³ իսկ7 8.³ Գոգովիտ8 2.³ ի զիւղն

ԳԼՈՒԽ Օ.

Ա ասն մօրին կոռուին:

Յետ այնորիկ զոր պատմեցաք՝ դարձեալ զօր առա-
քեր արքայն Յունաց որում Սփսիմերոսն¹ կոչէին, որ
փոխանակ Յուստիանոսի² կայսեր. և հրամայէր ունել
զԱմբատ³ (24) որդի Վարազտիրոցի, որպէս թէ քինա-
խնդիր եղեալ՝ զոր կրծտահաց նա ի զօրացն Յունաց վասն
մահուան հօրն իւրոյ Վարազտիրոցի, զոր սպանին ո-
ռումքը. Եւ եկեալ պատերազմեցան ընդ նմա ի մօրամեջ
դաշտին Պայիիկայ. և բազում եղեն հարուածք զօրացն
հայոց զե նուազունք էին: Մնկան և ի զօրուէն Յունաց
յոլովք: Իրբե ետև Ամբատ, եթէ ոչ կարէին զգէմ ու-
նել զօրացն Յունաց՝ փախստական եղեալ գնաց մազա-
պուրծ⁴ սակաւ արամբք. և զօրին Յունաց դարձան
յաշխարհն իւրեանց:

ԳԼՈՒԽ Ե.

Ճառեցից դարձեալ վասն անշնարին աղետիցն⁵ որ
ենաս ի տոհմէն Խամայելի ի վերայ մեր: Օք յիտ ժուա-
մի իշխանութեանն Աբգլ-Մելքը՝⁶ դարձեալ զրդուեալ
սիրտն նորա ի չարասէրն սատանայէ և հրամայեաց զօ-
րաց իւրոյ ելանել ի վերայ աշխարհիս. որոց զօրադուին

¹ Զ. ափսեմերոսն

² Զ. յուստիանոս.

³ Զ. առա և զինք սմբատ, զամբատ

⁴ Զ. մազապուրծ

⁵ Զ. աղետիցն

⁶ Զ. աբգլ-մելք

Եր արիւնաբրուն¹ և այսակիցն Մահմետ, որոյ գաշինոց
անօրէնութեան ուխտեալ առ իշխանին իւրեանց երդմամբ՝
չդարձուցանել զոռւր ի պատեանս մինչեւ ի մեջ աշխար-
հիս: Աւ զնացեալ խրոխտալով մինչեւ ի գաւառան Պեր-
մաձոր ելանէր, և զորս միանգամ գտանէր՝ սուր ի զործ
արարեալ կոտորէր անխնայ ըստ խոստմանց իւրեանց:
Բայց զի բաղմաց ազդ եղեալ էր² յառաջադրոյն՝ զզու-
շացան յամրոցս բերգից ապաստանեալ: Ըսնոյր և բա-
զում ամրոցս խարեւութեամբ, քանզի պատիր բանիւք
կոչէր ի խաղաղութիւն: Աւ իրեւ վստահացեալք իջա-
նէին յամրոցայն՝ սուր ի զործ արարեալ կոտորէր զարոն
և զկանայս, և զմանկունան³ վարէր ի զերութիւն: և
տագնապ հասուցանէր աշխարհիս՝ մինչեւ երանել զմ-
ռեալսն, որք խաղաղական հանգստեամբ յաշխարհէս փո-
խեցան, քան այնպիսի նեղութեամբ զինզանութիւն կրել:

Աւ զինի է ամաց ի զուտի ամբարշտութեանն⁴ հա-
սեալ՝ փսխէր զմահարեր թշնան, նիւթէր ի վերայ ուխ-
տին սրբոյն Գրիգորի զմահ⁵ Քանզի տեսին զվայելըու-
թիւն երեելի և⁶ պատուական սպասուցն, որ ի նման
ամբարեալ թագաւորացն, իշխանաց և նախարարաց աշ-
խարհիս: տեսին և զկարգաւորութիւն հրեշտակակերպ
դասուց քահանայտկան երաստուց, ընդ նմին և զվար-
դապեաացն և զպաշտօնէից բարեկարգութիւնս և զհը-
րեշտակական երզս ի վերայ երկրի: Աւ խանզացեալ⁷ խո-
ցեցան յոզիս իւրեանց, և դաւաճանեալ նիւթեցին ի վե-
րայ նոցա զմահարեր կորուսան: Զի երթեալ զունդ մի
անօրինաց օթեանել ի յարէս նորա, և յարուցեալ ի զի-

1. Տ.՝ արեանաբրուն:

2. Ի. 2.՝ պակասէր՝ էր

3. Հ.՝ զմանզանան:

4. Հ.՝ մուրութեանն:

5. Ի. 2.՝ պակասէր՝ և

6. Հ.՝ խանզանցեալ:

շիրի՝ զծառայ մի զիւրեանց խեղդաման արտարին և ընկեցին ի խորափիա մի, և ընդ լուսանալ առաւօտին յարեան ի գնալ։ Եւ խնդրեալ զծառայն զոր ինքեանք խող-խողեալն էին՝ և ոչ դաին. և բաղրւմ նեղութիւն և վրանդ հասուցին ի վերայ ուխտի եկեղեցւոյն¹։ Եւ յոյզ արկեալ դաին ի խորափիաին, յոր ընկեցեալն էին. և նոյն ժաման բաղայս ստութեան կարկատեալ ի վերայ՝ կալան զամենեսեան ի փաքուէ մինչեւ ի մեծամեծու և եղին ի բանափի². և զրեցին հրովարտակ առ արիւնարբուն Մահ-մետ, եթէ զայս և զայս³ գործեցին ընդ մեղ. արդ որպիսի մահուամբ կորուսցուք⁴։ Որոյ լուեալ զայս՝ ըստ կամոց իւրեանց դատել ասէ⁵ զնոսս, և զինչս եկեղեցւոյն վասրել յաւարին։ Եւ ընկալեալ դաշճայն զշրամանն անիբաւու՝ զմիմեամբք⁶ ելանէին կատարել զհրաման հօրն իւրեանց սատանայի, որ ի սկզբանէ մարդասովան էր և ի ձշմարտութեան ոչ եկաց⁷, որպէս ի տեսանէ ուսուք։ Եւ ածեալ զամենեսեան արտաքս ի բանեէն տոռամբք կազանաց՝ նախ ծայրակոտոր առնէին զոտսն և զձեսս, և սպա զիայտէ կախեալ բառնային զինդանութիւն նոցա:

Ըրդ ով ոք առանց արտասուաց բերիցէ զահնշարին աղէտսն որ ժամանեաց նոցա. զի սուրբ եկեղեցին խըրթ-նացեալ ի բարեզարդութիւնէ⁸ բեմին և լուեալ ձայն ասուուածային փառատրութեանն. ընդ նմին լուեալ հոգեոր և բանաւոր պատարագայն կարգք, զոր սուրբքն մատուցանէին⁹ սրտի մաօք միայնոյ մաքրագունին։ Շիջեալ և պայծառութիւն լապտերացն, որովք զդիշերն որպէս զտիւ լուսաւոր առնէին։ Դադարեալ և ըուրութն անու-

¹ 2.³ եկեղեցին

² 2.³ ի բանդի

³ 8.³ զայս և զայն

⁴ 1. 2. պակասէր՝ ասէ

⁵ 2.³ զիմեամբք

⁶ Յովհ. Ռ. 3. 4.

⁷ 2.³ ի բարեկարգութիւնէ

⁸ 2.³ սուրբք նմա մատուցանէին

շահոս իննկոցն և մաղթանք քաշանայից, որովք զփառ-
ուարութիւն¹ ժողովրդոցն նուիլիէն արարչն և զհաշ-
տութիւն ի մարդասիրէն² Աստուծոյ հայցէնն: Եւ մի-
անգամայն ասել՝ ամենայն բարեվայիլըութիւն խորանին
աեառն գատարկացեալ: Ո՞վ Քրիստոսի երկայնամառու-
թեանն³: զիարդ արգեօք⁴ ներեաց անօրինացն զբար-
տութեան ածել ի վերայ փառաւորչացն իւրոց զգառ-
նութիւն մահուն այնորիկ. այլ առժամայն մահուամբն
կամեցաւ, զի զյաւիտենական կեաննն պարզեսցէ: Զի
որք չարբանայն կցորդք⁵ եղն՝ և փառացն հազորդ
լինելոց են. և զի խաչակից եղն Քրիստոսի՝ և ընդ նմա-
թագաւորեացեն. և որք մեռան ընդ նմա՝ ընդ նմին և
կենազործեացին և⁶ յաւիտեանս յաւիտենից ժառանգեա-
ցեն զիսոստացեալն հանգիստ: Եւ զործունեացքն⁷ սա-
տանայի. ընդ նմին ժառանգեացն զպատրաստեալ նոցա
զգառնութիւնն բազմատեսակ տանջանաց զհուրն և ըզ-
խաւարն, զորդնն անվախճան, զլայն աչաց և զկրամտելն
ատամանց, զորոց տեսակս⁸ զիտէ ինքն որ պատրաստեաց
զնոստ: Այս ամենայն գալոց է ի վերայ ամենեցուն, որ
զործին զանօրէնութիւն:

Իսկ Մահմետն, զորմէ պատմեցաքն՝ կատարեալ զայռ
ամենայն չարիս⁹, գնայ անդէն բազմում աւարաւ¹⁰ յԱսո-
րեստան: Իսկ բնակիչք աշխարհիս մնային իբրև զիսան-
ձող ծիսեալ ի հրոյ և իբրև զորան վանակ¹¹ փիսրեալ զոր-
տո ոտն կոխեալ խոզից:

1 2.՝ զքաւութիւն

2 2.՝ ի մարդասիր

3 8.՝ երկայնմառութեանն

4 2.՝ արգեօք

5 2.՝ կցորդ

6 1.՝ պակասէք և

7 2.՝ զորմաւնեցքն

8 2.՝ տեսակ

9 2.՝ չարիքա

10 2.՝ աւարաւ

11 8.՝ արտաքս ընկենոյք զբառող զւո-
նակ, իբրև ազաւազեալ

ԳԼՈՒԽ Բ.

Եւ իրրե զնաց Մահմետ զօրսավարն յԱսորիս՝ ե-
թող յաշխարհիս Հայոց իշխան փոխանակ իւր յԱսմա-
յելացւոցն։ Որոյ խորհուրդ վատ ի մէջ առեալ բառնալ
զաղատախումբ տոհմի յաշխարհէս Հայոց հանգերձ նո-
ցին հեծելովք։ Եւ անդէն վաղվաղակի յոցմնեցաւ նեն-
դութիւն նորա Ամբատաց, որ էր ի տոհմէ Բագրատու-
նեաց, և այլոց նախարարաց և նոցին հեծելոց։ Իսկ իր-
րե զգայր զգաւաճանութիւնն՝ կոչեր առ ինքն զշամա-
զունս իւր զաղատախումբ բանակին, զԱմբատ զորդի
Նշոտոյ իշխանի, և զԱւարդ որդի Թահոդորոսի իշխանի,
և զեղբայր իւր զՆշոտ, և զայլ նախարարսն։ և խորհեր
հնարս զանել որով մարթացեն զանձինս ապրեցու-
ցանել։ Եւ եղե¹ խորհրդին՝ տեղի տալ և գնալ յաշ-
խարհէս առ թագաւորն Յունաց։ Եւ անդէն անջատեալ
խարհէս առ թագաւորն Յունաց։ Վասպուրական աշ-
մեկնեցան ոմանք ի նախարարաց Վասպուրական աշ-
խարհին։ Իսկ նոցա գեմ եղեալ զնացին ի կողմանցն
Վասպուրականի ի դաշտավայր մարդէն, որում Վոհս-
տակողմն կոչն։ քանդի անդ բնակիեալ էր միայնակիեաց
ոմին, առ որ չոգան հարցանել զորպիսութիւն զործոյն,
քանդի էր սցը սուրբ, ընտրեալ² և լի հոգեոր իմաստու-
թեամբ։ Իսկ նորա աշխարհալ և աւաղեալ զկորուստ
աշխարհիս և զկործանումն եկեղեցեաց և զթափուր լի-
նելն ի նախարարական տոհմէն՝ ոչ ինչ կարեր հրամայել-
աց միայն անձնապահ լինել և զգուշնամալ ի նենդութե-
աց

¹ Ըսթեռնելի է և եղե բան խորհրդ-
ութիւն

² Զ. Հ. Եղագրեալ

Նէն: Եւ աղօթս արարեալ ի վերայ նոցա՝ յանձնեաց զնոսա շնորհացն աեառն և առաքեաց յիւրմի:

Եւ նոքա կնացեալ ընդ եզր գետոյն Արասխայ՝ անցանէին ընդ սահմանս Ուզայէոյ¹ և հասանէին ի մեծ աւանն Ըկոսի: Իսկ զօրքն Իսմայելի, որ էին ի Ասինջաւան² քաղաքի՝ յարձակեցան զինի նոցա և ոչ մեկնեցան ի հետոց նոցա, քանզի էին աւելի քան Եր³, (25) և կամէին կենդանւոյն կանել զնոսա: Եւ իբրև ազդ եզր զօրուն Հայոց վասն հինին, որ զարժուցեալ դայր ի վերայ նոցա՝ յարուցեալ անցին ընդ գետն Արասխ, և բանակեցան ի Աշտրանակերտան աւանի: և զօրն Տաճկաց պնդեալ դայր զինի նոցա: Իսկ զօրուն Հայոց պատգամ յդեալ առ զօրսն Տաճկաց՝ ընդէ՞ր, ասէ, պնդեալ դայր զինի մեր, զի՞նչ ինչ մեզաք ձեզ, աշաւազիկ երկիրդ⁴ մեր առաջի ձեր է, ձեզ տուեալ եմք զինակութիւնս մեր, զայզիս մեր և զանտառս⁵ և զանդաստանս մեր, արդ ընդէ՞ր և զանձինս մեր ինպրէք: Խճոյլ տուք մեզ զնալ ի սահմանաց մերոց: Եւ ոչ կամցան լսել զօրքն Իսմայելի, զի ի աեառնէ կարծրանային սիրոք նոցա, զի մատնեցին ի ձեռս⁶ սրց: Իսկ զօրուն Հայոց ամրացուցեայ զփողօցս աւանին՝ կարգեցին ի վերայ պահապանս մինչեւ ի լուսանալ առաւօտին: Եւ ինքեանք զդիշերն ողջոյն ի հսկումն աղօթից կանիսեալ՝ հայցէին ի բոլորեցունց տեառնէն զմեծազօր աջոյն օգնականնութիւն և ուղղութեամբ զատել ի մեջ նոցա և թշնամեայն: Եւ իսկոյն ընդ ծագել առաւօտին իբրև յանդէր պաշտօնն առաւօտին՝ մասուցանէր⁷ և հոգեռոր պատարազն, և արժա-

1. Տ. ընդ սահմանն Ուզայէոյ

2. ասուն Կամբանաւան:—Տ. ամենացն ուրիշ Կամբանաւան

3. Տ. քան զուգն հազար

4. Տ. երկիրս

5. Տ. զանդառս

6. Տ. ի մեռն

7. Տ. մասուցանէրն

նաւորիքն հաղորդեին մարմնոյ և արեան տեսան, իբրեւ
յիտին թոշակ զայն համարեալ անձանց։ Առ առնուին
սուդ ինչ կիրակուր յաղագս զօրութեան մարմնոյ։ Եւ
նոյնժամայն յարուցեալ յարդարեցին գունդ առ գունդ
և ճակատ առ ճակատ, և խմբեցաւ պատերազմն։ Ենդ
հասկաւ առ ճակատ, և խմբեցաւ պատերազմն։ Եսառւծոյ գնդին
Նայոց՝ թէպէտ և նուազունք էին քան զթիւ երկուց
հաղարաց՝ սակայն զբազումն հարեալ սատակեին ի սուր
սուսերի։ Քանիզի էին առուրիք ցըտաշունչ սառնամա-
նեաց¹, և ևս առաւել սաստկացեալ դառնաշունչ օգոյն՝
կասկցուցանէր զօրսն Խամայելլ յարիտական զօրութենէն
Երեանց, զի զգիշերն ամենայն ի վերայ ձեան օթազա-
յիալ² էին և ընդ ծագել լուսոյն անկան³ ի ձեռս սրոյ։
Առ որք ի սրոյն փախեան՝ անկան ի գեան Խրասի, քան-
զի սպազացեալ էր ի խստութենէ օգոյն։ և իբրեւ երանէ-
նի ի վերայ սպազին բազմութիւն զօրայն՝ անդէն վաղ-
վազակի խորոց մատնէին, խորտակեալ սպազին՝ որք ի
սրոյն զերծեալը⁴ էին, և այնովէս հեղձամաշ վճարեին
ի կիսաց։ Յօրոց նուազունք ի փախուստ դարձեալ իբրեւ
արք յ ասպաւինէին առ արկինն Շուշան։ Օսորոց զինի
հետամուտ եղեալ Ամրատ որդի Եշոտի զօրքն իւրովք՝
կետամբ արկաննել զփախստեայսն ի սուր սուսերի։ Որում
ընդ առաջ ելեալ⁵ տիկինն Շուշան՝ բազում աղերսանօք
և գաշամբք թափեր զնոսսա մերկս և բոկս և հետեակս
և վիրաւորս, զօրոց առեալ պատեր զվերս և ողջացու-
յանէր և զգեցուցանէր հանգերձիւք։ Տայր և զրասսու
յիւրոց երամակաց և առապէր առ իշխանն Խամայելլ

1. Զ. առաւամաննեաց

2. Զ. առ թագացեալ

3. Զ. առա և զինի անզամի անզամ

նել

4. Տ. զերծեալ

5. Հ. եղեալ

ԱրդէՄելիք¹, վասն որոյ և ի նմանէ բազում շնորհառ
կալութիւն ընկալեալ, և մեծամեծ պատիւս առաքէլ
նմա:

Եսկ զօրն Նայոց յղիացեալ յաւարէ թշնամեացն՝
առաքէին առ թագաւորն Յունաց աւետիս զյադթու-
թեանն իւրիանց: Տային տանել նմա ընծայս յաւարէ
թշնամեացն զբնտիւս² երիվարաց տաճիկ ձիոց, և զունը
զիականցն³ անկելց հատեալ սուաքէին ընդ նմին ընծայի⁴:

Եւ կայսրն ընկալեալ զայն նուեր՝ մեծապէս գոհու-
թիւնս մատուցանէր արարչն, և շնորհակալութիւն
Ամբատայ և նախարարացն որ ընդ նմա և նոցին զօրացն:
Եւ տայըր բերել նմա պատիւ իիւրապազատութեան⁵ ըստ
օրինի թագաւորաց: Եւ նորա ընկալեալ զպատիւն ի
կայսերէն՝ առնոյր զզօրս իւր և երթայր յաշխարհն Տայ-
ոց, մատանէր յամբոցն որում Թուրիարսն կոչեն, և զզու-
շանայր յորդուոյն⁶ Իսմայելի:

Օ այնու ժամանակաւ գարձեալ այլ հէն զայր ի վե-
րայ զօրուն, որ ի կողմանս Վասպուրական աշխարհին.
և եկեալ յանդիման լինէին ի զաւան Աշխառնեաց ի
զիւզն⁷, որում Գուրկանան կոչեն: Կնդ յանդիման լինէին
միմեանց: Իրրե տեսին զի նուազունք էին, զիմեցին
սասակապէս ի վերայ նոցա. և նշյնժամացն զթացեալ ո-
զորմութեանն Սատուծոյ, և յայնմ նուազի ևս⁸ հասա-
նէր ի թիկունս օգնականութեան: (26) Եւ զամենեսեան ի
սուր սուսերի մաշեցին, բայց միայն արք Ֆի փախուստ
գարձեալ՝ անկան յեկեղեցին: Եւ իրրե ոչ կարացին ըստ-

1 2. ամենացն ուրեր՝ աբդէմիք և
աբդէմելք

2 2.՝ զընդիբաս

3 2.՝ զիականցն

4 5. սուկասէր՝ ընծայի

5 2.՝ կորապազատութեան

6 2.՝ յորդոցն

7 2. ամենացն ուրեր՝ ի զիւզն, զիւզ

8 1. սուկասէր՝ ևս

նանել խորհնեցան հրկեզ առնել զսրբարանն. այլ ու թողացըց նոցա Ամբատ իշխան կողմանն Պատապուրականի, որ էր որդի Եշտածի իշխանի, և¹ ոչ ևս զործել զապիլատութիւնն զայն. զի առէր, «քաւ լիցի մեղ ձեռնամուխ լինել իրնակարան փառացն ահառն, որ գայնպիսի յաղթութիւն մեղ պարզենաց: Եւ կարգեցին պահապանս պահել զնոսսա, մինչեւ նոյն ինքն որբարանն հանցէ զնոսսա արտաքս յինքինէ: Եւ յետ սակաւ² միոյ մի ոմն ի զօրացն Խամայելի, որ էր զիխաւորագոյն նոցա՝ խնդրէր հաշտութիւն անձին իւլում չմեռանել ի նոցունց: Եւ ել առ զօրմն Հայոց և առէ. մեր լուեալ է, իթէ ազդ³ քրիստոնէից ողորմած է, իրրեւ ահսանէ զոք ի վիշտու՝ զթայ⁴ և ողորմի. արդ ողորմեցարուք մեղ և առուք մեղ զանձինս մեր պարզե, և զինչս մեր առէք ձեզ⁵ ժաւարիո: Պատասխանի ևս զօրավարն Ամբատ⁶. «մէք, ասէ, ուսապ ի ահառնէ մեր⁷, իթէ ողորման թիւն ողորմածաց արժանն է առնել խիկ դուք ազդ անողորմ էք և ոչ արժանի ողորմութեան, և ոչ արասցուք: Իրրեւ լուաւ զայս խամայեցին՝ «արդ զոնեա անձին իմում ներեցէք չսպանանել և զայլսն աաց ի ձեռս ձեր»: Եւ յանձին կաւան, թէ⁸ ոչ սպանցուք: Խիկ նորա մօնեալ ի ներքս՝ առէ, ողինչ օգուտ է մեղ մնալ⁹ աստին, զի անողորմ ահսի զնոսսա ի վերայ մեր: Այլ արդ հկայք¹⁰ կլցուք առ նոսսա. իթէ սպանանեն զմեղ՝ մեռցուք, քանզի զզբախան իսոստացաւ մեղ օրէնսդիրն մեր¹¹ Մահմետ, և իթէ կենոստացաւ մեղ օրէնսդիրն մեր

6 2.¹ ամզատ զաւըավար

7 կ 8. սպակառէր՝ մեր

8 կ 8. սպակառէր՝ թէ

9 8.¹ մնալ մեղ

10 կ 8. սպակառէր՝ հկայք

11 կ 8. սպակառէր՝ մեր

¹ կ 2. սպակառէր՝ և² 8.¹ սպակառէր՝ միոյ: — Օր. 8. և 2.

այսպէս

³ 2.¹ ազդք⁴ 2.¹ զթա⁵ կ 8. սպակառէր՝ մեղ

Եւ քաջալերեալք այսու բանիւք՝ ելին առշասարակի արտաքս, և նոյնժամայն արկան ի բերան սրոյ: Իսկ զայն այս, սրում խօսացան չսպանեանել կենդանւոյն¹ յուշ զարկեցին ի խորս ծովուն: Եւ ինքեանք առեալ զիա՞ս սրուտ անկելոցն՝ բաժանեցին ի մէջ ինքեանց, և սփռէին յիւրաքանչիւր տեղիս:

ԳԼՈՒԽ թ.

Եւ եղել յիս այսորիկ իրրե լուսու իշխանն Խամայե-
լի Կրդլ-Մելքը զբեկումն զօրաց իւրոց՝ կոչէ առ ինքն
զՄահմետ զօրավարն զօրուն իւրոյ և հրամայէ առնու-
թնդ իւր բազմութիւն զօրաց և ելանել ի վերայ աշխար-
հիս ։այսոց սրով և զերութեամբ: Որոյ անդէն վաղվա-
զակի կազմեալ զզօրսն՝ սաստկապէս և խրոխալով ըս-
պառնայր կատարել դհրամանս իշխանին իւրեանց: Իրրե
լուսն նախարարք ։այսոց աշխարհիս զշէնն, որ զոյլ
զօրացեալ ի վերայ՝ հանգերձեցին զկաթողեկոսն ։այսոց
զՄահմէտ և զոմանս յեպիսկոպոսաց աշխարհիս ընդ նմա՝
երթալ ընդդէմ զօրուն Խամայելի և խօսիլ ընդ զօրավա-
րին նորա բանիւք խաղաղութեան և նոււաճել զինքեանս
ընդ լծով ծառայութեան նոցա: Եւ իրրե յուղարկեցաւ
յաշխարհէս՝ ողջունէր զամեննեսեան² սիրական համբու-
րիւ³ աջըն, օրհնէր զհօտն որ ինքեան հաւատացեալ
հանգերձ հովուակցօք⁴, և յանձն առնէր շնորհացն տեա-
ռըն: Եւ իրրե զանց արարեալ զբազում օթեանօք և
հասանէր ի քաղաքն՝ Խառասն՝ և անդէն եշտ նմա ախտ

1. Զ. կենդանւոյն

2. Հ. զամեննեսեն

3. Հ. համբուրի

4. Հ. զավուակցօք

Հիւանդութեան: Եւ մինչև էր հասեալ Ուաշինգ զօրաւարն ի Խառան՝ մերձեցաւ վախճանն նորա. և զրէ զվերջնս բանից իւրոց¹ յանդարձի առ զօրավալն Խամայելի:

Եւս, ասէ, առաքեցայ ընդ առաջ քո յազգէն իմ, խօսել զիսորհուրդոս իմ առաջի քո, զոր միաբանեալ նաև խարարք և ռամփկք այսոց ինդրեն² ի քէն. ոյլ որ կհնացն է շահեմարանապետ՝ ստիպով յափշտակեաց զիս առ ինքն, և ոչ ժամանեցի հանդիպել քեզ և խօսել ընդ քեզ: Այլ արդ՝ կրդմնեցուցանեմ զքեզ ի կինդանին Կատուած, և դաշնս զնիմ քեզ զուխտն Կատուծոյ, որ առ Խամայէլ հայրն ձեր, որպէս խոստացաւ տալ նմա զորիեղբար ի ծառայութիւն և ի հնազանդութիւն, զի³ առասցիս խազազութիւն ընդ ժողովրդեամբ. արգելցիս զսուր քոյ յարենէ և զձեւն քո յաւարառութենէ. և հնազանդեացին քեզ յամենայն սրտէ իւրիհանց: Իսպաց վասն հաւատոց մեր՝ զի իշխանութիւն լիցի մեզ սլահել յոր հաւատացաքն և խոստվանեցաք. և ոք ի ձերոց այտի մի և թափացաւ զմեզ դառնալ ի հաւատոց մերոց⁴: Վրդ խոշանդեսցէ զմեզ դառնալ ի հաւատոց մերոց և մերէ արասցիս զհայցուածոս իմ՝ յաջողեսցէ⁵ տէր զիշեանութիւնոց քո և կատարեսցին խորհուրդք կամաց քոյ⁶. և տէր հնազանդեցուացէ զամենեսին ընդ ձեռամբ շրուեսէ կամացիս յառնել ի վերայ աշխարհին իմ՝ տէր սորմակ իմասցիս յառնել ի վերայ աշխարհին զնացք շրուեսէ զիսորհուրդ քո և մի հաստատեսցին զնացք սամնել սամից քոց, և դարձուացէ զսիրտ զօրաց քոց⁸ սամնել դիման քո, և յարուացէ յամենայն կողմանց նեղիւ անդիման:

¹ 2.³ իւր

² 2.³ հայցեն

³ 1. սակասէր՝ զի

⁴ 2.³ մեր

⁵ 2.³ աշողեսցէ

⁶ 2.³ քո

⁷ 2.³ իւր

⁸ 2.³ սովից քուրաց քո

ձին քո, և մի կացցէ իշխանութիւնդ քո հաստատու՞ն:
Վրդ մի՛ անտես առներ զհայցուածս իմ, և եկեցին ի
վերայ քո օրհնութիւնը իմ:

Եւ իրբե եհաս Աահմեան ի Խառան՝ պատմեցին
նմա զկաթողիկոսէն ։ այսոց և մատուցին առաջի նորա
զգիլն: Երբե ընթերցաւ զգիլն՝ եհարց զվախճանէ նոր
բա, և պատմեցին նմա, եթէ ոչ ևս է եղեալ ի զերիկ
ման: զի առժամացն եր վախճանեալ: Երբե լոււաւ՝ վաղ
վաղակի յարեաւ և չողաւ ի տեղին, կացեալ մերձ առ
մարմնոյ ննջեցելոյն՝ ետ նմա ողջոյն ըստ սովորութեան
իւրիանց, և, որպէս լուաք ի ճշմարտախօս արանց՝ երկ՛
բորդէր զնոյն բանս և երրորդէր: Եւ ապա բուռն հա
րեալ զձեռանէ նորա՝ իրբե ընդ կենդանուոյ ումեք խօսել
ասելով. «Ճանեայ զեմաստութիւնդ քո ի մատենէն զո՞
ընթերցայ, զի ըստ օրինի քաջ հովուին ի վերայ քոյլի՞
հօտիդ հոդացեալ փութացար զալ ընդ առաջ¹ խրոխ
տացեալ սրոյ իմոյ²: ։ աւանեցայ արգելուլ զսուր իմ
յարանց անմեղաց: Այլ արդ արարից և կատարեցից զա
մենայն, զոր միանդամացն հայցեցեր յինէն. և բարեպաշ
տութեանդ քո օրհնութիւն հանդիցէ ի վերայ իմ: Եւ
եթէ սխալեցից ևս³ բան մի յամենայն բանից քոյց⁴ և
կեցեն ի վերայ իմ ամենացն նզովքն, զոր ընթերցայ ի
մատենիցն քոյց⁵: Եւ զայս ասացեալ զնայր ի տեղի իւ
ջեանի⁶ իւրոյ:

Իսկ որք ընդ կաթողիկոսին Աահակայ երթեալ էի՞ն
յաշխարհէս ։ այսոց՝ առեալ զմարմինն երանեալ հայրա
պետին փոխէին ի հանդիսա, եղեալ ի տապանի փառա-

1. 2.³ ընդ յառաջ

2. 2.³ իմ

3. 4. 2. պակասէր ևս

4. 2.³ քո

5. Տ. ի մագենին քում:—Օր. Տ. և 2.
ոյսպէս:

6. 2.³ իշտաւանի

«որապէս» Աշւ ինքեանք առնուին ի զօրավարէն Խսմայե-
լի բան երդման ի ձեռն զրոյ, և զարձան անդրէն¹ յաշ-
խարհս ։ Այսոց Աշւ իրրե տեսին բնակիչք աշխարհիս
դրան երդմանն և² խոստման զրոյն՝ վստահ եղեն ի նա,
և ծառայեցին յայնմշետէ Խսմայելացւոցն ծառայու-
թիւն³ սարկիս:

Եսկ Մահմետ զօրավարն երկրորդ անգամ ելեալ
յաշխարհս ։ Այսոց զօրու ծանու յութուտասաներորդ
ամի Ըրդլ-Մելքը իշխանի⁴ և զամն ժ հանգարտեալ
Դադարէր, և ոչ ինչ չարեաց յուշ լինելը վասն անցիցն,
որ էանց ընդ զօրն Տաճկաց ի Վարդանակերտն աւանի.
այլ հաստատում պահէր զերդումն զրոյն, զոր տուեալ
էր իւր, և միայն ընդ ակամք հայէր նախարարացն ։ Այսոց:
Աշւ Ըրդլ-Մելքի կալեալ զիշխանութիւնն այսպիսի վա-
րուք՝ վախճանելու:

ԳԼՈՒԽ Ժ.

Աշւ յիտ նորա փոխանորդէ որդի նորին Ա-վելթ իշ-
խան Խսմայելի ամս ժ և ամիսս ը և վախճանի: Աշ-
սյս վարք նորա:

Սա յառաջնում ամի իշխանութեան իւրոյ խորհեցաւ
բառնալ յաշխարհէս ։ Այսոց զտոհմ նախարարաց նոցին
հեծելովք վասն քինին⁵, զոր ունեին առ Ամբատաց կիւ-
րապաղատի⁶. զի ասէր, եթէ միշտ խոչ⁷ և դայթակդու-
թիւն լինելոց են իշխանութեանս մերոյ: Աշւ մինչդեռ

¹ Ի 8. պակասէր՝ անդրէն

² Ի 2. պակասէր՝ և

³ Տ. 3. ի ծառայութիւն

⁴ 2. աբդլուլլի իշխանի

⁵ Տ. 3. քինուհու—Օր. Տ. և 2. այսպէս

⁶ Զ. ամենայցն ուրէք՝ կորագուշակ

կորագուշակ

⁷ Տ. իսլ

դայս չարութիւն երկնելին ի սիրտս իւրեանց՝ անգին
վաղվաղակի Ամբատն, զորմէ ճառեցաք՝ զրել առ ալ-
քայն Յունաց և խնդրել զօր ի նմանեն յօդնականու-
թիւն։ Եւ հաւանեալ կայսերն՝ կատարել զինդիլին
տայր զօր բազում¹ ի ձեռն զօրավարի միջ և առաքել
նմա ի թիկունս օգնականութեան։ Եւ միաբանեալ Արմ-
բատաց ընդ զօրավարին Յունաց՝ եկեալ հասանելին ի
դաւառն Վանանդաց ի գիւղն, որում Դարաշպետն կուն։
Ենդ հարկանելին զբանակս իւրեանց։ Եւ իրրե լուաւ
Մահմետ իշխան զօրուն Խսմայելի՝ ժողովիալ զզօրս իւր
մեծաւ պատրաստութեամբ եւ ընդզէմ նոցա ի մարտ
պատերազմի։ Եւ հասեալք առ վայր մի՛ կազմեցին գունդ
առ գունդ և ճակատ առ ճակատ, և խմբեցաւ պատե-
րազմ։ Ենդ վաղվաղակի բարկութիւն ի տեառնէ հա-
սեալ ի վերաց նոցա՝ լքաւ սիրտ պատերազմողաց արանց
Յունաց, ի փախուստ դարձեալ անկան յամիոց բանակին
իւրեանց։ Եւ զօրացեալ թշնամեացն՝ հարին զբազումն
կոտորմամբ սրց, զորոց ասեն լինել² զթիւ անկելոցն առ-
ելի քան զէ բիւր արանց սուսերամերկաց։ Եւ զակատ-
մացորդսն առներ փախստական յաշխարհէս. և իւր ժո-
ղովիալ զզօրս բանակին՝ դառնայր ի քաղաքն Դուլին³։
Իրրե զայս ևս⁴ տեսաներ իշխանն Խսմայելի, եթէ առաջ-
նորդ զօրուն Յունաց եղեն նախարարք Նայոց՝ գար-
ձեալ զնոյն խորհուրդ խորամանկութեան⁵ հրամայելը
Մահմետի կատարել։

Եւ Մահմետի առեալ զհրամաննն անիրտաւ՝ հրամայելը
Ամամյը ումեմն,⁶ որ էր հրամանատար նորուն ի կող-

1. Տ. բազում զօրս

2. Ի. Տ. պակասէք լինել

3. Տ. զվին

4. Ի. Տ. պակասէք ևս

5. Տ. Խորամանգութեանն

6. Տ. Հրաման

7. Տ. ուրութե

մանսն՝ Նախաւան¹ քաղաքի՝ կոչել առ ինքն զնախարարս
Հայոց նոցին հեծելովք իրեւ պատճառանօք՝ եթէ ան-
ցուցանել ի համարու արքունի և առնուլ հռոդ և գառ-
նալ Եւ նոքա ըստ օրինի պարզմառութեան² իւրեանց
հաւատարիմ համարեալ զննենքութիւն գաղտասցըր որսո-
ղացն՝ վազվաղակի անդր հասանեին: Իրեւ ժողովեցան
անդր՝ հրամայեցին յերկուս բաժանել զնոսա, զոմանս
հաւաքեցին յեկեղեցին Նախաւաննու, և զիկն յուղար-
կեցին³ յաւանն ի Խրամ;⁽²⁷⁾ արկանեին յեկեղեցի նորս,
կարգեալ ի վերայ պահապանս. և⁴ խորհեին, թէ որպէս
կորուցեն զնոսա: Եւ միաբանեալ⁵ առ հասարակ ամե-
նեքին՝ հանին արտաքս զաղատատուշմն յարգելանեն, և
լուս ի սրբարանն արգելեալ էին՝ հրակեզ⁶ արարին և
ողոքութին ի յարկս աստուածային խորանին: Խոկ ըմբըռ-
նեալքն յայնպիսի գառնութիւն վասնզի իրեւ տեսին,
թէ ամենացն ուստեք զրկեալ⁷ էին յօդնականութենէ
մարդկան՝ ապաւինեին առ բոլորեցունն⁸ Աստուած և
զնա միայն կարսային յօդնականութիւն ասկեղով. «ու նե-
ղեց ապաւէնդ ևս⁹, վտանգելոց օգնական, աշխատելոց
անդուրիի¹⁰ հաս յօդնականութիւն նեղելոցս և վտանգիս,
ու պաշարեցին զմեզ, փրկեա զմեզ ի գառն մաշուանէս,
որ ածին ի վերայ մեր. զե ահա սաստկապէս զօրացաւ
ի վերայ մեր տապ բոցոյս և առաւել առչորէ¹¹ շրջապա-
տեալ զմեզ եօթնապատիկ¹² քան վրաբելոնեան բոցոյն բոր-
բոքութին: Եյլ որպէս իրից մանկանցն¹³ առաքեցելոյօդ»

¹ Տ. առա և զինի՝ Նախաւան

² Տ.՝ պարզամուռթեան

³ Ի. Տ. պակասեր՝ յաւղարկեցին

⁴ Ի. Տ. պակասեր՝ և

⁵ Տ.՝ միաբանեալք

⁶ Տ.՝ հրակեզ

⁷ Տ.՝ զրկեալք

⁸ Տ.՝ բոլորեցունցն

⁹ Տ. ի փակագծի ուներ զբառութ՝ (ԷԱ)

¹⁰ Տ.՝ անդուրիէլ

¹¹ Տ.՝ առշորի

¹² Տ.՝ զմեզ եւթնապատիկ

¹³ Տ.՝ մանկանցն

Նականութիւն գպահպանող զօրութիւն հրեշտակին՝ և
զմեղ մի անտես առներ ի քո զթութեանցդ, զի և մեք
ծառայք քո եմք, թէպէտ և բազում անդամ մեղուցեալ
բարկացուցաք զմարդասիրութիւնդ քո քաղցր. այլ ի
բարկութեան քում զողոբանութիւն¹ յիշեսցես առ ծա-
ռայս քո. քանզի ահա սրբարան քո և տեղի փառաց
անուան քո եղեւ մեղ տեղի զերեզմանի: Առան որոյ և
մեք զոհանարավ զսուրբ և զաշեղ² անուանէդ քումմէ,
ի ձեռու քո յանձնեացուք զոզի և զշունչ մեր և զմարմին:
Եւ զայս ասացեալ միաբան ամենեքեան զօրհներգութիւն
ի բարձունս վերառապելով փոխեցան յաշխարհէս:

Խսկ զնախարարս³ ապատացն եղին ի կապանս բան-
աի, յանհանդուրմիլի տանջանս խոշտանգէին, և պա-
հանջէին ի նոցանէ բազում ոսկի և կշիռ արծաթոյ. և
խոստացան նոցա, թէ յօրժամ հատուցին նոցա զսակ
արծաթոյն՝ արծակիսցին զնոսսա կենդանիս. վասն որոյ և
երդմամբ դաշնսս արարեալ հաւատարմացուցանէին զեր-
դումն ստութեան: Եւ նոքա առ վտանդի նեղութեանն՝
զբազում մթերս գանձուցն իւրեանց, զորս ի պահեստ
եղեալ էին⁴ յերեսաց նեղացն ի ծովու և եթէ ի ցամա-
քի՝ տային ի ձեռու թշնամեացն, զի թերես ապրեցուո-
ցին զանձինս իւրեանց: Եւ իրեւ ունայնացեալք ի գան-
ձուցն եղին՝ ձեռնամուխ եղեալ անօրինացն՝ բառնային
զկենդանութիւն նոցա, և զիայտէ կախեալ⁵ դատապար-
տէին զնոսսա: Ենդ ըմբռնեցան Ամբատ որդի Եղափակի ի
Ռազբատունի տոհմէ, և Վրիգոր և Կորիւն ի տոհմէ
Արծրունեաց, և Արարագ⁶ ապուհ⁷ և եղբայր իւր ի

1 Զ.՝ զողոբանութիւնս

2 Զ.՝ աշեղ

3 Տ.՝ զնախարար

4 Ի.Տ. պակասեր հաստուածդ, սկսեալ

Ի բանիցա՝ խոստացան նոցա

5 Ի. պակասէր էին

6 Զ.՝ առեալ

7 Զ.՝ վարաշապուհ

առհմէ Ամասունեաց, և բազումք¹ այլք ի նախարարաց
այոց, զորս ոչ բաւեմ մի ըստ միոջէ պատմել: Օնոսա
զամենեսեան² բարձեալ ի կենաց՝ անժառանդ առնեին
զաշխարհս ի նախարարաց:

Յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհս այոց
ի առհմէ նախարարաց՝ մատնեին որպէս գուխարս³ ի մէջ
զայլոց: Եւ թշնամեայն ամենօրինակ չարեաց⁴ յարձա-
կեալ ի վերայ՝ յանհուն աղէտս վտանդի պահէին զբնա-
կես աշխարհիս այոց⁵. որոց տաղտկացեալ յանհան-
դիստ նեղութեանցն՝ զհառաչանս և զաղաղակ հիծու-
թեան բարձրացուցանեին յերկինս: Իսկ Ամբատ կիւրա-
պաղատն և նախարարքն որ ընդ նմա զնացեալ մեկնե-
ցան յաշխարհէս, և անցեալ խնդրեցին ի թագաւորէն
Յունաց քաղաք բնակութեան և գագարս խաշանց իւ-
րեանց. և նա⁶ տայր նոցա զքաղաքն որ անուանեալ կո-
չէ Փոյթ ի կողմանս՝ Եղեր աշխարհին. և բնակեցան ի
նմա ամս ու:

Իսկ Մահմետն կատարեալ դայս ամենայն չարիս՝
բարձրացեալ բողոք աշխարհիս հասանելո յականջու⁸ իշ-
խանին Խսմյելի, որում անուն էլ Ալիթ: Եւ վազվա-
զակի առաքէ հրովարտակ և կոչէ զնա առ ինքն. և փո-
խանակ նորա առաքէ զԱրդլ-Ըղեղ ոմն, որ էլ խօթ լը-
սելիօք. այլ խորագէտ, լի երկրաւոր իմաստութեամբ,
առասպելախօս և առակարկու: Եւ իբրև հաստատեցաւ
յիշխանութեանն՝ զրեր⁹ հրովարտակ առ նախարարս
այոց, և հաւանեցուցանէլ զնոսսա դառնալ յիւրեան-

¹ Տ. բազումք

² Տ. զամենեսեան

³ Տ. ոչխարս

⁴ Տ. չարեաց:—Օր. Տ. և 2. այսպէս

⁵ Ի 2. պակասէր՝ և նու

⁶ Ի 2. պակասէր՝ և նու

⁷ Տ. ի կողմանն

⁸ Տ. յականջու

⁹ Տ. զրեր

յական աշխարհու. և ասցը նոցա զիր երդմամբ չափ ըստ
սովորութեանն իւրիանց: Եւ իրեւ վստահ եղեալ յուխ-
տապրութիւն նորա՝ առին զքաղաքն յորում բնակեալ
էին, և զգանձոքաղաքին և զսպասս¹ եկեղեցեացն յա-
փրշտակեալ յաւարի՝ գարձան ի Նայս, հատուածեալք
ի կայսերէն Յունաց: Եւ կայսերն ըուեալ՝ սարջացաւ-
ընդ եղեալ ապիրատութիւնն. և կոչեցեալ² զառաջնօրդո-
եկեղեցեաց, զմետրապօլիան և զալքեպիսկոպոսունս՝ և
հրամայէր նոցա նզովս³ զրել ի մատենի, և ի կատարման
տօնին զատկաց հրամայէր ընթեռնուլ ի վերայ զործո-
զաց ապիրատութեանն. քանզի ի տօնին յայնմիկ զոր-
ծեցին զգործ անօրէնութեան: Եւ ի նոյն տօնի կարգա-
ւորեցին ամի ամի զնոյն նզովս⁴ ընթեռնուլ մինչեւ ցայ-
սօր. որ և ամբեաց իսկ ի վերայ նոցա, և եղեւ պատճառ
կորսահան նոցա:

Իսկ Արդլ-Եզիզն ամբեալ աշխարհիս Նայոց՝ խաղա-
ղացոյց զամենայն յարձակմունս անկրաւութեան յաշ-
խարհէս. և զիրոխատացեալ անզգամութիւն որդւոցն Իս-
մայելի սաստիկ կշտամբութեամբ ցածրւցանէր: Ծինէր
վերստին զքաղաքն Դուին⁵ հզրապոյն և ընդարձակա-
նիստ մեծութեամբ քան զառաջնն, և ամրացուցանէր
զրամբք և գռնափակօք, անցուցանէր շուրջ զպարտապովն
պարկէնս փոսից լրեալ ջուր յապաստան⁶ ամրոցին. քան-
զի ասէր զիւրմէ Արդլ-Եզիզ յառաջնում աւերածին:
Դունայ⁷, եթէ⁸ ի ձեռն իմ եղեւ կործանումն քաղաքին,
և ևս կանգնեցից զսա զի եր ևս, ասէ մանուկ երկոտա-

1. Ի. պակասէր՝ քաղաքին և զըս-
տասս

2. Տ. կոչեալ.

3. Զ. նզով.

4. Զ. նզովք.

5. Ի. պակասէր՝ Դուին.

6. Հ. ապաստան.

7. Հ. դուշնա.

8. Ընթեռնէր Եւ եթէ յառաջնում
աւերածին Դունայ ի մեռն բժա...ո

ասնամեայ և ունէի սփածանելիս կարմիր։ Եւ յորժամ
զօրն Տաճկաց մարտնչէր ընդ քաղաքիս՝ մտի և ընդ խո-
ղովակ¹ մի և ելի ի պարխապն, և ի բարբառ իմ ի ձայն²
ուժդին աղաղակեցի առ զօրն մեր, անդէն³ վաղվաղակի
թօթափեցան պայիկքն նախամարտիկք, որք պահէնն
զարդիսպն և ի փախուստ⁴ գարձան։ և յաղթութիւնն
Կամայելի զօրացաւ, և կործանեցաք գքաղզաքսու։ Օայս
քերանով իւրով տսի պատմել զինքնէնէ։

ԳԼՈՒԽ Ժ.Ը.

Օայնու ժամանակաւ զարձեալ զրդուէր սիրտ զօ-
բավարին Մահմետի ի վիրայ աշխարհէն Ճենաց. և
ինդրէր յիշխանէն Կամայելի զօր բազում, և խոստա-
նայր⁵ նմա՝ ածել զարքայն Ճենաց ի հնազանդութիւն
ծառայութեան։ Խոկ նորա զումարիսալ զօր բազում և
մետ ի ձեռն նորա իբրև արս ճա։ Եւ խաղացեալ Մահ-
մայ ի ձեռն նորա իբրև արս ճա։ Եւ խաղացեալ Մահ-
մայ ի կողմանցն Գամասկիսայ բազմութեամբ զօրացն ի
կողմանս արեւելցց՝ անցանէր ընդ Ասորեստան, ընդ աշ-
խարհն Պարսից և ընդ Խորասան, և երթեալ հասանէր
ի մասն ինչ Ճենաց աշխարհին և բանակէր առ եզր զե-
տոյն հզօրագունի, որ Իօսիսն կում։ Վրէ հրովարտակ
առ արքայն Ճենաց. ընդէ՞ր, ասէ, զու միայն ընդվկեալ
ոչ մոտանես ընդ հնազանդութեամբ իշխանին մերօյ, զի
ամենայն ազգը սարսկեցին ի մէնջ։ Վրէ զու յով ապաս-
տամենայն ազգը սարսկեցին ի մէնջ։ Վրէ զու յով ապաս-
տամենալ չհնազանդիս մեզ, մի արդեզք իբրև զայցիունուդ⁶

¹ Զ.՝ խոզուակ

² Զ.՝ ի ձայնէ

³ Զ.՝ որք անդէն

⁴ Զ.՝ նախամարտիկք, և որք որտ-

չէին զարդիսպն ի փախուստ

⁵ Զ.՝ խոստանաց

⁶ Զ.՝ ասէ և ի սոսրեա զազմեռնքա-

ազմանցն...

քո համարիս զմեղը յորոց միջեւ փերեւետեալ ձոխանառութեան մեջ՝ Այլ արդէ ոչ մացես ընդ լծով ծառայութեան մերոյ՝ զիտասջեր զեւ անապատ արարից զերկերդ քո ի բնակչաց, և վախճան արարից արքայութեանդ քո: Ի՞սկ մի՛ յանհոգս լեալ յապաղեսցես զպատասխանի զրոյացլ արագ գարձուցես այսրէն:

Երբեւ ընթերցաւ զգիրն արքայն Շենաց, որ կոչէր Շենբակուր⁽²⁸⁾ կոչէր առ ինքն զամենայն վշտիպաննեւ համահարզս¹ իւր և խորհեր, թէ զինչ աացէ բանիցն պատասխանի: Առ խորհեալ առ միմեանս՝ զբեն բանիցն պատասխանի և ասեն.

«Մի՞ արդեօք հզօրագցն իցես² զու քան զամենայն թագաւորս, որ ի սկզբանցն³ և այսր տիրեցին ի վերաց աշխարհի: Ի՞արելացւոց թագաւորն, որ տիրելերաց տիրեաց, և Մակեղոնացւոցն և Պարսից ընդէ՞ր նոքա ոչ կարացին տիրել ի վերաց աշխարհիս մեր: Այլ զիտասջեր, զեւ լիրբ քան զամենայն շուն իցես զու և ի տոռն պագշտութեան վարանեալ: և այդորիկ ազագաւ չար ցանկութիւն քո ի համբաւ զեղեցիկ կուսից իմոց խեղբս⁴ արկեալ հարկեցցց զքեզ զնել զանձն քո և զանձինս զօրացդ եկելոց ընդ քեզ իւրեւ թէ ոչ զոյին զերեզմանք ի ՚Ի՞ամասկոս անձանց ձերոց: Այլ արդ զիտասջեր, զեւ աշխարհս մեր ոչ է մտեալ ընդ հարկաւ ուրուք. և ոչ ևս ի յանձին կալացց⁵: բայց թէ ընծայ յինէն խնդրեսցես ըստ օրինի թագաւորաց՝ տաց քեզ և յարուցեալ երթիցես խաղաղութեամբ ի տեղի քո:

Իսկ Մահմետի դարձեալ յդեալ առ Շենբակուր՝ տոռը ինձ ասէ աղջկունս լս, և զնացից ի քէն խաղա-

1. Հ. Համահարցս

2. Ի. Տ. պակասեր՝ իցես

3. Հ. Թագաւորս, որ յիսկզբանցն

4. Հ. Խեւզբս — Թերես ընթեռնելի եցէ՝ խաղբս (հազբս)

5. Հ. Կալացց քեզ

Ղութեամբ, ապա թէ ոչ պատերազմաւ ելից ընդդէմ
քոյ: Եւ յանձին կալաւ արքայն Շենաց պատղամին յը-
զելց, և առաքեաց առ Մահմետ և ասէ¹. «մնա՝ այդինքն
ի բանակի քում, մինչեւ կատարեցից զինդրուածս քոյ:
Եւ նյոնժամայն հրաման ետ զօրաց իւրոց՝ կազմել սայլս
վաշեւք² զիւպակօք, և զընտիրս³ հեծելոց իւրոց⁴ կուռ
սպառազինութեամբ բառնալ ի վերայ սայլեցն փոխանակ
աղջկանցն զըրս⁵ խնդրեաց, որպէս զի կարասցէ զնոսա
որսաւ յորոգայթ իւր: Եւ եկեալ յեզը գիտոյն՝ բանա-
կէին ընդդէմ նոցա: Եւ էին ի վերայ սայլեցն աւելի
քան զիս արանց հեծելոց: Եւ ինքն Շենքակուր սակաւ
արամիք բառնակէր բացազցն ի նոցունց իրրեւ վատաւ-
նօք ինչ սակաւ, և առաքէր առ Մահմետ զօրավարն.
արի⁶, ասէ, զըր հայցեցիրն յինէն, զայս ւ աղջիկո⁷
յամենացն իշխանութեան իմում ընտրեցի պատուաւո-
րաց քոց⁸: Ըրու առեալ զպատուաւորս քո զօրուդ ըստ
թուոյ աղջկանցս իմոց՝ անց յայսկոյս գետոյս, և տաց
շաղջկունս իմ ըստ թուոյ վիճակաւ ում ումէք և հաս-
ցէ, գուցէ մարտ պատերազմի լինիցի⁹ ի մեջ զօրաց
քոց¹⁰: Եւ ետ տանել նաւս յայնկոյս գետոյն, զի միան-
դամայն անցցին առ նա: Իսկ նոցա անխորհուրդ մաօք
ընտրեալ¹¹ զպատուական զօրացն՝ անցին յայնկոյս գետոյն
իրրեւ արք ւ: Եւ իրրեւ վախճանեցին զանցանելն՝ հը-
րաման ետ արքայն Շենաց յարձակել ի վերայ զօրուն
կամացելի:

1 Ի 2. պակասէր և ասէ

2 Տ. վաշեօք

3 Տ. զընդիրս

4 Ի Տ. պակասէր իւրոց

5 Տ. զոր

6 Տ. արարի—Օր. Տ. և 2. այսպէս:

7 Տ. աղջիկո—Եւ ի սամուհ աղջիկ.

կամ աղջիկ

8 2. քո

9 2. եղիցի

10 2. քո

11 2. ընդուրաւ

Աւ իբրև բախսեցին զմիմեանս մարտիւ պատերազմի՝ վաղվաղակի ելին և որք ընդ վաշիւքն թագուցեալ¹ էլին, և ի մշջ առեալ² կոտորեցին ի սուր սուրերիի, մինչեւ ոչ մնաց ի նոցանէն ասպրեալ և փախստական։ Աւ հատին դլարս նաւուցն՝ զի մի ոք ապրեսցի³. յորմէ ոչ ոք ապրեցաւ. բայց միայն Մահմեան սակաւ արամբը հեծեալ յերիվարսն՝ անկան ի գետն, ապաստանեալք ի քաջութիւն երիվարացն։ Աւ սյնալէս կորազուխ ամօթով դարձեալ յարքայէն Շենաց՝ զնացին յերկիր բնակութեան իւրեանց։ Աւ ոչ ևս յաւել ելանել ի պատերազմի վերայ աշխարհին Շենաց։ Որ⁴ ամս ժ և ամիսս ը կեցեալ վախճանի։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յետ նորա փոխանորդէ զիշխանութիւնն Առւէլէյ ման⁵ ամս ժ և ամիսս ը և վախճանի։ Աւ այս է⁶ վարք նորա:

Սա յերկրորդ ամի իշխանութեան իւրայ գումարէր զօրս բազում⁷ և տայր ի ձեռս զօրավարին Մալիմայ և առաքէր ի զրունս Կասպից⁸։ Որոց եկեալ և մարտ եղեալ ընդ զօրս ծոնաց որ ի Դարբանդ⁹ քաղաքի՝ հարին զնոսս և հալածեցին. և քանդեալ աւերեցին զդբզեակապարիստ ամրոցին։ Աւ մինչդեռ քանդէին զպարիստ ամրոցին՝ դտին վէմ մի մեծ ի հիմունս նորա, որ

1. 2.³ թագուցեալն

2. 2.³ արարեալ

3. 2.³ ասպրեացէ

4. Ի. չիք³ որ: — Թառւականդ³ Աւժթի ամբուականին է և ոչ Մահմեան զորագորին։

5. 2.³ սուէլեման

6. Ի. 2.³ պակասէր է

7. 2.³ զօրս բազում

8. 2.³ կառից

9. 2.³ զարուանդ

ունէր վերնազիր զբոշմեալ օրինակ զայս. «Մարկիանոս ինքնակալ կայսր շինեաց դքաղաք և զաշտարակս զայս բազում տաղանգօք յիւրոց զանձուց. և ի յետին ժամանակս որդիքն Խոմայելի քանդեսցեն զսա և յիւրեանց դանձուց վերստին շինեացեն: Եւ իբրև զտին զդրում զոյն զոր ունէր քարն՝ դադարեցին ի քակելց զպատճակն. և կացուցեալ զործավարս ի վերայ՝ վերստին շենցին զկործանեալ պարխապն:

Եւ ինքն Մոլիմ առեալ զբաղմութիւն զօրացն՝ անշանէր ընդ պահակն¹ Շորայ, ասպատակ սփոեալ յաշեարշն չոնաց. և երթեալ բանակէր մերձ առ Թարգուքաղաքի չոնաց: Խոկ բնակիչք աշխարհին իբրև տեսին զհէնն, որ զարթուցեալ հասանէր ի վերայ նոցա՝ վաղվակի ազգ առնէին արքային Խազրաց, որ անուանեալ կոչէր Խաքան: Խոկ նորա առեալ ընդ իւր զբաղմութիւն զօրացն և զամենայն յաղթանգամ հոկայալ նունն² իւր, որոց արիութիւն զօրութեանն հոչակեալ էր առ ամենայն ազգս՝ և եկեալ բանակէր մերձ առ նման: Եւ ի բազում աւուրս մարտ եղեալ մարտնչէին ընդ միմանս, ոչ զունդ առ զունդ, այլ ըմբշամարտ մարտիւ: Եւ յապաղէր Խաքանն զխառնամսի³ պատերազմն վասն զալստեան Ելփ Թարխանին, զոր եր կոչեալ ի թիկունս օգնականութեան: Իբրև ետես Առուիման⁴ զանհուն զօրացն զբաղմութիւն⁵ վարանէր յանձն իւր, և խորհէր եթէ զիարդ⁶ մարթասցէ հնարս դատանել զի կարսոց վերծանել ի նոցանէ: Եւ հրաման տուեալ զօրացն ըուցանել հուր սաստիկ ի բանակին. և թողեալ զաղիս բացանել հուր:

¹ 2.³ պարհակն

³ 8.³ բազմութիւն

² 2.³ սկզբազունսն

⁶ 2.³ զինչ

³ 8.³ շխառնամսեալ

⁷ 8.³ հրամացեաց

⁴ 8.³ Առուիման—Օք. Տ. և Զ. սցովէս:

Նակին անդէն,¹ զհարձս և զծառայս և զաղախնեայս² և
զայլ խառնիճաղանձն՝ ձանապարհ կալեալ ընդ լիառն
Առվկաս՝ կոտորելը զանտառն, և ձանապարհ³ արարեալ
զերծանէր մազապուր ի ձեռաց թշնամեացն։ Եւ այնպէս
կորադլուխ գառնայլ լի ամօթով յաշխարհն ։⁴
Եւ կատարեալ զայս ամենայն՝ վախճանեցաւ Մոլի-
ման⁵։

ԳԼՈՒԽ Ճ.Գ.

Եւ յետ նորա փոխանորդէ զիշխանութիւնն Օմար
ամս է և ամիս է, և վախճանի։
Զաս ասեն ազնուականագոյն քան զամենայն արս
ազգատոհմին իւրոյ։ Սա արար զարձ զերութեանն, զոր
զերեաց Մահմետ յաշխարհէս ։⁶ Այսոց յետ այլիլցն զնա-
խարարս աշխարհիս, զի էառ⁷ զբազում ամրոցս և զե-
րեաց զարս և զիանայս։ Եւ իբրեւ հաստատեցաւ իշխառ-
նութիւնն Օմարայ՝ արձակեաց զբովանդակ զերեալս⁸
յիւրաքանչեւր տեղիս և խաղաղացցց զաշխարհս որ
ընդ իւրով իշխանութեամբ։ Սցն Օմար զբէ թուղթ
առ Լեռն⁽²⁹⁾ կայսր ։⁹ Առուսոց յաղագս ուսանելց զզո-
րութիւն հաւատոյս մերոյ, յորում էին պէսպէս հարց-
մունք, զորս¹⁰ համառօտ ի ներքոյ⁸ զբոշմեցից։⁽³⁰⁾

1 Տ. ի բանակին անդէն. և թողեալ
զազիս բանակին, զօրաձն

2 Հ. զաղախնեայս

3 Հ. կառեկաս... զան դառն, հանու-
պարհ

4 Տ. Ս. Առուլէյման: — ՕՌ. Տ. և Հ. այսովէալ

5 Տ. առ.

6 Հ. զերելոցն

7 Տ. զոր

8 Հ. ի ներքս

«Ենուամին Աստուծոյ Օմար, իշխան հաւատացելոց-
առ. 1. և ուն կայսր Նոռումոյ:

Ի աղում անզամ կամեցայ¹ զիտել զձերոյ կարծեօք
հաւատոյդ ուսումնիդ², և յաւելաք ուսանել³ եթէ զենէ
արդեօք խորհիք՝ և ոչ եղեւ մեզ հնար հասու լինել: Վ. յլ
արոյ ասան ինձ զստուգութիւնն, նախ⁴ վասն էր ասաց
Յիսուս առ աշակերտան, եթէ⁵ ամերկ եկիք և մերկ գառ-
նայք: կամ ընդէ⁶ր ոչ ընկալայք՝ զոր ասաց Յիսուս
զենքենէ, այլ (կամեցայք⁷) քննել զդիլս մարդարէիցն և
զսազմոսացն⁸ գտանել ի նոցանէ վկայութիւնս վասն
մարդանալցն Յիսուսի, և երկուացար և ի կարծիս ան-
կար, և ոչ բաւական համարեցար զոր վկայեաց Յիսուս
զանձնէ իւրմէ⁹, այլ հաւատացեր յայն՝ զոր ասացին
մարդարէքն: Վ. յլ Յիսուս արդարե արժանի էր հաւա-
տարմութեան, և մօտ էր յԽստուած¹⁰, և լաւագոյն
դիտէր զենքն քան զզրեալն, զորս¹¹ փոփոխեցին ադդք,
զորս ոչ դիտէք, և այլայլցին: Եւ կամ զիա՞րդ արդա-
րացուցանէք զզրեանն և զշետ երթայք նոցա՝ որ ինչ
նման թուի ձեզ: Դուք ասէք եթէ Օրէնքն զերեցան¹²
Բազում անզամ, և կորեան՝ որք ընթեռնուին զնոսա
յորդուցն Իսմայելի և դիտէին զնոսա. և մասցին ժամա-
նակու ինչ որ չկայը ինչ առ նոսա յայնմանէ և ոչ ինչ

¹ Տ. կամեցայք: — նախկին համարացա-
կիցն, որպէս յացանէ ի ծանօթուու-
թեան, յէջն 210, կամելով յարդա-
րեւ սպանհարթու ոճ թշքթշու ոյս-
որիկ, որպէս եզամարդուին՝ յանձնէ
ուղղագրեալէ զյոգնական և զե-
զական թիւս բացիցն Յայրագոին
ուղղագրութեանց թշքթշու զմին
միայն շանհակել աստեն շատանձեց,
զայլս ուղղեմք ըստ 2. առանց
նշանակելոյ:

² 2. աւատումդ
³ Տ. ուսանել
⁴ Տ. յաւելոյր ասան եթէ
⁵ Ի Տ. պակասէր եթէ
⁶ Թոզաք այսովէս ըստ Տ.
⁷ Տ. յաւելոյր ասան ի ժամադիք
(առ Է)
⁸ Տ. զանձնէ իւր
⁹ 2. աստուծոյ
¹⁰ 2. զոր
¹¹ Տ. որեցան

մինչեւ զբեցին ոմանկը ի մարդկանէ յիտ այնորիկ իւրեանց
հանձնարով, ազգ յիտ ազգի և ցեղ յիտ ցեղի. և նոքա
մարմնեղբէնք էին յորդւոցն Ազամայ, որք մոռանան և ի
կարծիս ըմբռնին. զի մօտ է առ նոսա սատանաց և նոր
մանօղք նորա թշնամութեամբն¹ իւրեանց: Եւ կամ ըն-
դէ՞ր ոչ գտանի յՕքէնսն Ովկիսի վասն արքայութեանն
և զժոխոց և գատասատանին և յարութեանն. այլ որք
զաւետարանն զբեցին՝ նոքա պատմեցին, Մատթէոս,
Մարկոս, Ղուկաս, Յօվհաննէս² իւրեանց հանձնարով:
Եւ զմիսիթարիչն, զորմէ ասաց յաւետարանն³ առաքել
Քրիստոսի՝ զՄահմետէն մերմէ ասացին առաքել: Եւ
կամ ընդէ՞ր զինի աշակիբսացն Յիսուսի հիշ ցեղս բա-
ժանեցան ազգք քրիստոնէից: Եւ անզուգական զօրու-
թեանն Աստուծոյ ընկեր և համեմատ և նման նման առ-
նեք՝ երիս Աստուածս խոստովանելով. և զամենայն օ-
րէնսն անձնիշխանաբար փոխուսիլ ջանայք, զթլվատու-
թիւնն⁴ ի սկրտութիւն փոխելով, և զզոհսն ի հազորը
դութիւն օրհնութեան հացի և բաժակի, և զիկւրակիէն
փոխանակ շարաթու պատուեցեր: Եւ կամ զեարդ էր
հնար Աստուծոյ ի մէջ արեան և մարմնոյ⁵ և պէսապէս
աղտեղութեանց յարգանզի ընակիլ⁶: Եւ կամ ընդէ՞ր
զոսկերս առաքելոց և մարգարէից պատուէք և կամ
զնշան խաչին, որ գատապարտութեան գործարան էր
ըստ օրինացն, կամ գտատիրս⁷, զոր պատուէք: Եւ զի
մարգարէն Եսայի վասն մեր օրինազրին վկայէ ընկեր
և համեմատ Յիսուսի. զի և ուղեկից նմա ետես մար-

1. Տ. թշնամութեամբք

2. ամենայն ուրեք՝ յօհաննէս, մօ-

ռէս...

3. Տ. յաւետարանն

4. Տ. զթլվատութիւնն

5. Տ. յաւելցը աստ յումզէտա՛ բնա-

կել.

6. Տ. ընակիլ

7. Տ. պատկերս

զարէն ի տեսլիանն հեծեալ մի իշջ և հեծեալ մի ուղարկու: Եսկ գուք ընդէ՞ր ոչ հաւատացք: Զայս ամենայն հասն ինձ ի զիտութիւն, զի կարացից զիտել զկարծիւ ուսմանդ ձերց:

Զայս ամենայն և յոլովագցին քան զայս ընդդիմաբանութիւնս զրեր Օմար իշխանն Իսմայիլի¹ առ թագաւորն Ահոն: Վասն որոյ հարկաւորի կայսրն Ահոն Պել պատասխանի օրինակ զայս:

ԳԼՈՒԽ ԺԴ.

«Փլարիսն Ահոն կայսր հաւատացեալ ի տէր² Յիշառու «Բրիստո, ճշմարիտ Աստուած մեր և թագաւոր ձանաշողաց զնա. Օմարայ Սառակինոսաց առաջնորդի:

Ուզպիսի բան եղից առաջի³ ուղղագցին և ճշմարտագոյն զառ ի քէն մեզ առաքելոցս, և զի մանաւանդ ուսեալք Յասոււծոյ հեղութեամբ խրատել զընդդիմակայսն, թերեւս տացէ նոցա ժամանակ ապաշխարութեան: Եւ և ոչ թագաւորական օրէնք են՝ խրտուցանող բանիւք «Եպէս քարամբք հարկանել զայնոսիկ, որք լսել կամին⁴ զջշմարտութեանն զաքանչելի խորհուրդ: Շայց վասն զի սկիզբն իսկ քո⁵ զրոյս գոնեա փոքրագոյն ինչ զիկրապարան ճան ճշմարիտն՝ ոչ սահը թէ արդար է:

Քանզի ասացեմ զրովն քով⁶, թէ քազում անգամ պեցար առ ձեղ զմերոց քրիստոնէիցս աստուածացին:

¹ Հ. Իսմայիլի

² Ի Տ. պակասեր՝ տէր

³ Տ. առաջի եղից

⁴ Հ. Լոեն և կազմի

⁵ Ի Տ. պակասեր՝ քո

⁶ Տ. քոյ

խորհուրդն. և եթէ ցաւելաք ուստանել¹ զձերց կարծիք հաւատոյդ ուսումնդ⁽³¹⁾: Եւ չիր հնար լինել և ու միում յայսցանէ. քանզի չիր ինչ հարկ ի յայսպիսիս ածել զմեղ յիրս²: Օչի և³ ոչ ուսաք իսկ ի վարդապետէն մերմէ⁴ և ի տեսառնէ օտար ուսումնականաց զայս պիսի միայնակ աստուածգիտութիւն առաջի ընկենուլ ի ծաղը կատականաց, և մանաւանդ այնոցիկ, որ չեն տեղեակ մարդարէիցն կանխասացութեան և առաքելոց քարոզութեան. զի զայս և այլոց պատուիբել սովոր ևմբ:

Այս, բազում անգամ զրեցաք առ քեզ, արդիօք թէ և այլ հասանիցէ զբել այլ վասն⁵ աշխարհական իրաց⁶ և ոչ վասն աստուածային իրողութեանց. և այս⁷ մեք որք խրատեալք յաստուածայնոյ⁸ ձայնէն, «տուք պատասխանի ամենայնի, որ հարցանենն զձեղոյ⁹, իսկ որ ուն հարցանէ առ նա ոչ պատասխանել: Այլ և ոչ զձերոց կարծեացդ զօրութիւն այժմիկ նորոդ կամիմք ուստանել այլ առ ի յԱստուծոյ. և վասն այսորիկ խրատեալք՝ «զարմենայն ինչ ասէ¹⁰ քննեցէք, իսկ զբարին ընկալարուք»¹¹; Անդ ունիմք մեք՝ դպատմութիւնս¹² զրով զերանելեաց ևպիսկոպոսացն մերոց, որք էին առ ժամանակօքն այնոքիւք, առ¹³ որով Ուահմեան այն օրէնսդիր ձեր լիալ է. վասն այսորիկ և ոչ յաղաղս որց պէտք էին՝ աշխատանել զքեզ¹⁴: Իսց զի մի կարծիցես զմեղ ամանեցեալս վասն այսպիսւոյ պանչելի աստուածգիտութեանս՝ լուր:

1. Տ. ամենայն ուրեք ի կրաւորակերպ
բայս՝ ուստանել ընակիել...

2. Տ. և ոչ մի ինչ հարկ յայսպիսիս
զմեղ ածեր յիրս: — Օր. Տպագրին
ունեք՝ մի ինչ հարկի յայսպիսիս
զմեղ ածել յիրս: — 2. մի ինչ հար-
կիյայսպիսիս ածեր զմեղ իրս:

3. 2. և զի

4. 2. մեք

5. 2. վասն այլ

6. Տ. բայց մեք

7. 2. յաստուածայնուոյ

8. Առ. Առզ. ԻԶ. 5? Սիրաց. և. 14?

9. Ի. Տպականէք՝ ասէ

10. Ա. Թեսազ. և. 21:

11. Տ. պատմութիւնս

12. Ի. 2. Տպականէք՝ աս.

13. Տ. զքեզ առնել.

ապա եթէ ախորժիցես և լուիցես ինձ¹ զբարութիւնս
երկրի կերիցես, որպէս ասաց Կապիտա:

Յոյժ գծուարին է, ով այր դու, զամենեին սուտն²
ի բաց ընկենուը յորժամ հակառակողն զհակառակելն
հանապազ խորհիցի: Այսպիսի ինչ է զոր ասեմն. եթէ
երկուք օմանք առ հուր ինչ մերձեցեալ կային, մին հուր
զնա ասէր, որպէս և երն իսկ, և միւտն հակառակելով
ազրիւր ջուրց զնոյն ասէր՝ յայտնապէս ահա երեեր
սուութիւն հակառակասիրին: Կրոդ ասացեր՝ տեառն մե-
րոյ ասել³ յաւետարանն, «մերկ եկիք և մերկ դառնայք»:
Եւ ոչ ուրիք դտանեմք յաւետարաննն⁴ տեառն մերոյ
ասացեալ զայս, թէպէտ և միշտ հրամայէ մեզ⁵ առնել
զիսոկումն մահու. այլ այս բան Յորայ է, քանզի հոսեալ
ի վերայ սաստանայական փորձութեանցն՝ ասաց զայս
արդարն. «մերկ եկիք յորովայնէ մօր իմշ, և մերկանդամ
դառնամ անդրէն. Տէր ետ, և տէր էտո?». եղիցի անուն
տեառն օրհնեալ⁶: Ի՞ոյց այսպէս մի զմիով սովորեցաք
արկանել հատակոտորելով⁷ զվկայութիւնս զրոց սրբոց,
զորս¹⁰ ոչ գուք ընթերցայք և ոչ ընթեանուք¹¹. այլ աս-
տուածավաճառք, զնոյն ասել հաւատավաճառքդ որք առ-
ձեզդ, զհաճոյն ձեր որսալով՝ աստուածայնոց զրոց բա-
նիւ ասելով զինչ և պէտք իւրեանց զօղանջին: Ի՞ոյց
թէպէտ հպարտացեալ ևս բռնակալութեամբդ՝ սակայն
լուր զպատասխանիսս: Վսացեր գտանել մեզ ի Սաղմոսս
Դաւթի և ի զիրս մարդարէիցն վկայութիւնս փառն
տեառն մերոյ: Ոչ այժմ ինչ յուղեալ դտաք զայսպիսի
տեառն

1. Ի. Զ. պակասէր՝ ինձ

7. Զ. ևառ.

2. Տ. զուտան

8. Յովիթ. Ա. 21—22:

3. Զ. յասել

9. Տ. հաստակուուրել

4. Տ. յաւետարանն դտանեմք

10. Զ. զգեցութիւնն գոր

5. Տ. մեզ հրամայէ

11. Զ. ընթեանցյը

6. Տ. հասեալ

սասացուածու Նոգւոյն սրբոյ, զօրս ի ձեռս մարզարէից
խօսեցաւ, այլ Աստուծոյ շնորհօք և կամօք յորմէ¹ սկսաւ
քարոզութիւնն քրիստոնէից՝ նովիմք և կատարեցաւ,
հիմնացեալ աճեաց և աճեցի² նորին արարչի և Աս-
տուծոյ զօրութեամբ:

Գրեցելը, թէ քաւական համարեցար, և հաւասա-
ցեր յայնս, և թօղելը զայս զոր վկայեաց Յիսուս ի վերայ
անձին իւրոյ, և յերկուացար³ և ի կարծիս անկար⁴
Երանի թէ հաւատայիր, որպէս ասեսդ՝ աւետարանին
հաստատուն և անսխալ պատմազբայն քան ամենացնի
թէպէտե ոչ հակառակ միմեանց դհինն և զնորս զիտեմք,
զի և ոչ հնար իսկ էր⁵ միոյ բարութեան աղըերն, այ-
սինքն աստուածութեանն⁶ բղիսել չար և բարի, ճշմար-
տութիւն և ստութիւն: Այլ յազագս զիւրընկալ առ-
նելցյ անօրէն ազդին Նրէից զմարմնով զայրւստ Իանին
իւրոյ՝ առակօք և օրինակօք և յայտնազյն պատուիրա-
նօք ի ձեռն մարդարէիցն զգուշացուցանէր զազգն, զի
մի՛ անհաւանք ըստ սովորութեան իւրեանց գալստեանն
Քրիստոսի լինիցին: Ըստ նոցին վկայեաց տէրն վասն
ինքեան⁷ յաւետարանն, և ոչ օտար յայնցանէ՝ զօրս ինքն
անմարմնաբար⁸ ի մարզարէիցն խօսեցաւ բերանոց, և⁹
զօրս յետ ժամանակաց ի մարմնանալն յայտնազյնս խօ-
սեցաւ: Եւ զայնոսիկ Աստուծոյ շնորհիւն ի սմին թղթի
յիւրաքանչիւրսն ցուցցուք տեղիս, զբարձրագյնան¹⁰ առ-
ռաւելքան զմարդոյ, և զիտնարհազոյնսն իբրև զմարդոյ
խոստովանեալ:

1 Տ. յաւերոյր աստ ի փակագիծու
(Հետէ) — Խմաստ բառիդ է՝ որով:

2 Տ.՝ հիմնեցեալւ՝ աճեցէ

3 Տ.՝ երկուացար

4 Տ.՝ զի ոչ իսկ հնար էր

5 Ի Տ. պակասէր՝ այսինքն առողջութեան

Ճութեանն

6 Տ.՝ վասն ինքեան Տէրն

7 Հ.՝ ինքեան մարմնաբար

8 Ի Զ. պակասէր՝ և

9 Հ.՝ և զբարձրագյնան

Արկանի զրկությունը պրեգելը, և թէ արդարեւ Յիսուս արժանի
էր հաւատաբարմութեան, և մօտ էր յԱստուած և լաւա-
դյն դիտէր զինքն քան զգլիալմն, զոր փոփոխեցին ազգը,
զորս ոչ զիտէք, որ այլայլեցին ի նոցանէ և փոխեցին։
Պատասխանին Շմարտութիւնն ոչ զիտէ զէն՝ չէ ասել
և զէն՝ է¹. իսկ ստութիւն զամենայնէ զիւրաւ² բուռն
հարկանէ. զի կարօղ է ոչ միայն զիրեելի արարածս ու-
րանալ այլ զնոյն ինքն արարչն ասէ ոչ է Եստուած։
Երդ չեն³ ինչ զարմանք, թէ և զգիրս Եստուծոյ կարէ
ուրանալ⁴ ստութիւն կամ թէ պատճառել ի նոցանէն
Պատաժառս⁵ մեղաց։ Յիսուս արդարեւ⁶ արժանի էր հա-
ւատաբարմութեան, ոչ որպէս մարդ ոք սոսկ, յԱստուծոյ
բանէն թափուր, այլ որպէս կատարեալ յիրկոսին, յաս-
տուածութեանն և ի մարդկութեան⁷։ Հաւատաբիմ են
և ի ձեռն մարդարեց⁸ նորին ասացուածք բանին. ոչ
վասն այնորիկ են հաւատարիմ՝ զի մարդիկ խօսեցան
զնոսս, այլ վասն զի անմարմնաբար նոքօք խօսեցա-
Եստուածն Բան։ Առ վասն զի խառն էր ի հոռմն և
ի նորումն վասն այսորիկ և ոչ հակառակ են միմեանց։

Եյլ որ ասացեր այլայլեալ զգլիանն՝ եթէ առաջ-
նորդ ուսմանդ քո ուսացյց քեզ⁹ զայդ՝ մոռացաւ զինքն,
և եթէ այլ ոք՝ ևս առաւել ստեաց։ Երդ լուր և գեղեց-
կապէս խորհեաւ։ Քում ուսմանդ առաջնորդ ոչ ասէ
հաստատել զբանն առանց վկայից¹⁰. նմանապէս ասէ և
զրէնքն հրամայեն, ասէ¹¹, «ի բերանց երկուց և երից

¹ Տ. և ոչ զշեն՝ է

² Տ. զիւրաւաւ.

³ Տ. չէ ինչ

⁴ Տ. ուրանալ կարէ

⁵ Տ. զնոցանեն պատճառս

⁶ Տ. արդեւք

⁷ Տ. յաստուածութեանէն և ի մարդ-

կութենէն

⁸ 2.՝ մարդարեկն

⁹ 1. ս. պակասեր՝ քեզ

¹⁰ 2.՝ վկայից

¹¹ 1. ս. պակասեր՝ ասէ, զոր հրա-

մարդկէն ընկեցեալ և ի բաց

առաջակտուածութեան ու մզկտու-

թերեւ բառ ու մզկտու-

վկայից հաստատեցի ամենայն բան^{1:} Գիտեմք զԱրդար
համ վասն Քրիստոսի յառաջ ընկալեալ զաւետիսն, ասե-
լով ցնա Սատուած. և զաւակի քում օրհնեսցին ամե-
նայն աղզք երկրի^{2:} Աւ Աահակ այսպիսի յուսով օրհ-
նեալ է զՅակոր. և³ Յակոր վասն սորին օրհնեալ է
զՅուգայ զորդին իւր^{4:} «Յուգայ, ի քէն ելցէ ինձ լինել
իշխան և պետ յերանաց նորա մինչեւ եկեսցին նմա հան-
գերձեալքն. և նա է ակնկալութիւն հեթանոսաց»^{5:} Օք
Մովսէս վասն սորին օրինազրեաց և պատուիրեաց զՅե-
սու, զԴաւիթ, զԱռողոմնն^{6:} և զերկոտասան մարդարէմն
հանդերձ Աամուելիւ, Եղիայիւ, Եղիսէիւ, զԵսայի, զԵ-
րեմիա, զԴանիէլ, զԵզեկիէլ, զարգարն զՅոր, զՅով
հաննէս Մկրտիչ զՕաքարեայ^{7:} որդին: Գիր ի վերայ
սոցա զերկոտասան աշակերտսն տեառն մերց^{8:} ևս և
զիօթանասունսն. և միանգամցն ընդ հինսն և ընդ նորս^{9:}
Ֆեա: Արդ այսքան սրբոց և սիրելեաց Աստուծոյ վասն
Քրիստոսի գալստեանն խօսեցելոց, զորոց և Մահմետն
քո վկայեաց լինել^{10:} սուրբս և ծառայս Աստուծոյ՝ ան-
հաւան լինիս, և զքո Մահմետն քան զԱստուած, որ
նորօք խօսեցաւ, և քան զԱստուածն Բան մարմնով
երեեալ հաւատարիմ համարիս: Աւ արդ զհամառօտն
հարցանեմ: ասա, աղաչեմ, Ֆեա ծառայիցն Աստուծոյ զմի
և յաղաղս միոյ խօսողաց վկայութիւնն ճշմարիտ է,
եթէ միոյ այլախորհի և այլիմացի^{11:} և ստելով ճշմարտով
կարծողի: Աւ այս է ստելով ճշմարտելն. զվերողին սուրբ»

1 Մատթ. Ժ. 16:

2 Կնհդ. Խ. 18:

3 Տ. զի

4 Տ. զիւ որդին

5 Կնհդ. Խ. 10 և Միքիէ. Ա. 2:
Հասուածդք աղաւազեալ է յոյժ:

6 Տ. ամենայն ուրեք՝ Աազոմնն:—2.

սողօմնն և սողօմնն

7 Զ. զաքարիացի

8 Ի Տ. պակասէր՝ մերց

9 Զ. պհինամ և զնորս

10 Ի Զ. պակասէր՝ լինել

11 Զ. Պայլախորհի և Պայլիմացի

որդ՝ ծառայս և սիրելիս¹ Աստուծոյ Վահմեան քոյ խոսսու-
վանել ուսուցանե ձեզ. և զորս² ի ձեռն նոցա խօսեցաւ Աս-
տուծած՝ ոչ բնակն ընդունի և ոչ այլում ընդունել ուսուցանե:

Ասացեր. և զեալոդ³ արդարացուցանեք զզրեանն
որեից, և զհետ երթայք՝ որ ինչ նման թուին ձեզ յայն-
ցանե. և զուք ասէք, եթէ օրէնին գերեցան⁴ բազում
անդամ. և կորեան՝ որք⁵ ընթեռնուին զնա յորդւոցն
Քարայելի և գիտէին զորս ի նմա. և մնային ժամանակս
ինչ որ չկայր առ նոսա յայնցանե և ոչ ինչ մինչեւ զրե-
ցն ոմանք ի մարդկանե յետ այնորիկ իւրեանց հանձա-
րովն ըստ կամաց իւրեանց, ազգ յետ ազգի և ցեղ յետ
շեղի: Եւ նոքա մարմնեղին էին յորդւոցն Եղամայ, որք
մոռանան և ի կարծիս ըմբռնին, զի մօտ է առ նոսա⁶
սատանայ և նմանօղք նորա թշնամութեամբն իւրեանցու
Պատասխանի: Օքարմանամ, զարմանամ ոչ ընդ անհա-
ւասութիւն և եթ ուսմանդ ձերոյ, այլ եթէ զեալոդ
ընդ յայտնութիւնդ ոչ ամաչէք, այլ զնոյնդ և զուզ ա-
ւանդէք, որպէս զի ևս ծիծաղելի լինիցիք, և զմեզ մե-
րովք բանիւք կարծէք զայթակղեցուցանել. և զդուխոդ
զոր ի թզթիդ քո յափշտակեալ զնես մերովք սաս-
ցուածովք⁸, կարծես հաստատել զուզ, թէ որ ասէք
Դուքն Արդ եթէ հաւատարիմ թուին քեզ⁹ սացուածք
մեր՝ ամենայնին պարտիս հաւատալ քանզի ստով վկայի
ոչ ոք¹⁰ զոմանս ի վկայութենէն¹¹ ընդունին և զեւսն ի

1 Զ. սիրելի

2 Տ. զոր

3 Զ. զի արդարացուցանեք

4 Տ. գերեցան:—Տես էջ 43, Ֆան. 11:

5 Զ. որ

6 Զ. ի նոսա

7 Ի. Տ. պակասէք՝ քո

8 Զ. սացուածք

9 Ի. Զ. պակասէք՝ քեզ.

10 Տ. յաւելոյ ի վակազմի՝ (որ)

11 Տ. ի վկայութեանցն:—Օր. Տար:

մերութեանն:—Հաստածդ թթուի

ընթեռնի այտուա: Քանզի ստով

վկայի ոչ որ զոմանս ի վկայու-

թեանցն ընդունի և զեւսն ի բաց

ընդունու:

*:

բաց ընկենուն: Դայց որովհետեւ չես տեղեակ՝ լուեալ
ուսիլու: Ասեմք մեք Նրէիցն գրեալ ի սրբութեան տե-
ղւոջէ¹ ոչ յանձանց ինչ սաեղծեալ զբոյցու, այլ ի սացդ
պատմութեանց երբայիցի արանցն աստուածասիրաց տե-
ղեկացեալք² և ի զբոց նոցին իսկ մարգարէիցն: Եթ ին
արագածք Աստուածոյ, զորս ի սկզբանն ի ու աւուրս զոր-
ծեաց. Էֆ³ զիրք աստուածայինք. և որ առ Երբայիցիսն՝
նոքին և առ մեզ: Այցնքան և թիւ ալփարեսիցն նոցա⁴,
թէպէտ հինգն ի նոցանէ կրկնակս ունին, և զայն⁵ ոչ
առանց մեծի խորհրդոյ: Զայս վասն այնորիկ Աստուած
մարգարէիւքն ուսուցեալ կարգեաց, զի ի միմեանց հաս-
տատեալ ճշմարտութիւնքն երեկացին: Զայս էֆ զբոց
հինգն են օրէնք⁶, զոր Թօքայ Երբայիցիք, և⁷ Օքանայ՝
Ասորիք, և Ասմա⁸ մեք կոչեմք, որ ունի զաստուածզի-
տութեանն զօրութիւն և զարարչազգործութեանն Աս-
տուածոյ զաշխարհս, և պատուէր վասն կոոցն հեթանո-
սաց՝ ոչ պաշտել զնոսա, և ուխտն որ առ Արբահամ
վասն զաւակին որ է Վրիստոս, և այլ պէսապէս գատառ-
տանաց և զոհից հրամանո՞ ի բաց հրաժարեցուցանել
զնոսաի հեթանոսական սովորութեանցն որում ընդելն⁹ իսկ
էին: Իսկ Յեսուայ և Վատաւորացն և Նոռութայ գիւղն
և Թագաւորութեանցն չորեքին և Մնացորդացն՝ սոքա
պատմողք ին ըստ Ժամանակին սքանչելազործութեանցն
Աստուածոյ, և անսխալ ազգարանք արգարոցն ազգի, որ
զայ իջանէ կարգաւ ի Վրիստոս, և պատմութիւնք
թագաւորացն¹⁰ Խորայիլե, եթէ ոյք եղեն հածոյք Աս-

1 Տ. Հրէիցն ի սրբութեան տե-
ղւոջւ—Օր. Տող. տեղւոջէ

2 Տ. տեղեկացեալ

3 Տ. յաւելոյր ի փակադին (Են)

4 Հ. աստուածոյ (այ, փախանակ Աց
կամ այց)

5 Տ. այն

6 Հ. այս Ի՛, զբոց Ե. Են օրէնքն

7 Ի Տ. պակասէր

8 Հ. թօքա... որաթմա... նոման

9 Հ. ընտելե

10 Տ. զիթագաւորացն

տուծոյ և ոյք ոչ ևս և բաժանումն ազգին վասն յանցանաց իւրիեաց յիրկուս թագաւորութիւնս, Կարսյելք և Յուղայ, և պատմողք վասն դիրութեան նոցին: Կոկ Ապղմոսք Դաւթի, և զիլք Առղոմնի, զոր Առհեղին և Շերտելիք Երբայցիք, և Պատմնան և Առնաբան¹ մեք Արփեայ, Դանիելք և Եղեկիէլք² զրենողին՝ ամենիքեան³ Արփեայ, Դանիելք և Եղեկիէլք⁴ մարդարէիցն (և)⁵ Եսայեայ, մարդարէութիւնք ևն վասն զալստիանն Քրիստոսի: Երդ եթէ ի Նրէց ոք շփոթեալ ապականէր՝ ոչ էր Հասրդինոյն ողջ պահիլ զի չարագործօղքն յայնոսիկ՝ նախ զթիւս⁶ զրենոյն ի բաց բառնային, և ի մի կամ յիրդուս և⁷ կամ թերես աւելի յիրիս զիլս ժողովիւր⁸, Կյաւելուածոն ի բաց բարձումն⁹. Քանզի ի նոսա զիւրացն¹⁰ չնջեն:

Եւ գարձեալ որպէս կարծեմ՝ չես անտեղեակ թշնամութեանն որ ընդ մեղքը իստոնիսայսս և ընդ Նրէայմն, և ոչ վասն այլոյ միոյ ուրուք, այլ վասն խոստովաննելցն Արդի զնիսուս, եթէ սա է Քրիստոսն, որ և Ուրդի Վատուծոյ ի մարդարէիցն¹¹ քարոզեցաւ. իսկ Նրէայքն ահա զսա ոչ ասեն Քրիստոս, այլ թէ և խոստովանին, թէ պարման է գալ Քրիստոսի՝ սակայն անշաւանիք¹² մնացեալք զրոց մարդարէիցն և ոչ այսպէս որդի Վստուծոյ¹³ խոստովանին զՔրիստոս: Երդ ապա զիանը ապականիք Կյենոյն զայսպիսի հաստատուն և անտարակուսելի վկայ-

¹ Տ.՝ առնաբան

² Ի.՝ Զ. պակասելք և

³ Ի.՝ փակագծի զ (և)-ոյ մեղեն յաւ ևլուր:

⁴ Տ.՝ հասցի, երեմիա, դանիել, եղիշելք:

⁵ Տ.՝ ամենայնն

⁶ Տ.՝ զժիք:

⁷ Ի.՝ Տ. պակասելք և

⁸ Կախին հրատարակիչ յունակեաս

ուզգէ ի Տ.՝ ժողովէին:

⁹ Տ.՝ և զյաւելուածն ևս ի բաց բառնային:—Օր. Տար. զյաւելուածն

ի բաց բարձում:

¹⁰ Տ.՝ գիւրուզին էր

¹¹ Տ.՝ առ ի Մարդարէիցն

¹² Տ.՝ անշաւանին

¹³ Տ.՝ որդի ստուծոյ և ոչ այսուրեա

ութիւնս¹ յիւրեանց² զբեանն թողին և կամ ինքեանք յաւելին, որք ոչ կարօղ են ի վերայ այլոյ ուրուք իմասնալ թէ և յցժ ոք բանադատեցէ զբանն, եթէ ոչ ե վերայ մարմնացելոյ Արդւցին Եստուծց:

Դնկալ և զերբորդ պատասխանիս: Գերութիւն Նըրեկիցն նախ քան զմարմնով գալուսան Վրիսառոսի եղելիսկ զեարդ առ նովաւ հաստատուն կացեալ էր և տաշմարն և կտակարանքն և քահանայութիւնն, որպէս և յայտ իսկ է³ ի սրբոց աւետարանացն, որպէս զու իսկ վիայեցեր զտեառնէն, զթլփատութենէն⁴ և զայլոցն մի ըստ միոջէ, զոր ըստ աւետարանացն կատարեաց: Եւ զայտ ոչ յայգագս այլ ինչ իրաց⁵ երեկի ալարեալ⁶, այլ զի արդարացուացէ զեւր ասացեալսն ի ձեռն մարդարեիցն, և ցուցցէ թէ⁷ չն հակառակ նմա, այլ սիրելիք և հաստատուն վկայք անտեսութեանն նորա խորհրդաց⁸: Եւ որք էին կտակարանքն որ առ Նըրեայսն՝ եթէ ոչ զրեանն մարդարեից, որ յիտ երկուց⁹ զերութեանցն, Եսրայելի և Յուգայ՝ առ Նըրեայսն կային մինչև ի ժամանակս Փրկչին մերոյ, յորում բազում վկայութիւնս տեղն, յուսուցանելն զանհաւան Նըրեայսն՝ յիշեաց յաւետարանն: Գերեցան ի Նարուգողոնոսորայ ազգն Նըրեից այլ աստուածային այցելութիւնն ոչ ևս նացա թշլը ըստ այժմու զերելոյդ կատարել¹⁰. այլ զբովանդակ ազգն ըընակիցցց ի տեղիս յորս կամեցաւ: Ծնդ նոսա էին և¹¹ զբեանն, այլ և ոմանք ի մարզարեիցն, որպէս Եղեկիել ասէ զենքենէ, թէ ևս էի ի մեջ զերութեանն առ ամին:

1 2.՝ վկայութիւն

7 8.՝ եթէ

2 8.՝ իւրեանց

8 2.՝ խորհրդաց

3 2.՝ յայտ և

9 8.՝ երկուցուն

4 8.՝ զթլզատութենէն

10 8.՝ կատարիւ

5 2.՝ այլ իրաց

11 8.՝ սպակառեր՝ և

6 8.՝ էր արարեալ

Վարպար¹ դետոյ². և Անանիանիքն երանելիք ի Ռաբե-
լոնի ընկեցան ի Հնոցն, և մեծն Գանիէլ ի Ռաբելոնի³
մարգարէացաւ և անդ ընկեցաւ ի գուբն առիւծուց, և
ամեն Խոթերայ իլքն ի նմին զործեցան. Շայց զի ընդ
նոսա էին զրեանն՝ լուր Նողւոյն սրբոյ ի Աաղմոսին
ասացեալ մարգարէիւն վասն գերելցն Շրէից, որ թէ-
պէտ տակաւին չեր եղեալ՝ այլ զանսխալ պատահումն
իրացն նշանակեաց ի Ֆլւ սաղմոսին ասելով, «առ գե-
տովքն⁴ Ռաբելացւոց, անդ նստէաք և լայաք, որպէս
իշշեցաքն զԱխօն. ի միջի նոցա ուռեաց կախեցաք⁵ զզոր-
ծարանս մեր. Օք անդ հարցանէին⁶ զերիչք մեր զբանս
երդոց, և տարիչք մեր՝ զբանս⁷ օրհնութեան»:

Իսկ որ ասացեր ամարգիան հանձարով զրեալ զզոր-
ւեանսա՝ զիտեմ զի զառ ի Ճշգրէ զերիլորդումն կամիս
բամբասել զի թէպէտ և եղնն ի վերայ նորա⁸ շնորհք
Նողւոյն սրբոյ, և առանց զրիպանաց զրեաց⁹ զա մե-
նայի: Եւ յորժամ միանգամայն ազգն, յաշխարհացն յորս
սփորեցան, զարձան Ճշրուսաղէմ բերելով ընդ իւրեանս
դպրեանն՝ երեկցաւ և անդ սրանէելեացն Սասուծոյ¹⁰
դպրեանն՝ զարձան առ ի Ճշգրէ պատ-
շործ, զի և ոչ մի ինչ ի հնոյն¹¹ և առ ի Ճշգրէ պատ-
շութենէն զտաւ պակաս¹²: Եւ որ ասացերն ամարգիկ
էին և մոռացմամբ ըմբռնէին՝ մարգիկ հանապաղ յա-
էին և մոռացմամբ ըմբռնէին՝ մարգիկ հանապաղ յա-
էին առ ապացիութեամբ. մեծ է զօրութեամբ՝ այս
Սասուծած յաւիտենական, որ մեծ է զօրութեամբ՝ այս

1. Տ.՝ քոփար

2. Եղեկ. Ա. 1:

3. Տ.՝ Ի Բաբելոն

4. Տ.՝ գետովք

5. 2.՝ նստեալ լայաք, յորժամ Ճի-
շէաց զափան ի միջի նոցա Զու-
ռաց կախեցաք... Սադը. Ձ. Ձ.

6. Տ.՝ հարցին

7. Տ.՝ բանս երգոց... բանս օրհնու-

թեան

8. Ի 2.՝ պակասէր՝ նորա

9. 2.՝ պատամեաց

10. Տ.՝ Սասուծոյ օրանէելեացն

11. 2.՝ ոչ մի ի հնոյն

12. Ի 2.՝ պակասէր՝ պակաս

պէս և իմաստութեան¹ ոչ ունի սահման և եզր, որ
խօսեցաւ ընդ մարդկան ծառայիւք իւրովք մարդարէ-
իւք, առ որում ոչ է կարծեաց կամ մոռացման ախտ:
Նա խօսէր ի մարդարէսն, և ոչ ի մարդկային² իմաստո-
թողըր զնոսա: Իսց դքո Մահմետն զգիալցե՞ս ար-
դեք մարդ, որց բանիւ միայն զայսպան սրբոց Աստո-
ծոյ զիկայութիւնս³ ի բաց ընկենոււս: Կամ որ ասացեր
ամօս լինել զատանաց ի ծառայս Աստուծոյ: և զԱս-
տուած ամենելին ոչ: Իսց որք բարւոքն խորհին՝ զի-
տին, եթէ ի մինն, որ առանց վկայութեանց⁴ զրոց է՝
նմա է մերձննալ սատանացի, բան թէ յայսպան⁵ սուլրու
և վկայեալ յԱստուծոյ: Եւ որ յաղազս զբենցին բան
այսպանս բաւականացի⁶:

Կակ որ ասացեր ոչ զտանել մեզ յօրէնսն Մովսիսի
վասն արքայութեան և զժոխոց և զատաստանի և յա-
րութեան՝ ոչ կամեցար զիտել, եթէ որպէս կարէին
մարդեկ ընդունել զգիտութիւնն Աստուծոյ, այնպէս ու-
սուցանէր զնոսա Աստուած: Եւ ոչ եթէ միով մարդա-
րէիւ խօսեցաւ Աստուած ընդ մարդկան և միով ժամա-
նակաւ, որպէս զու ասացեր, եթէ զոր ինչ պատուիրե-
լոց էր Աստուած ազգի մարդկան՝ զամենացն ընդ Մով-
սիսի ձեռն պատուիրեաց⁷, ոչ այդպէս⁸. զի զոր ինչ նո-
ցին պատուիրեաց⁹ չպատուիրեաց զայն նոցա, որ յա-
ռաջ քան զնոյ, և զոր Երրահամու պատուիրեաց՝ չը
պատուիրեաց նոյի, նոյնպէս զՄովսիսին՝ չպատուի-

1. Տ.՝ յիմաստութեան

2. Տ.՝ ի մարդկան

3. Տ.՝ արդեւք՝ մարդ՝ որց բանիւ
զայսպան սրբոց աստուծոյ զվկայ-
ութիւնն. միայն բանիւ նորու ի
բաց:—Տ.՝ մկայութիւնն

4. Տ.՝ մկայութեան

5. Տ.՝ յայնքան

6. Տ.՝ պայտան բաւական

7. Տ.՝ զամենացն ընդ մովսիսի և ձեռն
նորին պատուիրեաց

8. Տ.՝ չի՝ այդպէս

9. Տ.՝ պատուիրեաց նոցին

բեաց Արքահամու, և զոր Յեսուայն՝ չպատռւիրեաց
Վովսիսի, և զոր Ամուելի և Գաւթի և այլոց մար-
դարեկցն յիւրաքանչեւր ժամանակս՝ չպատռւիրեաց Յե-
սուայ: Օք որպէս ասացաքն յառաջագոյն՝ այսպէս առ-
սակաւ սակաւ¹ հաճեցաւ Աստուած զիւքն և դիամօ-
իւր ծանուցանել ազգի մարդկան: Օք և ոչ իսկ կարե-
ին² մարդիկ միահաղոյն բուռն հարկանել զսքանելի զի-
տութենէ նորա:

Երդ եթէ զամենայնն ընդ միջ մարդարէի ձեռն խօ-
սեցեալ էր՝ ընդէ՞ր և զայլ մարդարէսն առաքէր Աս-
տուած. կամ եթէ այնմ ամենայնի թշյլ տայր ապակա-
նիլ³ որպէս զուգ ասես՝ ընդէ՞ր բնաւ խօսեցաւ ընդ նո-
սուայ: Երդ թէե յառաջակրթութիւն էր Վովսիսին մարդ-
կան և ոչ տակաւին կատարելագոյն՝ սակայն նշանա-
կեաց Աստուած⁴ և ինմա վասն յարութեան և դա-
տաստանին և դժոխոցն: Աշան յարութեանն ասէ, առե-
սէք, զի ևս եմ Աստուած, և ոչ է այլ Աստուած բաց
յինէն: Եւս սպանանեմ և կիցուցանեմ, հարկանեմ և բը-
շկեմ: Եւս սպանանեմ և զանէ զձեղի ձեռաց իմոց⁵: Եւ վասն
ժշկեմ, և ոչ ոք հանէ զձեղի ձեռաց զանց⁶: Եւ վասն
դատաստանին ասէ, արեցից որպէս զփայլակն զսուսելի⁷
միաւ բորբոքեալ է, ասէ, ի բարկութենէ իմմէ, այրեսցէ
հուր բորբոքեալ է, ասէ, ի բարկութենէ իմմէ, այրեսցէ
մինչեւ ի դժոխս ներքինս¹⁰: Իսկ զառաւել կատարելութիւնն
և զսոցին աձումն այլովք մարդարէիւքն յայտնագոյն ասէ:

1 Տ. ասկաւ առ սակաւ.

Տ. առանելի իմ

7 Բ. Օր. Լ. 41:

8 Անդ.

9 Ի. 2. առականէր՝ իսկ

10 Երեմ. 42. 4:

2 Տ. զի և ոչ կարենի իսկ

3 Տ. ասպականել

4 Տ. տէրն

5 Բ. Օր. Լ. 39:

6 Տ. արբեցից որպէս փայլուկն —

Եսկ որ ասացեմ «Մատթեոս, Արքոս, Կուկաս և
Յովհաննէս զրեցին զաւետարանն»՝ զիտեմ՝ ընդ ճշմար-
տութիւն մեր քրիստոնէիցս¹ նեղիս, և կամիս, զի ստու-
թեանդ քոյ ընկեր դատանէիր, թէ ասէաք՝ թէ զրեալ ի-
ջցյ զայդ Աստուած յիրկնից, որպէս գու վասն Փուր-
կանիդ² քոյ ասես. թէպէտե չեմք անտեղեակ, թէ և
գքցյդ³ Օմար և Եբու-Թուռար և Աազման⁴ պարսիկ⁵
զրեցին(32). և գուք ստելով համբաւէք, իթէ յիրկնից
իջցյ Աստուած: Երդ յայտ ծանիր զճշմարտութիւն
մեր քրիստոնէիցս: Օփ թէ այդ այգպէս եր՝ զիարդ գու-
զրպարտես, թէ յեայ ստեցին յաւետարանն կամ մեք
և կամ այլ ոք⁶: Օփնէ արգելցյր զանուանս աւետա-
րանացն ի բաց բառնալ և զայն զրել ես, թէ⁷ Աս-
տուած յիրկնից ի խոնարհ իջցյ: Եյլ և⁸ զայս տես,
զի ոչ հաձնցաւ Աստուած ոչ իւր յանդիմանախօսու-
թեամբ առանց մարմնոյ առ ժողովուրդս մարդկան, և
ոչ հրեշտակս առ մարդիկ առաքելով խրատել զնոսա.
բայց մարդարէս ի նոցունց ընտրեաց⁹ և զնոսա առա-
քեաց. վասն որոյ և տէրն յորդամ կատարեաց զամենայն
յառաջագոյն սահմանեալս իւր, զորս ի ձեռն մարդա-
րէիցն խօսեցաւ նախ քան զանուլն մարմնն, և զիտա-
ցեալ իթէ մարդիկ են կարօտ օդնականութեանն Աստու-
ծոյ՝ խոսացաւ նոցա առաքել զայդին սուրբ պատակ-
զիտոս կոչեցեալ¹⁰, այսինքն միսիթարիչ. զի արտմէին իսկ
և սգային յորդամ լսէին ի վարդապետէն իւրեանց և ի

1. Տ. ասաս և ի ատորեա մերս քրիս-
տոնէիցս: — 2. ասաս՝ ընդ ճշմար-
տութիւնս

2. 2.՝ Քուրդանիդ

3. Քոյդ

4. Տ. ապութուռաւատ և սալման

5. Տ. պարսիկք.

6. 2.՝ թէ մեք և թէ այլ ոք

7. Տ. յաւելցյր ասաս՝

8. Տ. այլ ես

9. 2. յաւելցյր ասաս աստուած

10. Ի Տ. պակասէր կոչեցեալ: — 2.
ունենացն ուրեք՝ պատակէլխոսա

տեառնէն, թէ¹ թողլոց է զնոսա: Աւ որպէս ասացաք՝ վասն այնորիկ զողին սուրբ պառակղիտոս կոչեաց, որպէս զարդարե միմթարիչ զնոսա վասն համբարձման նորաւա², և որպէս զիշեցուցանօղ³ ամենայն խօսեցելոցն ընդ նոսա և գործելոցն առաջի նոցա, զորս⁴ և զբելոց էին ամենայն ափեղեւաց: Երբ՝ զիտեա զի պառակղիտոս մը խիթարիչ անուանի և ոչ Վահմատ⁵. այսինքն գոհանամ, եւքառիսատէ⁶ ի մեր լեզու և ոչ պառակղիտոս⁷ (33):

Երդարե առանց թողութեան է հայհցութիւնս որպէս հայս, որպէս ասաց տէրն յաւետարաննն, եթէ սոր հայհցէ զողին սուրբ՝ մի թողցի նման⁸: Օքինչ չորացն քան զայս հայհցութիւն՝ եթէ զողին սուրբ սուրբ զայր մի օտար ի զիտութենէ զլոցն Եստուծոյ: Աւ զի զողուցն սրբոյ տէրն ասաց՝ լուր նոցին իսկ ասացելոցն. «իսկ միմթարիչն ազին սուրբ, ասէ, զոր առաջ քեսցէ հայր յանուն իմ» նա ուսուցէ ձեզ զամենայն և յիշեցուսցէ ձեզ զոր ուսուցի ձեզ⁹: «Օսոր առաքեսցէ հայր յանուն իմ» ասէ, և քո Վահմետն ոչ եին յանուն տեառն մերոյ, այլ յիւր անուն. և ազին սուրբ սրբոց ասաց և ոչ մարդկան¹⁰, այսինքն աշակերտաց. և գունդինին զիտեա զի¹¹ ոչ երբէք տեսին առաքեալքն տեառն Վահմետն քո:

Երդ որպէս վերագցնն ասացի՝ ընդ միոյ միոյ¹² մարդ շարի ձեռն ըստ ժամանակաց զիւլմշ աստուածութեանն

¹ Տ. Եթէ

² Տ. որպէս արդարե միմթարիչ
Եսկ զնոսա վասն նորա համբարձ-
ման

³ Տ. յիշեցուցանօղ.

⁴ Տ. գործեցելոցն... զոր

⁵ Տ. ահմատ

⁶ Տ. եւքառիսատէ

⁷ Տ. ի մեր լեզու և (է) ուսուակ-

գիտուս

⁸ Վահմետ. Ժ. 31:

⁹ Ցովհ. Ժ. 26:

¹⁰ Հ. հազին սուրբ սուրբ ասաց և

ու մարդ

¹¹ Հ. թէ

¹² Հ. ընդ մի միոյ

զիտութիւն ուստուցանէր Արարիչն մեր: Իսյց և ոչ
մարդարէիւքն կատարեաց զամենայն՝ զալ յաւխտենա-
կան արդարութեամն¹, որպէս Աստուած² ի ձեռն Դա-
նիէլի մարդարէին. զի զերիս յայտնեաց Աստուած փո-
փոխմունս, որովք³ ի ճշմարտագյն աստուածդիտու-
թիւնն մարդիկ յառաջ զալ կարասցեն, ի կռապաշտու-
թեամն խաւարէ ի չափաւոր ճաճանչ օրինացն ըրւսցի
և անզուսա ի հզօրագյն լցոն Քրիստոսի աւեաարա-
նիս, և յաւեատարանէ անտի⁴ ի հանդերձեալ անդիշել
լցոն: Օչորրորդ փոփոխութն կամ վարդապետութիւն
կամ խոսառութն՝ մարդիկ յայլոց մարդարէից ոչ ընկա-
լան⁵. այլ զնորին հակառակն և պատուեր յոլովակի ի
նոյն բնքն Փրկչէն՝ ոչ զոք մարդարէ կամ առաքեալ
յետ աշակերտացն իւրոց ընդունել:

Եսկ որ ասացեր յետ աշակերտացն տեսան յիօթանա-
սուն և յերկուս բաժանեալ մեղ⁶ մասունս՝ չէ այդպէս.
քանզի մի՛ ստութեամբ զքեղ միսիթարել կարծիցես զմել
սխալանս՝ ինչ օրինակ առնլով: Եւ արդարե աղարտելի
է քոյդ, որ ոչ է նման ծառայիցս⁸ Աստուածոյ: Եւ զե-
արդ է ևս ասացից մից լեզուի է վարդապետութիւնդ
ձեր և մից ազգի (34), և ժամանակ երեման դորա, որ-
պէս դուքդ ասէք՝ ճ ամ, փոքր ինչ աւելի կամ պակաս:
Արդ յայսքան սակաւժամանակեան և մից ազգի ուսման
գտանիմք բազում որոշմունս: Այլ որ ի գիտութիւն մեր
հասին՝ ևս այսոքիկ. Քաւզի, Արբարի, Խուրապի,

1 Տ. զալոց զյաւխտենական արդա-
րութիւնն

2 Տ. (յայտնեաց) Աստուած:— Բառդ՝
Աստուած զուցե ընթեանի և ա-
ռաց

3 Տ. որով

4 Տ. պակասէք՝ անտի

5 Հ. չորրորդ փոփոխութն կամ վար-
դապետութիւն այլոց խոսառութն-
եամ մարդարէից մարդիկ ոչ ըն-
կալան

6 Ի. 2. պակասէք՝ մեղ

7 Հ. սպալունս

8 Հ. դառնայից

Վետրի, Մուրջի, Ըստաղի, անսաստուած Յաշղի¹, որք
ուրանան զէութիւնն Աստութօյ և զյարութիւնն և զա-
սացիալ քյ մարդարէն, Հարիւրի: Եւ այս Հարիւրիս
երկու². մի մասն ոչ է խոռվասէր, և միւս մասն այնքան
ունի տո ձեղ հակառակութիւն և ատելութիւն³, որ լա-
ւազյն համարի զապանանելն զձեղ քան զամենայն ար-
դարութիւն, անսաստուած և թշնամի զձեղ կարդալով և
դիտելով. իսկ մեռանելն ի ձենց առաջին ամենայն⁴ բա-
րեգործութեանց համարի: Եւ այս դործի ի վերայ
այդը, զի զու սրով կոտորելով զայնոսիկ, որ փոքր մի
խորշին ի կարծեաց քոց՝ չխորհնիս⁵ մեղանչել ։ Աստուած:
Երդ եթէ ի քյումդէ⁶ աւագիկ գտանին այնպիսի իրք,
որ մի ազգ էք⁷, մի լեզու, մի ազգապետ, նոյն և իշխան
և քահանայապետ և գահձմապետ՝ թէ արդարե մարդ-
կային իմաստիք էին հաւատք քրիստոնէիցս՝ զի՞նէ
զարմանք էին վատթարագյն ևս հաւատ քան զձերդ
ի մեղ լինել: ու ամք են⁸, փոքր ինչ պակաս կամ աւելի,
յորմէ (Հետէ)⁹ Կրիստոս երեւցաւ, և աւրածեցաւ ա-
շխարհանն ընդ ամենայն ազգս և լեզուս մարդկան ի
ծագաց մինչեւ ի ծագս տիեզերաց, ի Յունաց և ի Հոռո-
մայեցւոց քաղաքավարութիւնն¹⁰ և ի բարբարոսսն հե-
ռաւորս. և եթէ է¹¹ ինչ սակաւիմացութիւն՝ և այն
վասն լեզուին այլայլութեան: Փոքր ինչ, որպէս¹² ասաւ
ցի, բայց ոչ այդպիսի աննուելը թշնամութիւն որպէս
քոյզդ: Օչի որ հե ասացեր՝ մի¹³ զայնոսիկ, որք պիզճք

¹ Զ. քուզի, սակարբուռռապի . . .

պատի, անսաստուած Հայի

² Ի. Տ. պակասէր՝ երկու

³ Տ. Հակառակութիւն ատելութեան

⁴ Տ. յամենայն

⁵ Հ. խորհնիս

⁶ Տ. ի քումդէ

⁷ Զ. ազգէտ

⁸ Ի. պակասէր՝ են

⁹ Թուզաց՝ այլայլութեան ըստ Տ.

¹⁰ Հ. քաղաքավարութիւննեւ

¹¹ Ի. Հ. պակասէր՝ է

¹² Ի. Տ. պակասէր՝ որպէս

¹³ Ի. Տ. պակասէր՝ մի

և աղտեղիք էին¹ ի հեշտասիրութեան և ամբարշտեալք յԱստութոյ, որպէս և զայլ հեթանոսոն՝² բերեալ մեզ համարիս, որ զգալշութիւնն իւրեանց ամենասուրբ անուամբն Քրիստոսի թագուցանել կարծեցին, և քրիստոնեայ³ ինքեանք զինքեանս կոչեցին. որոց հաւատքն հայ հօյութիւն⁴ էին և մկրտութիւնն ևս պղծութիւն, զորս ի դառնալն իւրեանց ի պղծութենէն⁵ սուրբ եկեղեցին մկրտէր իրրե զհեթանոսոն, զորս⁶ վաղ երարձ Կատուած ի միջոյ, և չգտանին⁷ ուրիք հետք: Եւ հօթանասունս կոչէին ի մեզ քրիստոնեայք⁸, և ամենիքին զնոյն սուրբ և դյաւախենական կենացն զրաւական ընեկալան զմկրտութիւնն: Եւ եթէ իցեն ինչ բանք ուրուք ի նոցանէն վասն փոքու իրիք՝ և այն ի հեռաւառորսն և յայլալեզուսն⁹, և մանաւանդ յայնոսիկ¹⁰, որ ի մէջ ձերոյ բռնակալութեանդ բնակեալ են՝ սակայն քրիստոնեայք են և ոչ վիրստին պէտս ունին մկրտութեան: Եւ այս չեն ինչ զարմանք, եթէ յոյժ հեռաւառըն և այլալեզուքն չեն այնքան տեղեակիք, որքան պարան է, ճշմարտութեան աւանդիցն. սակայն նոյն զիրք յիւրաքանչիւր լեզուսն ողջ պահեալ, նոյն աւետարան առանց ամենայն սխալանաց¹¹: Եւ արդ զյուլով լեզուսն թողից, յորս այս պքանչելի և փրկարան աստուածզիտութիւնս բաշխեցաւ, բայց զսակաւսն յիշեցից. առաջին՝ մեր Յունացս. երկրորդին՝ Հռոմայիցւոցն. երրորդին՝ Երբայիցւոցն¹². չորրորդին՝ Քաղղէացւոցն¹³. հինգերորդին՝ Կոորւոյն. վեցե-

1 Տ. հն

2 Տ. առա և ի սոսորեան զհեթանոսոն

3 Տ. քրիստոնեայք

4 Տ. որոց հայ հօյութիւնք

5 Տ. ի յիւրեանց պղծութենէն

6 Տ. զոր

7 Տ. չգտանին ի միջոյ ուրիք հետք

8 Տ. այլ և... քրիստոնեայք

9 Տ. այլ լեզուսն

10 Տ. և Օր. Տ. այնոցիկ: — Թողաք պապէս ըստ ուղագրութեան Տ.

11 Տ. առանց սպալանաց

12 Տ. Բագազացւոցն

13 Ի. պահանէր չորրորդ լեզուս:

լորդն՝ Եթովպացւոցի¹. եօթներորդն՝ Ննդկացն. ութեա-
լորդն՝ ձեր Աստակինոսացդ. իններորդն՝ Պարսիցն. տաս-
ներորդն՝ Հայոցն. մետասաներորդն՝ Արացն. երկուա-
սաներորդն՝ Ազուանիցն:

Եւ արդ ըստ քո² ասացուածիդ՝ զբեթէ միոյ կամ
վերկուց ազգաց³ փոփոխէր ոք զզբեանն արդեօք. իսկ
զիսամբն և զայլոց ևս ազգաց, զորս յօյժ հեռաւորս դի-
տէք ի մէնջ և ի միմեանց օտար լեզուօք և սովորու-
թեամբք: Բայց դուք սովոր եք առնել զայսպիսիս, մա-
նաւանդ Հաջաջն⁴ այն, որ ի կողմանս Պարսից առ ի
մէնջ ազգապիս կացեալ ժողովեաց զամենայն հին զբ-
րեանն ձեր, և այլ ըստ իւր⁵ ախորժակացն զբեաց և
բաշխեաց ընդ ամենայն ազգն ձեր. զի կարի զիւրագցն
էր ի միում ազգի և ի միում լեզուի զործել զայսպիսի⁶
ինչ որպէս զործեցաւն իսկ: Եւ թէպէս այսպէս՝ սա-
կաւք⁷ մնացին Աբու-Խուռաքաբյ⁸ զբեանն, զի ամենելն
նա ոչ կարաց բառնալ: Իսկ մէք նախ զի պատուեր սաս-
տիկ⁹ ընկալաք Ճաստուծոյ՝ չյանդնել յայսպիսի իրա-
և դարձեալ եթէ յանդգնեալ ընդդիմանայր ոք հրամանի
նորսա՝ անհնար էր զբաժանեալաւն յայսպան լեզուս դար-
ձեալ ի միասին հաւաքել և ինամով ըստ իւրաքանչւր
լեզուի փորձել ոչ զցլ և պետ¹⁰ թարզմանս յուզել և
նստուցանել զի ի բաց բարձեն ի զբենոյն զոր բան կա-
միցին, և յաւելցեն՝ զօր ախորժեցին: Եւ զայս ոչ ան-
դիտանաս, եթէ հակառակութիւնք են ի մեզ քրիստո-
նայսոս, որպէս և դուդ ասացեր, թէպէտե ոչ վասն կա-
նայսոս,

1 Զ.՝ Եթօպացւոցն

2 Զ.՝ Քոյդ.

3 Տ.՝ Երկուց ազգի

4 Տ.՝ Հայոցն

5 Ի. Տ.՝ պակասեր՝ իւր

6 Տ.՝ այսպիսիս

7 Թուրի ընթեռաշէի՝ սակացն

8 Տ.՝ ապառաւուապազյ

9 Տ.՝ պառաւուրու սաստին

10 Տ.՝ ոչ զցլ և պետ ՕՌ. Տ. և Զ.

ոյսպէտութիւնքն զցլ և պէտ:

բեռրազոյն ինչ իրաց. զիա՞րդ և զգրեանն ոչ փոփոխելին¹ ազդքն ըստ իւրաքանչեւր կամաց: Արդ չզործեցաւ ինչ այսպիսի ի մէջ քրիստոնէիցս ոչ ի հեռաւորս և ոչ ի մօտաւորս. և գու մի՛ յաճախեր զստելդ², զի մի և զստ կաւ արդարն անհամեսցես:

Ի՞այց ընդ այս յօյժ զարմանամ, զի խոտես³ զաւետարանն տեսառն և զմարդարեիցն զիրս, ասելով, թէ խանզարեցին⁴ մարդիկ զնոսա, և որպէս կամեցան զրեցին. և գու զվկայութիւն⁵ անհաստատ կարծեացդ քոյ անդուստ ջանացար⁶ ժողովիլ և զբան զոր առնուու⁷ ի վկայութիւն՝ ի բաց բաժանես, զի ուր հայր զրեալ է՝ տէր կամ Կատուած փոխեալ⁸ զնես: Եթէ արդարութեան ինչ ես ի խնդիր՝ կամ հաւանել պարտիս զրենոյն և ապա առնուուլ զնոսա ի վկայութիւն, կամ եթէ խոտես՝ որպէս ասես թէ խանզարեալք են՝ չառնուուլ վկայութիւն ի նոցանէն: Պարտիս և ունել զերբորդն. զվկայութիւնն առնուու, զորս⁹ առնուու՝ ոչ շըջել զնոսա ըստ քոյդ կամաց¹⁰. այլ որպէս ի զրին կայ՝ այնպէս ասել զնոսա:

Յօյժ գծուարին է ծառայիցն Կատուծոյ, որք հետազանգեալ են¹¹ հրամանաց նորա՝ խօսել ընդ ձեզ. զի այլ հեթանոսքն, յորժամ լսեն զանուանս մարդարեիցն և կամ զառաքելոցն՝ ի ծաղը ուժդին շարժին. իսկ գուք թէ կամ զանուանն ոչ անարդէք, այլ¹² զբանս նոցա քամահեք, մանաւանդ թէ զխօսողին նորօք: Կապա թէ ոչ

1 2.՝ փոխելին

2 2.՝ զստելդ

3 8.՝ խոտեսցես

4 2.՝ աստ և զինի՝ խանկարեցին, խանկարեալք

5 2.՝ զվկայութեանն

6 2.՝ չանացեր

7 2.՝ առնեի

8 Ի 2.՝ պակասեր՝ փոխեալ

9 8.՝ զոր

10 8.՝ ըստ քոյ կամացդ

11 2.՝ հնազանդեալք են

12 Ի 8.՝ պակասեր՝ այլ

զի՞նչ արասցուք զասացեալսն առ Վովսէս Աւս և Աստուած Երբաշամնւ և Աստուած Դսահակայ և Աստուած Յակոբայց¹. և կամթէ Արկայք, արասցուք մարդը ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան². և կամթէ Արկայք, իջցուք և խառնակեսցուք զնոսա³. և կամթէ Տէր տեղաց⁴ ի Սոզոմ և ի Գոմոր հուր ի տեսանե⁵, տէր ի տեսանէ: Աւ այս ի Վովսիսի⁶ զլոյն, զըրս ոչ ընթերցար գու և ոչ օրէնսուսոյցն⁸ քո:

Օկինչ ցհրիշտական կարծիցես գու⁹ ասել Աստուծոյ այսպիսի ինչ որք և տեսանել զնա¹⁰ ոչ կարեն: Զեմք որպէս զքեզ եթէ վայրապար և հարեանցի կարծեմք զպոց Աստուծոյ զասացուածու: Յով պատշաճ էր ասել Աստուծոյ այսպիսի բանս, եթէ ոչ առ Բանն իւր¹¹, որ է կերպարան էութեան նորա և ճառագայթ լուսոյ փառաց նորա, և յուղին սուրբ, որ սրբէ և լուսաւորէ զամենայն¹²: Աւ զըպարտիմք ի ձենչ իրից զերից աստուծոց խոսառվանող¹³: Լուր և ապա պատասխանեա, առաջիմ այլ իմն է արեգակն և այլ ճառագայթք նորա, զաշիմ այլ իմն է արեգակն և առաջ ճառագայթէակէտե յարեղականէ անտի է, և առանց ճառագայթիցն արեգակն ոչ է արեգակն. և եթէ ասէ ոք զՃառագայթսն ծնեալ յարեղականէ առանց ախտի կամ իռապայթսն գականի ոչ ստէ: Աւ թէպէտ այլ ինչ է արեղակն և գականի ոչ ստէ: Աւ թէպէտ այլ ինչ է արեղակն և այնորիկ երկու առաջի ինչ ճառագայթն՝ ոչ եթէ վասն այնորիկ երկու առաջի ինչ ճառագայթն՝ իցին: Բայց քեզ արդեօք չթուի¹⁵ այսպէս: Վրդ եթէ այսմ լուսոյ, զըր առօքս մեր տեսանել կարդ եթէ այսմ լուսոյ, զըր

¹ Ելից Գ. 6:

² Մանդ. Ա. 26:

³ Ի 2. պակասէր՝ թէ:

⁴ Մանդ. ԺԱ. 7:

⁵ Տ. տեղաց:

⁶ Մանդ. ԺԹ. 24:

⁷ 2. ի մասես:

⁸ 2. օրէնսուսոյցքն

⁹ Ի 2. պակասէր՝ գու

¹⁰ Ի 2. պակասէր՝ զնա

¹¹ 2. եթէ ոչ բանն իւր

¹² Տ. զամենայն և լուսաւորէ

¹³ Տ. զերիս Աստուծու խոսառվա-

^{ոզու:} 2. աստուծոյ

բեմք, և արարած է Աստուծոյ, երեխ այսպիսի մաքուր
յախտէ¹ ծնունդ, որ և զիշերաւ ծածկի և արգելանաւ
շնուռածոց՝ որչափ ևս առաւել² ինձ իմասցիս զաստուար
ծայնոյն ինքնեղ³ և⁴ ինքնարաւական և անզիշեր լուսցն:
Եւ զյս հարկաւորեցայ օրինակաւ իւիք ցուցանել. զի
պատուիրելոցն Աստուծոյ ի զիրս⁵ ոչ հաւանիս. այլ
դքոյ կամսդ⁶ վեհագոյն քան զնոսա համարիս. զորո
կամիսն՝ զիրս ի նոցանէ, և զորս ոնչ կամիս՝ խոտիս և
ի բաց ընկենուս: Անիծեալ ամենայն մարդ, որ երկուս
կամ երիս խոսսովանի աստուածու, զի հարկ է զայնոսիկ
այլացեղս և այլասկզբունս⁷ ասելի Այլ մեք մի⁸ զիտեմք
զԱստուած, արարիչ երկնի և երկրի, ոչ անբան, այլ ա-
մենասուրը և արուեստաւորիչ⁹ իւրով Իշանիւն, որով
արար և ունի զարարածու: Որոյ¹⁰ բան ոչ իրրե զմել
բանս յետ խօսելոյն լուծեալ և ի բաց բարձեալ, և մինչեւ
խօսեալ՝ ոչ լուեալ և ոչ ծանուցեալ: Օսա զիտեմք Աս-
տուծոյ Իշան, ձառագայթ անխաւար և¹¹ անորակ լու-
սոյ, ոչ որպէս արեկական ձառագայթիցն և եթ ծնունդ,
այլ ի վեր քան զիարողութիւն ասացուածիս մեր: Օսա
կոչեն Որզի աստուածային զիրք, ոչ ախտաւոր կարօ-
տութեան¹² և աղակելի ցանկութեանց ծնունդ, այլ զոր
օրինակ յարեկականէ ձառագայթք¹³, և որպէս ի հրոյ
լոյս, և բան ի մտաց: Եւ այս որչափ մարդկայինս կա-
րաց¹⁴ թարգմանել լեզու զԻշանին Աստուծոյ առ յԱս-
տուծոյ¹⁵ ունել զգոյութիւն:

1. Տ. ի յախտէ

2. Ի. 2. պակասէր՝ ևս առաւել

3. Ի. 8. պակասէր՝ և

4. Տ. որ ի գիրս

5. Հ. կամք

6. Հ. այլ ոկզեռնս

7. Ի. 2. պակասէր՝ մի

8. Զ. արուեստաւորին

9. Հ. զոր

10. Ի. 8. պակասէր՝ և

11. Հ. կարօտութեանը

12. Տ. ձառագայթ

13. Հ. կարաց մարդկային

14. Տ. առ ի յԱստուծոյ

Եւ ապա քանզի¹ ոչ ինչ պատուական է Աստուծոյ
յարարածս իւր քան զմարդն, վասն զի և գու խոստո-
վան լինիս, եթէ հրամայեաց Աստուծուած հրեշտակաց եր-
կիր պատանել² Եղամայ, թէպէտե յաստուածային զիրս
զայդ ոչ գտանեմը³: Երդ Եղամ մարդ եր՝ գեղեցիկ վը-
կայեցիր բամբասեալ զքոյին հպարտութիւնդ. զի որ
մարդկան ոչ երկրագեացին զիտացին ընդ որս դասես-
ցին, որպէս ասացեր: Երդ ի պատկեր Աստուծոյ եղեւ
Եղամ, յայտ է: Օք⁴ արդ, զայսպիսի⁵ ախտաւոր, ընդ-
դիմահար մարմինս կարծիցես⁶ Աստուծոյ ասել պատ-
կեր իւր. ոչ այլ զիւր և զբանին իւրոյ և զուոգւոյն
իւրոյ զննանութիւն եղ ինմա, զհոգի, զմիտո և զըան:
Օսոսսա ի ամա հաւաքեալ կառոյց, և ընդ ինքնիշխա-
նութեանն շրջարկեալ պատիւ՝ եղեւ Աստուծոյ պատկեր:
Աս խարանօք բանսարկուին անկառ ի պատւոյն, զոր ետ
սմա⁷ Երարին, անսարդեալ եղեւ մոռացմամբ ստեղծօղին
իւրոյ և վարուք անսառակ և գարշելի ցանկութեամբ,
պիոք և պէտպէս զիձութեամբը⁸ կելով, ատելութեամբ,
զրկութեամբը միմեանց, սպանութեամբ, և որ վերջին
և առաջին է ամենայն չարեաց՝ կռապաշտութեամբ, և
այնպիսի պոռնկութեամբը, զոր⁹ ասել տաղտկանամ¹⁰. զի
ոչ միայն զուշն աստուածս կարծեցին և կամ զերեկելի
շարարածս, այլ զնոսին իսկ զախտան, զպոռնկութիւն և
շարուագիտութիւն՝ աստուածս կարծեալ պաշտեցին:
Օչորս¹¹ բանսարկուն՝ իւր արար երկրպագուս, և ու-
րախ լինելը պատկերօք կոոցն չարաչար նշանս ախտից

1 Տ. 2. պակասեր՝ քանզի

2 Տ. 2. երկրպագել

3 Տ. 2. ոչ գտանեմը զայդ

4 Տ. 2. զայս

5 Տ. 2. մշնու կարծեցիս

6 Տ. 2. նման

7 Տ. 2. զիձութեամբը

8 Տ. 2. պոռնկութեամբ

9 Տ. 2. սաղտկամ

10 Տ. 2. զոր

*

կատարելոց¹ յերկրագումն, և ի նոսին յորդորելով
զնոսա:

Երդ տեսեալ Աստուծոյ զեւք պատկերն անարդեալ
երկրագութեամբ² բանսարկութիւնն և գործովք հաճոյից
նորա՝ ողորմեցաւ սմա³ որպէս բարերար և արդարի
մարդասէր: Առ զի այս էր փրկութիւնն, ճանաչել զա-
րարին իւր և ի բաց կալ ի թշնամոյն՝ ըստ ժամանա-
կի ժամանակի, որպէս ի խաւարի ի կռապաշտութեան
անդ⁴ որպէս ճրագ լուցանէր զգիտութիւնն իւր ի ձեռն
ծառայից իւրոց մարդարէից: Առ զի կռւրացեալ էին⁵
միտք մարդկան և ոչ կարենն զբավանդակ աստուածու-
թեան զիտութեանն ընդունել զլօյս՝ վասն այսորիկ զւա-
փաւոր զիտութիւնն իւր առ սակաւ սակաւ յայտնէր
մարդկան, որպէս կանխաւ ասացի, մինչեւ ցկատարութին
ժամանակայն, որչափ հայթեցաւ Աստուած իւրասել
զմարդիկ: Առ յառաջագոյն խոստացաւ մարդարէիւր
զգալուստ մարմնով Ըանին իւրոյ:

Առ քանզի զմարմին և զհոդի և զամենայն ինչ առ-
նելոց էր⁶ Աստուծոյ Ըանին զմերս բաց ի մեզայն, և զի
ոչ կարաց ի մարդկանէ յայնքան խոնարհութեան⁷ ի-
շանել աստիճան որբան նա՛ վասն այսորիկ զիտնարհա-
զոյնս զնմոննէ՝ որպէս զիտնարհագոյննէ մարդոյ զիտեմք
ասացեալ իսկ զբարձրագոյննն իբրև զարդարե Աստու-
ծոյ: Յիշեցի՞ս արդեօք զոր ասացաք զՄովսիսի ասա-
ցեալն վասն հաւասարութեան⁸ Ըանին առ նոյն ինքն
Աստուած: Առւր նմին իսկ Մովսիսի յաղագս մարդկա-
պէս երեմանն. «Մարդարէ յարուսցէ ձեզ տէր Աստուած

1. 2. կատարելոյ: Թուի՝ կատարելով.

2. 1. պակասէր՝ երկրագութեամբ

3. Տ. նմա

4. Տ. կռապաշտութեանդ որպէս

5. 2. կռւրացեալք էին

6. 2. առնելոց էր

7. Տ. այնքան ի խոնարհութեան

8. Տ. զհուածարութիւն

ձեր յիղբարց ձերոց իրմէ զիս. նմա լուիջեթ ըստ ամենայնի՝ զոր ինչ և խօսեցի առ ձեզ: Եւ եղեցի՝ ամենայն մարդ, որ ոչ լուիցէ մարդարէին այնմիկ՝ սատակեացի անձն այն ի ժողովրդենէ իւրմէ^{1:} Իսպում և ոչ եթէ մի մարդարէք յարեան Ճարայելի յետ Մովսիսի. այլ դայս պատուէր յաղագս միշյն առնէ, և որ զօրաւորաւ դշյն և գժուարահաւատալիսն էր խօսելոց:

Երդ եկեցեն քեզ այսուհետեւ հցյլք վկայութեանց մարդարէից վասն դալստեանն ՚Վրիստոսի: Իսպ լուր նախ զիստնարհաղջյն ասացեալսն զնմանէ. զի զայսոսիկ՝ ախորժելով, որպէս կարծեմ՝ լսես^{2,} թերեւս որպէս սան զիսով³ ինչ այսուիկ ի բարձրագոյնն, իթէ նորա իցեն կամք՝ հանեալ հուսպ կացուցից: ՚Վաւիթ մարդարէանաւ լով ընդ նորա՝ ասէ. «ես եմ որդն և ոչ մարդ, նախատինք մարդկան և արհամարհանք ժողովրդեան: Վմենեք որ տեսանէին զիս՝ այլանէին զիս, խօսէին շըրթամբք և շարժէին զզլուխս իւրեանց: Յուսացաւ ի տէրը, և ապրեցուցէ զնա, փրկեսցէ և կիցուցէ⁵ զնա. զի կամի զնա»^{6:} Եւ այս երթէք ոչ դործեցաւ ի ՚Վաւիթ, Իսպ ի տէրն ի ժամ խաչելութեանն:

Երդ լուր նմին ՚Վաւիթի վասն նորա զբարձրագոյնն ասացեալ: «Տէր ասաց ցիս. որդի իմ ես դու, ևս այսօր ծնայ զքելով^{7:} Եւ յաղագս զամենայն հեթանոսուն ընլոյ որ ի նա հաւատոց⁸ յարեաց ի նոյն, սինդըն մինէն, և ասաց քեզ զհեթանոսս⁹ ի ժառանգութիւն, և յունողութիւն. քեզ զծագս երկրին^{10:} Եւ դարձեալ. «Ասաց տէր

¹ Բ. Օրենք. ձև. 15:

² Տ. Հարծեմա ևս (Ըսէիցես)

³ Տ. ասնդզովք

⁴ Տ. ամենայն

⁵ Տ. փրկեսցէ զնա, կիցուցէ զնա

⁶ Ասպ. Բն. 7—9:

⁷ Ասպ. Բ. 7:

⁸ Տ. որ ի նոյն հաւատութեանք: — Օր-

⁹ Տ. հաւատուց

¹⁰ Տ. զհեթանոսք:

¹¹ Ասպ. Բ. 8:

